


Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

# ԶԱՂԱՑՊԱՆ



391.99

Դ-26

# ԱՆՏՈՒՆ

ԴԵՏՅՐԱՏ - 1930 - ՅԵՐԵՎԱՆ

22 JUN 2007

19 NOV 2011

89

26

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

# ԶԱՂԱՑՊԱՆ ԱՆՏՈՆԸ

Վ Ի Պ Ա Կ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1930

372013  
1705 NOV 8 P

27437  
17722



11049-57 (1809-57)

Հրատ. № 1338  
Գրատեպ. № 2747 (բ) Պատ. № 699 Տիրաժ 4000  
Պետհրատի լեզվորդ տպարան Ֆերհանում.

### ՋԱՂԱՑՊԱՆ ԱՆՏՈՆԸ

#### I

Գյուղից մոտ յերկու վերստ հեռավորության վրա գտնվող գետափին եր են ջաղացը, ուր Անտոնը ջաղացպանութուն եր անում: Թեև ջաղացը վաղուց արդեն իրենը չեր, բայց ելի նրա անունով եր կոչվում—«Անտոնի ջաղացը»:

Ջաղացը փոքր, ցածր ու խավար եր, ենպես վոր ներս մտնելիս թվում եր, թե աչքերդ մի սև շորով կապեցին: Աչքերդ լավ տրորելուց հետո միայն, կարող եյիր նկատել Անտոնին, վորը յեթե ծալապատիկ նստած եր, նմանում եր ալրով լիքը պարկի, իսկ յեթե կանգնած եր, կարծես մարդ չլիներ շարժվողը, այլ փոշխարի մորթուց կարած սպիտակ կարճ քուրք:

Տարին բոլոր, ամառ թե ձմեռ, գիշեր-ցերեկ միշտ Անտոնի քուրքը հագին եր: Ջաղացպան գտնալուց հետո վոչ վոք նրան քուրքը հանած չի տեսել, փորովհետև քուրքը նրա համար վոչ միայն հագուստ եր, այլև անկողին նրա սպիտակ միրուքն ու ալրոտ, փոշխարի մորթուց կարած մեծ փափախն ենպես եյին միացել քուրքին, վոր կարծես թե նրանք ել եյին քուրքիցը կարած, կպցրած: Միակ սեին տվողը նրա գեմքին՝ աչքերն եյին, վորոնց վրա մի մշանջենական թախիժ իր սև պատանն եր քաշել:

Անտուն եր Անտոնը: Անտուն ու մենակ, վոչ վոք չուներ գյուղում, բացի հեռավոր ազգականներից, վորոնք չեյին կամենում Անտոնին իրենցը համարել, վորովհետև...

նրանից վոչ մի շահ, վոչ մի ոգու ա չեյին սպասում: Սրանից դատ՝ կար մի հանգամանք էլ, չեյին ուզում Անտոնի տուն ու տեղը խլող համվիա Սուրմոնի աչքին վատ երևալ:

Դեռ ուռու-յապոնական պատերազմի Ժամանակ Անտոնը կորցրեց իր յերկու աղին, վորոնցից մեկը մի տարվա ամուսնացած էր, իսկ մյուսը նշանված: Նրանցից փոքրերն էլ—յերեք հոգի, սև ծաղիկ ընկան, մեռան, կիրն էլ՝ ես ցավերից հալվելով ու մաշվելով՝ մոմի պես բարակեց ու Անտոնին մենակ թողեց ես աշխարհի յերեսին: Մեծ հարսն էլ, վոր մի սիրուն ու փափլիկ աղա յերբերել, վերցրեց ու հորանց տուն գնաց, ուրիշ գյուղ. ենտեղ էլ ամուսնացավ իրենց գյուղացի բալախանում աշխատող մի արարչիկ բանվորի հետ, ու մարդու հետ գնաց բալախանի:

Անտոնը պարտքի մեջ խրվել էր: Համփա Սուրմոնը, վոր նրան «բարեկամբար» փող էր պարտք տվել, վաղուց էր աչքը սնկել Անտոնի տան տեղի վրա, վոր ինչպես ասում են՝ գյուղի աչքն էր, և ոգավելով Անտոնի ձախորդութուններից, զավթեց նրա տունը, վորը հիմնահատակ արավ ու տեղը մի յերկհարկանի կրապատ տուն շինեց:

Անտոնը սրտամորմոք մի բան ասեց միայն համփա Սուրմոնին.

— Եղ արարքդ քեզ էլ չի մնալ Սուրմոն, վոր յես աչքս բաց, վորտիս վրա սող դու իմ տունը քանդեցիր:

Բայց ինչ կարող էր անել, ախ քաշեց Անտոնը, թուրքը կուլ տվեց ու վշտի շղթան փորում կուտակելով՝ վոնց վոր ասում են—հոգին չանգոելով քաշվեց իր պապական ջրաղացը, վորտեղ մինչև հիմի յել ջրաղացպանություն է անում: Տարբերությունն այն է միայն, վոր համփա Սուրմոնը հազար ու մի սուտ-զորթով «հին պարտքի տեղ» Անտոնի ջրաղացն էլ խլեց և... «վողորմածբար», ինչպես

ինքն էր ասում, թողեց վոր Անտոնն իր իսկ սեփական ջրաղացում մնա վորպես Սուրմոնի ջրաղացպան:

— Անտուն մարդ ես, ապրի իմ շվաքի տակ, ասաց «վողորմած» համփա Սուրմոնը:

Անտոնն իր վշտի շղթային ես մի ծանր ողակն էլ միացրեց ու սուս կացավ:

Են էր ու են, Անտոնն էլ վոչ գյուղն էր մտնում, վոչ էլ մեկի հետ եղ անցքերի մասին զրից անում: Թեև մի անգամ նա տվրտերին խիստ անպատիվ էր արել ջրաղացում, հայհոյելով նրա ավետարանն էլ աստվածն էլ: Ներկա յեղողները պատմում են, թե տերտերը նրան ասել է.

— Յեղբայր Անտոն, ամբողջ 5-6 տարի յե, վոչ գյուղն ես եկել, վոչ յեկեղեցի յես մտել, վոչ էլ մեռելներիդ գերեզմանն ես որհնել տվել, հոգիս ինչո՞ւ յես սատանաների բաժին դարձնում...

Անտոնը էլ անպատիվ բան չէր թողել, վոր տերտերի գլխին չթափի, բայց ամենից շատ ու ամենամեծ վիրավորանքն այն էր, վոր Անտոնը մի քանի մարդկանց մեջ ուղղակի տերտերի ձակատին ասել էր.

— Քու աստոծն ու Քրիստոսն էլ են համփա Սուրմոնի փողի գերին, դու յել նրա գյաղեն ես: Թե եզքու ըրիստոս ու աստոծ ասածդ մեզ պեաների պաշտպանն են, իսի համփա Սուրմոնի պալատն իրան գլխին փուլ չեն ածում, վոնց վոր նա իմ տունը քանդեց: Թե դու լավ մարդ ես, իսի են վախտը ձեն չեյիր հանում, վոր Սուրմոնը տունս հիմնահատակ էր անում... դո՞ւ չեյիր, վոր խաչ ու խաչվառը ձեռիդ որհնում էյիր Սուրմոնի տան հիմքը, վորն ինձանից զավթած տան տեղը դուռնա գհոլով պատում էր... Գնա, գնա նրա մեռելներն որհնի, քեզ փող կբախչի. յե՞ս ինչ ունեմ... Թե յեկել ես ունեցածչունեցած ես քուրքս էլ քեզ տամ, վոր մրտեմ, շան սատակ ըլեմ, բալքի հոգիս արքայություն գնա, սատանեքի

բաժին չդառնա... Հոգի ունե՛մ, վոր սատանի բաժին դառնա կամ հրեշտակի՞... Հոգիս հրեն համփա Սուրմոնսի ձեռին, գնա նրանից ուզի...  
 «Նեղքը յերևի թոցրել է», ասեցին՝ գյուղի մեծամեծները և չթողին, վոր տերտերը գանդատ տա Անտոնի վրա:

## II

Սովի տարիներ էյին իրար հաջորդում: Մեծ պատերազմն ընկել էր, գյուղերի աշխատող ձեռքը պակասել էր առաջվա պես սայլերով աղուն բերող չկար. մարդիկ շարակով էյին աղուն բերում, կամ ամենաշատը—մի ձիաբեռ կամ իշաբեռ: Պակասությունն ենպես էր խեղդել մարդկանց, վոր հարեանը հարեանին հացփոխ էլ չէր տալիս: Համփա Սուրմոնը վաղուց դուրս արած կլիններ Անտոնին, վորովհետև Չաղացն ոգուտ չէր տալիս, բայց քանի վոր նա, Սուրմոնը, նոր գործ էր սկսել, «մսի փողբաթ» էր վերցրել և լավ էլ աշխատում էր, դրա համար էլ Անտոնին ձեռք չտվեց: «Շտոր չե եզուց ելի պետք ար գալու թեղ հիմի մի կերպ գլուխը պահի»—ասում էր Սուրմոնը:

Չմեռվա ցուրտ որերից մեկն էր, յերբ գյուղից յերկու հոգի պարկերը շարակած յեկան Անտոնի Չաղացը և հայտնեցին, թե «թագավորին թախտից գցել են»: Ուրախ էյին նրանք, վորովհետև իմացել էյին, թե պատերազմը կարող է դադարել ու սղերքը կովի տեղից կվերադառնան:

Անտոնի համար միևնույն էր, թե ինչ է պատահելուս վոչ վոքի չէր սպասում:

— Անտոն բիձա, եղ խի՞ դու յել չես ուրախանում. անիծած թագավորին թախտիցը վեր են գցել, աշխարհս ազատութիւն ա ընկել, կռիվը վերջանալու յա՛, խաղաղ որ ու կյանք ենք քաշելու, հարցրին աղուն բերող գյուղացիք:

— Ուրախանում... լավ էք ասում, համա... վերջն ա գովելի, պատասխանեց Անտոնը: Թագավորն ինձ ինչ ա արել, վոր ուրախանամ յա տխրեմ: Իմ հայ թագավորը հրեն գեղումը նստած: Թագավորը հո տունս քանդել չի, Չաղացս ձեռիցս խլել, ինձ ես որը գցել: Թագավորին թախտիցը գցելն են որը կիմանամ ու կուրախանամ, վոր գեղը լափող Սուրմոնի պես շներին իրարից կապեն ու շան սատակ անեն: Աշխարհիս խաղաղվելն են որը հաստատ կլի, վոր ավագակ տերտերի միրուքը կխուզեն, քյասիբներից զավթած հողերն ու բաղերը նրա ձեռիցը կխլեն, իրանց տերերին կտան, թե չե... դուք ինչ գիտաք, թե թագավորի տեղ՝ ես զայդի շներն ու գելերը չեն մեր ջանին ընկնելու, ու թե թագավորը մեր միսն ա կերել, դրանք վոսկոռնիս էլ չեն կոծելու...  
 — Ե՛, Անտոն բիձա, աշխարհն ըսենց եկել, ըսենց էլ գնալու յա. աստծու դրած որենք ա. աշխարհիս երեսին մեծ էլ պետք ա ըլի, պուճուր էլ. աղա յել պետք ա ըլի, նոքյար էլ. դու հենց ուզում ես հավասար ըլնք գրիս էլ... Ես ձեռս տենում ես, վրեն հինգ մատը կա, համա միսն էլ ա մեկելին նման չի, վոչ էլ հավասար. աստո՞ծ հու շնչ չի, վոր ըսենց ա ստեղծել, դու ուզում ես փոխվի՞... առարկեց վիճող գյուղացին:

— Չե, բան չեմ ասում. պատասխանեց Անտոնը, զրից էր, ասեցի, ելի. խոսքս էլ տեղ կհասնի, գլխիս մի նոր ցավ ու պատուհաս էլ նոր կգա, համա ձեռիդ հմար մի բան կասեմ մենակ, վոր մատները ջոկ-ջոկ խեղճ ու կրակ գաղեր են, ուզում ա մեծ, ուզում ա պուճուր, բայց մի իրար հավաքի ու հուպ տու, հրես է՛, ըսենց. տենում ես, ես ինչ բան ա, սրան դմբուզ \*) կասեն: Աշխարհս վոր կա—դմբուզակով ա. ում դմբուզը պինդ ա ձեփում, նրա տարածն ա: Դու հենց ես գիտում, իմ ցավը մենակ տունս

\*) Բուռնցք:

քանդող Սորմոննն օ... հրեն Սորմոննի կողքին ել—Արտեմն ա, Գրիշա-բեգը, քյոխվա Ջաքարը, ես զոլի գեղումն ել Սիմոն-աղեն, աշխարհ թալանող առուսուրական Ջավադ խաղեյինը, մեր գործակալ տեր-Ռհանեսը... վոթ մինն ա-սեմ... Ո՞վ կարա դրանց իշին չոչ ասի, հավին—քիշ: Մը-րանք տենում ես, վոնց են իրար հետ կապված, փեսա ու հաներ են, խաշխապեր ու կնքաներ. սրանց կողքին ել պրիստավը, կուբեռնատը, յես ինչ գիտամ—հազար ու մի նման շուն ու գել, գլխներին ել թագավորը բազմած: Ես ել թե թագավորին թախտից զցել են, սրանք հու-կան, սրանց դմբուզը հու ձեփում ա... Ես եմ ասում, թե չե, ետր-եղուց գյուրեգյուր եմ ըլելու, գերեզմանիս տեղն ել չեն խմանալու վորտեղ ա: Ո՞ւմ ինչ վեջն ա, թե աշ-խարհիս երեսին մի անտուն Անտոն ապրել ա, թե մեռել... Համա դու դմբուզի վր լավ միտդ պահի, թե մեռնենք վոչ, հրես մեր աչքուզը կտենանք:

— Արա, Անտոն բիձա, մեջ մտավ յերկրորդ գյու-ղացին. ետքան խելոք մարդ, ես ջաղացումն ինչ ես շի-նում, խի՞ չես գալի գեղը...

— Սորմոննի դմբուզը հալա շատ ա գորավոր, քեզ պեաներն ել կովի վաստը թիկունքումս կազնիլ չեն. գամ վոր քուրքս քամուն տան... Խեղքն ինձ ո՞վ ա տվել, թե խելոքի, տունս խի խլեցին ձեռիցս. ջաղացպանն ինչ ա, թե իրան ունեցած խելքն ինչ ըլի... հեգնեց Անտոնը և տեղիցը վեր կացավ, վոր ջաղացի ջուրը կտրի:

Գյուղացիք պարկերն ուսած ճամբա ընկան դեպի գյուղ, աշխուշտ վեճ բանալով Անտոնի ասածների շուրջը, իսկ Անտոնն ելի լեզուն քաշեց իր բունը և լուռ ու մունջ նստեց ջաղացում, մտածելով թագավորին թախտից զցե-լու և պատերազմի վերջանալու մասին:

Տարիներ շարունակ նրա թմբած միտքն այժմ ար-տասովոր աշխատանք եր սկսել: Իր մութ ու ցածրիկ ջա-ղացում նստած, Անտոնը զարմանալի ծրագրեր եր կազ-

մում գյուղի դսրուզներին կործանելու մասին, հաճախ «ա՛խ» քաշելով, վոր ինքը մենակ ե, և վոր դժվար թե գյուղում գտնվեն մարդիկ, վորոնք հետեն իր խորհուրդ-ներին և զիմեն դաբաղովի:

## III

Եստ ժամանակ չեք անցել են որից, յերբ պարկը շալակած միկնույն գյուղացիներից մեկը յեկավ Անտոնի ջաղացը և դեռ «բարի լուս»-ը բերնումը—հայտնեց.

— Անտոն բիձա, հոգիդ սուրբ եր, դմբուզի վր գեղն ա ընկել: Ասում են մեծ Ռուսեթը բաժան-բաժան ա ըլել, յերկրի ամեն մի բուրջում թագա թագավորութին ա ստեղծվել: Բեգերը, գեներալնին ու սրանց պես մարդիկ ուզում են իրանք իշխեն. կոխիլն ել շարունակվում ա: Աշխարհս հենց ա խառնուկութոր դառել, վոր չես իմա-նում ով ա տերը: Մեր գեղն ինչ մեր գեղն ա, իր քյա-սիբ հալովը, աղալարների ճանկն ա ընկել: Ժողով են ա-րել թե գեղի կառավարիչ շոկեն, քյասիբներին խոկել են ու իրանց ձեռը հավաքել եդ քու Սորմոնը, Գրիշա-բեգն ու տերտերի տղեն:

— Դե, ել ինչ դմբուզի վր, պատասխանեց Անտոնը. ասա ել յես են հին ջուրն ա, են հին ջաղացը. հակա-ռակ խոսող մարդ կա՞...

— Մի-երկու հոգի ձեն հանեցին, համա հրեն բունել դալա յեն զրկել, ել ես բանը տեսողը կարա ծպտուն հանի... երնակ քեզ, վոր ես ջաղացումը նստած վոչ խե-րի յես խառնվում, վոչ շառի:

— Բան չկա, թող դալա քաշեն. ետքան տարի յա յես դալա յեմ քաշում ես ջաղացումը, թող մի քիչ ել նրանք եզ բանի համը տեսան, բալքի խելքները տեղը գա ու զոռա մարդկանց գեհին զիպչեն վոչ: Դու են ա-սա, ել ինչ նոր բան գիտես:

— Ըսկի: Նոր բանն են ա, վոր հայի, թուրքի ու վրացու սահմանը փակվել ա. ել առաջվա պես կարալ չենք ազատ ու համարձակ յա թիֆլիս գնանք, յա Բագու հիմի եդ տեղերում նոր թագավորութիւն ա ստեղծվել. սահմանին փակել են, ճամբերը կտրել. մնացել ենք չափարի\*) մեջ. բանից ել հենց ա երևում, վոր կռիվ ա ընկնելու ես իրեք թագավորութենի մեջ, ըտեսց խոսք ու գրից կա:

— Դե բա ի՞նչ բանի կենան, վոր կռիվ չանեն. թագավորութիւն ասած բանըդ ել հենց նրա համար ա, վոր կռիվ անի, սրա-նրա հողը խլի, բա վճնց ես ուզում. աղեն հու իրան հողը քեզ չի պտի տալ, գնան, ջանդ թող դուս գա, կռիվ արա, հարևանիդ հողը խլի. թե սաղ մնաս. խլած հողդ աղեն կգավթի, ել յետ դու նրա նոքյարը կըլես, թե չե հու մեռար, դե ո՞վ չի մեռնելու վոր... տերտերը վրեդ աղոթք կկարդա, հողիդ արքայության մեջ կցնծա:

— Ե... Անտոն բիձա, ետոր թարս ես վեր կացել, ել են առաջվա պես չես խոսում. դու ել ես խնարաք ըլել:

— Իրուստ ա, թարս եմ վերկացել, չյունքի Սուլումոնի դամշու դաղած տեղերը հալա ցավում են: Լիզուս ինձ քաշած վեր ընկած ի ես ջաղացումը, յեկաք խոսացրիք, յես ել մի-երկու հակառակ գրից խոսացի. ձեզանից վճրն եր նրան հասցրել, եզսի որը մտավ ջաղացը, դուռը վրես փակեց ու...

— Ի՞նչ... զարմացած ընդհատեց գյուղացին, թակեց...

— Թակեց... ասա միսդ քրքրեց...

— Վայ անորեն, անաստված... Անտոն բիձա, թող քոռեքոռ ման գամ, թե յես բան ասած ըլեմ. բա եդ դայրի բան կըլի...

— Եդ հալա քիչ ա ինձպես պառավ հայվանին, վոր

\*) Ցանկապատ:

գիզում չեմ թե ինչ գրից ում հետ անեմ: Իմ որումն ինձ սիլլա տվող չի ըլել, նա ինձ վեր կոխեց ջարդեց...

— Խի՞ չես գանգատ անում, Անտոն բիձա:

— Ո՞ւմ գանգատ անեմ, իրանից-իրան...

\*\*\*

Ձմեռնամուտի ցուրտ ու խավար գիշեր եր: Թիֆլիս-բորանը քշել եր ամենքին իրանց բունը, գուրսը շունչ կենդանի չեր շարժվում: Մառախուղը փաթաթվել եր ծառերին, թփերին ու պինդ կպել գետնին: Գետը—վորբացած ու տկոը յերեխայի նման, զրկված ամառվա պճնանքից ու աշունքվա բարիքներից, ախուր-տրտում վշվշում եր, թե ինչպես շուտ անցան ծաղիկներն ու մրգեղենը, լողացող ճարածճի մանուկներն ու բազմաթիվ ծլվլան թռչունները...

Այս զարգանդ գիշերն Անտոնը մեն-մենակ եր ջաղացում: Նա հաղիվ մի բանի փայտ եր հավաքել ցերեկով, կրակ արել կիսաքանդ բուխարում և շուտ-շուտ փրչում եր, վոր մխացող թաց փայտը վառվի: Ճիշտ է, նա մենակության սովոր եր, բայց այժմ նրա սիրտն ավելի յեր ճմլվում, հողին խոսվում, վորովհետև տարվա այդ միջոցին—աշնան վերջն ու ձմեռնամուտին նա յերբեք մենակ չի յեղել: Տարվա այդ ժամանակը ջաղացի ամենայեռուղեով ժամանակն է: Յեթե մինչև անգամ մոտակա հայ գյուղերից աղուն բերող չի գտնվել, հեռավոր թուրք գյուղերի աղունի սայլերին հերթ ու տեղ չի ճարվել, ենքան շատ է յեղել նրանց թիվը: Իսկ հիմի... Հիմի կռիվներ կան հայ ու թուրքերի մեջ, ճանապարհները փակվել են, իրար այդի յեն կրակում, տուն քանդում. ո՞վ է գլխից ձեռք վերցրել, վոր անցնի մյուսի սահմանը...

Այսպես մտքերի մեջ խորասուզված՝ Անտոնի ծանրացած գլուխն իջել եր մինչև գոգը, տարորինակ յերագ-

ներ հյուսելով՝ յերբ հանկարծ մի թրխկոց լսեց: Վեր թռավ Անտոնը, աչքերը տրորեց ու ականջները սրեց: «Ո՞վ կարող էր ես խավար ու դիամաթ գիշերին շաղպա գալ» — միտք արած նա:

Դուան թրխկոցի ձայնը կրկնվեց մի տեսակ յերկյուղած ու անվստահ:

«Չլինի՞ թե գողեր են» — անցավ Անտոնի մտքով: Ու մեկ-մեկ սկսեց թվել իր գիտեցած պատմությունները շաղպա թալանող գողերի մասին, յերբ նրա մտածմունքներն ընդհատեց թրխկոցը, վորին կցվեց կարծես ծանոթ արգամարդու մի ձայն:

Անտոնի սիրտը բաբախեց ուժգնորեն: Նա ինքնապաշտպանության նպատակով ձեռքը յերկարացրեց դեպի շաղպի նիզը և շունչն իրեն քաշած սպասեց, վոր ձայնը կրկնվի. թերևս կարողանա հիշել ձայնի տիրոջը:

— Անտոն պապ... Ա՛յ, Անտոն պապ, դուռը բաց արա:

Անտոնն ամբողջ մարմնով ցնցվեց ու դողաց: Չայնը շատ նման էր իր վաղուց մեռած, պատերազմում սպանված մեծ տղի ձայնին:

«Մեղա, մեղա... կապտած շրթունքները հազիվ իրար բերելով շշնջաց Անտոնը, երազումն եմ թե՛ չարքերը պատեցին շաղպա»:

— Անտոն պապ... թրխկ, թրխկ... Անտոն պապ, բաց արա դուռը, ցուրտ ա...

— Ո՞վ էս, ի՞նչ մարդ էս, էս կես գիշերին ի՞նչ բան ունես դուրսը, ի՞նչ գործ ունես իմ շաղպի դռանը. տեղից յեխելով ասաց Անտոնն ու նիզը ձեռին ամուր բռնած մոտեցավ դռանը:

— Բաց արա, բաց, Անտոն պապ, բաց արա, հետո ամեն բան կպատմեմ. ստիպողաբար պնդեց ձայնը:

«Ով կուզի թող լինի, ինչս՞ ա տանելու» — մտածեց Անտոնն ու դուռը գոռալեն բաց արավ:

Յերկու հոգի շտապ ներս մտան: Անտոնը մթության

մեջ հազիվ նշմարեց նրանց բոյ ու բուսաթը և նկատեց վոր զինված են: Անծանոթները մոտեցան կրակին և սկսեցին ձեռները տաքացնել: Անտոնն ուշիուշով գիտում էր նրանց, հազիվ մխացող կրակի լույսով ու չեր իմանում ինչպես սկսի խոսակցությունը: Յերևում էր, վոր յեկվորները հեռու տեղից են գալի. շատ ցեխտոված ու հոգնած են, բայց թե ինչու ձիով չեն, չեր հասկանում:

— Չի ունե՞ք, թե վոտով եք յեկել... ի՞նչ կա էս սև հարամի գիշերին, վոր տանից դուրս եք յեկել չորերն ընկել: Մեր կողմի մարդ չեք երևում, վորտեղացի յեք... խոսք բաց արավ Անտոնը:

— Վոտով ենք յեկել, ա՛ պապ. ընկերս էս տեղերին քիչ ծանոթ է, սա բերեց հասցրեց էս շաղպին: Մենք Բագու ենք ապրում: Իմ պապն էս մոտիկ գյուղացի յե, բայց յես նրան չեմ տեսել, չեմ ձանաչում, յես մի քանի ամսական յերեխա յեմ յեղել, վոր հորըս ուսույապոնական կովումն սպանվելուց հետո, մայրս թողել է պապիս տունը, ու ինձ հետն առել, Բագու տարել...

Ու դեռ խոսքը չեր վերջացրել յերիտասարդը, յերբ հանկարծ Անտոնը բարձր հեկեկանքով «վայ, բալա ջան» գոչեց ու ընկավ նրա գիրկը:

Վարար արցունքներն առատորեն հոսում էին Անտոնն աչքերից, վորը յերեխայի նման հեկեկում էր, արցունքներով վողողելով իր թոռան գոգը:

— Արի մի աչքերդ պաչեմ, բալա ջան, ա՛յ, իմ կորած բալա, ա՛յ իմ միխուճար վորդի... Անտոնին թաղի ու ենպես գնա, ազիդ ջան. ձենդ ել ա հորդ նման, դու յել, ա՛յ յես քու շիմշադ բոյիդ մեռնեմ, ա՛յ նամուսով բալա, վոր պապիդ սև ու խավար որը պայծառացրի... Անու՛միդ մեռնեմ բալա, գլխումս խելք չի մնացել ա՛յ վորդի, մեռել էր պապդ ու քեզ չեր տեսել, ա՛յ, իմ կորած վորդի... Թող մի հերդ աչքը բաց անի, անհետ կորած գեղեզմանիցը դուրս գա ու տեսա, թե տղեն ինչ ապանի

ձուռ ա դառել, ա՛յ, յես նրա անգլուժման գերեզմանին մատաղ ըլե՛ս...

— Պնայի ջան, հերիք ա, հանգստացի... արցունքները կոկորդումը հուպ տալով՝ աշխատում եր հանգրտացնել իր պապին յերիտասարդ Արմենը, բայց անողուտ:

Անտոնն աճապես աղիողորմ եր արտասովում, աճապես եր գալարվում, փաթաթվում իր թոռանը, վոր կարծես կամենում եր ձուլվել նրան, ամփոփվել նրա մեջ:

— Վա՛յ, վա՛յ, բա՛լա ջան, պապը աննամուս ա, մի տուն ել չունի, թե քեզ դոնաղ պահի, զիփ խլել են, տարել, քանդել...

Ու մին ել վեր թռավ Անտոնը մոլեգնած, կարծես ոճ խայթեց, կամ շիկացած յերկաթով դաղեցին.

— Դե, վեր կաց, վեր կաց գնանք. Անտոնն ել մենակ չի, մեջքին սյուն տվող կա. վեր կաց գնանք, յես Սուրմոնի գլուխը կճղեմ, դուղը\*) կերեմ ու մոխիրը քամուն կտամ, վոր հոտն ել չմնա ես աշխարհի յերեսին... Քու հոր կռիվ դարկողն ել նա յեր: Վոնց վոր իմ աղի գերեզմանի տեղը հայանի չի, թո՛ղ վոր են շունն ել անգերեզման մնա...

Կանգնել եր Անտոնը բոցավառված աչքերով, նիզը ձեռին բռնած ու գողում եր ամբողջ մարմնով՝ կարծես հովազ լինել կամ վազը, պատրաստ հարձակման դիմելու:

— Վեր կաց. դատաստանի ժամն ա ես գիշեր...

— Նստի՛ր պապի, նստի՛ր. հանգստացի՛ր. դատաստանն էլի կանենք. բայց մի քիչ համբերի: Վո՛չ վոք չպետք է իմանա, թե այս գիշեր մենք յեկել ենք քեզ մոտ: Վո՛չ վոք չպետք է իմանա, թե յես, քու թոռը, յերևացել եմ ես կողմերում. մեր գործը շատ մեծ է, բայց շատ ել գաղտնի: Ես ջաղացը մեր գաղտնի հավաքատեղին ու գինապահեստը կլինի: Շուտով, շատ շուտով դու կտեսնես,

\*) Ուզե՛ղ:

թե ինչպես ենք վերացնում Սուրմոններին ու նրա պետերին. միայն թե վո՛չ վոք չպետք է իմանա, թե ես ջաղացում վորևե բան է կատարվում: Մենք շուտով գնալու ենք, մինչև լուսը բացվելը, վոր մեզ տեսնող չլինի: Ամեն գիշեր մարդ կգա մոտդ ու հենց վոր դուռը թակի ու ասի «Աւմեն», դուռը բաց կանես: Արմեն իմ անունն է. իմ անունով ել յեկողն ինչ բերի, կպահես, ինչ բան ել ասի—կկատարես:

Անտոնը քիչ հանգստացած, նստեց բուխարու առաջ, աղոտ լույսով լավ անտղեց Արմենին ու նրա ընկերոջը, վորը լուռ եր, ապա կես տարակուսանքով հարցրեց.

— Շատվոր է՞ք, շատվոր... թե՞ «գարգալ խոսամ, քամին տանի»... Թիկունքներումդ ո՞վ կա... Ռուսեթի հետ կապ ունե՞ք...

Արմենի տված բացատրությունները գոհացրին Անտոնի անսպառ հետաքրքրությունը, վորից հետո նա յերկար գրկախառնվելուց, ճանապարհ դրեց «հյուրերին», մի անգամ ևս խնդրելով իր թոռանը.

— Արմեն ջան, անու՛միդ մատաղ, մին-մին դու յել արի, տեսամ, կարոտս տանեմ... թե կարաս, մի որ ել ցերեկով արի, մի լիսով բոյդ տեսամ...

— Լավ, ասաց Արմենը:

Գիշերվա խավարի մեջ, յերկու հողի սովերների պես իրար կպած ձուլվեցին մթությանը, իսկ Անտոնը յերկար ժամանակ կանգնած մնաց ջրաղացի դռան մոտ, ուրախության արցունքն աչքերին և ապագա մեծ գործի հեռանկարների աղոտ ծրագրերն իր տանջված ուղեղում:

#### IV

Լույսը բացվելուն պես Անտոնը ջահել նորահարսի պես վեր կացավ, ավելը ձեռն առավ ու սկսեց ջրաղացի քունջ ու պուճախն ավելի, մաքրել: Տարիների կուտակված փոշին ու աղը սրբում եր Անտոնը, ոճաքրից կան-



թորը կտա բանս խարաբ կանի, սրա հետ պետք ա ոխան եղապոսի \*) խելք ու լեզու ունենա մարդ»:

Անտոնը շուտով բաց արավ բուխարու թեժ կրակը, կրկենու համար լավ հունցած խմորը մեջը գցեց, ծածկեց չարչի Ներսեսի ազուկը տաշան ածեց ու սկսեց աղալ: Ապա նրա ալյուրից մի քիչ վերցնելով՝ յերկրորդ կրկենին հունցեց ու իրենը կրակից հանելով՝ կրկին թեժ արավ ոջախը, վոր թխի:

Իր աշխատանքով կլանված, չնկատեց, թե ինչպես անցավ ժամանակը, յերբ չարչի Ներսեսը կրկին յերևաց:

— Անտոն բիձա, աղուհն աղացած, պատրաստ ա կրկենիս թխել ես...

— Հն, քե մատաղ, հենց կրկենի յեմ թխել, վոր շահի սուկրի վրա յել կերած չեն. ալիբդ ել հրես, ենքան մանր եմ արել, վոր ձեռներիցդ կկաշի: Մենակ քեզ մի բան եմ խնդրում վոր ինձ մի գրվանքա շաքար ու մի քիչ ել չայ տաս. սաղ ըլեմ մի որ պարտքդ կտամ, արած լավութիւնդ ել իր կարգին:

Չարչի Ներսեսին ինչպես յերևաց դուր չեկավ Անտոնի առաջարկը, բայց վորպեսզի ծածկի իր տարակուսանքը, նա յերեսը շուռ տալով բաց արավ իր խուրջինը, քար ու կշեռքը հանեց, մի ֆունս շաքար կշռեց մի քիչ ել թեյի խոտ ածեց մի թղթի կտորի մեջ ու ավեց Անտոնին, կցելով այն անհրաժեշտ նախաբանը, վոր միշտ պատրաստ ունեի ամեն մի մուշտարու համար:

— Առ, Անտոն բիձա, անուշ-անուշ խմի, հալալ ա քեզ պես հալալ մարդուն, պարտքի մասին ավելորդ ա խոտալը. սաղ ըլես, մի որ կտաս, ամեն որ հու մարդու տեղը նեզ չի ըլիլ... Առակն ասում ա—«լավութիւնն արա ու շուրը գցի, ձուկը թե չիմանա, խալխն ելա հո կիմանա»...

\*) Յեղոպոս:

— Ենն ու լիքը կենա ոջախդ. հաստատ կենաս տանդ վրա, Ներսես ջան. հալբաթ վոր... լավութիւնը մի անուշ հոտով ծաղիկ ա, վոր ամառ-ձմեռ միշտ գալար ա մնում ու հոտ տալի թե անողին, թե ընդունողին. թե սաղ մնամ, ես լավութենի տակիցը դուրս կգամ, պարտքս կրտամ, թե չե հու մեռա, հենց իմացիք թե վրես գանձանակ ես գցել...

Ե՛տ ել ինչ խոսք ա վոր ասում ես Անտոն բիձա,— ընդհատեց չարչին. հալա աչքիս շատ ջահել ես երևում, ետոր ունզդ շատ պայծառ ա, հալա շատ կապրես. յես ասում եմ գաս գեղը մի ջահել-պառավ կնիկ գտնենք, պսակենք, դու մեռնելու մասին ես խոսում... կատակեց չարչին, խուրջինն Անտոնի ոգնությամբ գցեց ձիու վրա ու հեծնելով, ճանապարհ ընկավ մի բայաթի մումալով:

«Հալբաթ ետոր հունձն առատ ա ըլել, լավ ա խուզել գեղացոնց, բողի հետ մի քիչ ել մորթուց կարելով» մտմտաց ինքն իրեն Անտոնը և շուր շաղ տալով հասակին, նորից մաքրեց ջրաղացը ու մի խախտ չոր խոտ գրեց ոջախի զրաղին, վոր գիշերը յեկողի տակը փափուկ լինի:

Մութն ընկնելու վրա յեր: Տավարածի ասողը \*) յերկնքի բաց կապույտի վրա ժպտում եր, թիթեռնիկի նման թափահարելով իր փոքրիկ թևերը: Անտոնն ամբողջ որը թեև վոչինչ չեր կերել բայց և այնպես քաղց չեր զգում: Նա իր թխած կրկենուն ձեռք չեր տվել, պահում եր «աղիզ գոնաղի» համար, վոր միասին ուտեն: Թե ո՞վ եր լինելու եզ «աղիզ գոնաղը», ինքն ել չգիտեր, բայց այնպիսի կարոտով ու անհամբերությամբ եր սպասում

\*) Առաջին ասողը վոր յերևում ե յերկնակամարի վրա: Գյուղացիք այդ ասողին ասում են «տավարածի անող», հավանորեն կցելով այն մաքի հետ, վոր այդ ասողը դուրս գալիս տավարածը պետք ե արդեն նախիրը տուն բերի: Մ. Գ.

նրան, վոր կարծես տարիներով կարոտած, սերը սրտում բորբոքվող նորահարս լինելը իր ամուսնու գալուն սպասող: Անտոնը շուտ-շուտ ներս ու դուրս եր անում, անհանգիստ ման-ման անում ջաղացի չորս բոլորը, բարձրանում ջաղացի կտուրը, աչքերը բայն չուում զանազան ուղղությամբ, վոր մի գուցե խավարի մեջ յեկող նկատի, կամ ականջները սրում, շունչն իրեն քաշում, վոր լսի, թե հեռվից ձեն-ձուն հո չի գալիս... Այսպիսի լարված ու ջղային դրությամբ, հանկարծ մի մկան խլտոց, կամ թրուչունի թպրտոց ցնցում եր նրա սիրտը, վորն սկսում եր անհանգիստ ու արագ բաբախել, և հուսախաբված ծերունին հառաչանք արձակելով, կամ ինչպես ասում են— «հոգոց անելով» գլուխը պտույտ եր տալիս ինքն իրեն մտածելով— «վա՛յ թե յեկող չըլի, յերկինքն աստղալից ա», կամ, «չլի՞ երեկվա կատարվածն երազ եր, մի հին հեքյաթ»...

Գիշերն իր աստղազարդ վերմակով բարուրել ու քուն եր դրել ամենքին. միակ արթուն շունչը վոր կար, դա— Անտոնն եր, մեկել ձորում հոսող առուն ու թեթև քամին վոր ծառերի վրա մնացած հատ ու կենտ տերևներն եր պոկում, առնում տանում...

Անտոնի հաշվով կես գիշերն արդեն մտա եր: «Հրես ուր վոր ե կգան» հաստատ վճռեց իր մեջ ու մտնելով ջաղացը, կրակն իրար արավ, վառեց, վաղուց մոռացված, ունկը կտորած չուգունե «ախթափա չայնիկը» դրեց վրան մեջ տեղից ճաքած ու մավթուրով կապած բաժակը լվացավ, սրբեց փեշի ծայրով, ժանգը կերած դանակը մոխիրով մաքրեց, չարչուց առած շաքարը կտորատեց մանր-մանր, կրկենու փոշին փչեց, այրված տեղերն սկսեց քերել դանակով ու խմորի փոքրիկ տաշտը շուտ տալով դրեց վրան, վոր սեղանի տեղ ծառայի:

Ես սարգ ու կարգի մեջ եր Անտոնը, յերբ մեկը դուռը բաղխեց:

— Ո՞վ ե... վեր թուով Անտոնը, վորի սիրտը հենց ծուլ ելավ, վոր կարծես բերնիցն ուզում եր դուրս թուշի.

— Յես եմ, Անտոն պապ, բաց արա դուռը, Արմենի մտախցն եմ գալի:

Անտոնն արագ վրա թուով, դուռը բաց արավ, յեկողին ներս հրավիրեց, ապա դուռը կրկին պինդ փակեց, մեծ նիզը գցեց, վոր վոշ վոք չկարողանա բաց անի ու կրակի լուսով նկատեց, վոր յեկողն Արմենի հետ յեկած յերեկվա տղան ե:

— Ե՛սքան ել կուշանան, տնաշենի տղա, հենց իմացա յերկվա տեսածս երազ եր: Դե՛, նստի, նստի, մրսած կլես մի շայ տամ խմի, ետոր ել հրես տենում էս, ես կրկենին, թխել եմ, սոված կլես, կեր, համա ամեն մի թիքեն ուտելուցդ առաջ թաթախ արա աղի մեջ, վոր համով ըլի, կրկենին առանց աղ են թխում:

— Ծնորհակալ եմ, կուշա եմ, պատասխանեց յերիտասարդը:

— Ե՛լի, ինչքան չըլի, բերանդ թաց ու ցամաք կանես, ուրիշ բան չունեմ, վոր պատիվ անեմ, յես ել եմ սոված, սաղ որը մանանա չեմ դրել բերանս, քեզ եմ ճամբա պահել: Համ ել... անունդ ինձ բախշի, անունդ ի՛նչ ա...

— Անունս Արսեն ա:

— Դե՛, Արսեն ջան, նստի ետ փափուկ խոտի վրա, համ շայ կխմենք, համ ել մի քիչ գրից կանենք ձեր գործերիցը:

Անտոնն ու Արսենը նստեցին կրակի շուրջը: Անտոնն ամեն կերպ աշխատում եր հյուրասիրել իր «ազիզ զոնաղին», ինքն ել ախորժակով ուտում եր կրկենին:

— Յես շտապում եմ, Անտոն պապ, ասաց Արսենը. ես կապոցը վոր տեսնում ես, թղթեր են, եստեղ շատ բան կա գրած մեր գործի ու անելիքների մասին: Սրանք

պետք է տարածել գյուղացիների մեջ, վոր կարգան: Յեթե ես առաջին գործն աջող կերպով գլուխ բերես, այնուհետև կանցնենք մյուս բաներին:

— Տեսչենի տղա, ձեր կռիվը թղթով ա... հեգնեց Անտոնը. թոփ ու թվանք ասա, թե չե թղթով սով ա կռիվ արել... դե, մի կարգա, կարգա տենամ ինչ կա գրած, լուծը վզին գեղացու համար ոգուտավոր բան կա, թե թագավորական պրիկազի ու մանիփեստի պես մի նոր կոտ ել դուք եք ուզում քյասիբի շնքին փաթաթեք:

Արսենն սկսեց ծանր ու հանդարտ կարգալ մի թուղթ վորը կլանեց Անտոնի խելքն ու միտքը: Նա աչքերը չռած, բերանը բաց, անթարթ նայում էր Արսենի բերանին, վորպեսզի վոչ մի բառ բաց չթողնի: Ու յերբ ընթերցանությունը վերջացավ, Անտոնը նոր գյուտ արած պատանու նման ուրախ բացականչեց.

— Ա՛յ, ինչ եմ ասել յես ետ դայդի գրածին, յարաք եդ ինչ մարդ ա գրել, ետքան խելք ու ետքան մեր ցավին մոտ... Հե՛յ-վախ, վոր յես կարգալ չեմ գիտում... համա վոչինչ, գորութիւնը հիմի իմացա, տուր մի հատը ծոցումս պինդ պահեմ, մեկելները յես թե վոնց կհասցնեմ գեղականին, ետ դու յետով կիմանաս: Մին ել... մի բան ասեմ, Արսեն ջան: Սա վոր կա, ջաղաց ա, հազար ունդի, հազար չեչիդ, հազար ջուռա, հազար ու մի խելքի տեր ա գալի, դու, կամ ձեր դարկած մարդը վոր գալիս ըլի, թող հետը մի քիչ աղուն բերի, հենց իմանանք, թե ջաղացավոր ա, թե չե ետորվա քեզ պես, վոր գա ու դոնիցն ասի,—Արսենի մոտիցն եմ գալի, ես վոնց կըլի... Արի ու ասա, մոտս մի մարդ եր ըլում, կամ մի քանի հոգի, ինչ կաօին, թե Արսենն ով ա, յա դո՛ւ ով ես... Ես ել ասեմ քեզ, թե մոտս մարդ ըլի, յես դուռը բաց կպահեմ, թող գա ու տուն մտնի, վոնց վոր աղուն բերող մի անծանոթ մարդ, թե չե հու փակ ըլի, յես ներսից միսչե չհարցնեմ, թե վոնտեղացի յես, նա թող Արսենի անումը

տա վոչ... դու հալա ջահել ես, ես աշխարհի շուն ու գելը շատ ա. ախպերն ինչ ախպեր ա, նրան ել դժար է հավատալը:

Արսենը հավանություն տվեց ծերունու խորհուրդներին ու թղթերի կապոցը թողնելով նրա մոտ ինքը ճանապարհ ընկավ ասելով.

— Վաղը չե, մյուս որը կըլին մարդ կզա քեզ մոտ, Անտոն պապ, իսկ ես թղթերը տարածելու համար, թե մարդ պետք ըլի, փող ծախսելու կարիք ըլի, առ ես դու մարը, ծախսի...

— Համա ի՞նչ խելքք ես ե՛, բալա ջան. յես վոր մարդ բունեմ ետ թղթերի համար ու փող ել տամ, ետ հու իմ ձեռովն իմ տունը կքանդեմ... ի՞նչ կասեն թե ջաղացպան Անտոնին փողը վոնդիան ա, սով ա տվել, գետի ջուրը հո չի բերել... կասեն ես բանումը մի «և» կա, ու ջուրը հո չի բերել... կասեն ես բանումը մի «և»-ի պոչիցը բունած քաշ կտան, դե հիմի դու գնա ետ «և»-ի պոչիցը բունած քաշ կտան, դե հիմի դու գնա ու գլուխդ թափի շների ձեռիցը: Փողը պահեցեք մի ուրիշ բանի պետք կզա, թղթերի բանն ինձ թող:

Շուտով նրանք բաժանվեցին իրարից:

Անտոնը ջաղացի դուռը կըլին պինդ փակեց, թղթերի կապոցը խնամքով թագցրեց ջաղացի մի անկյունում ու բուխարու կրակի շուրջը մեկնվելով սկսեց մտածել, ու թե ինչ ճանապարհով է տարածելու... ինքը գյուղ չի կաթե ինչ գնալ, վորովհետև իսկույն կկասկածեն, թե «ետքան լող գնալ, վորովհետև իսկույն կկասկածեն, թե «ետքան տարվա ջաղացում փակված Անտոնն ի՞նչ բան ունի գեղում, ո՛ւր ա յեկել», մտածում էր նա, ուրիշ ել ո՛ւմ վրատահի...

Այս խորը մտածմունքների մեջ ել քունը տարավ Անտոնի, ու քնեց:

V

Բալչևիկյան գործը շրջապատել էր գյուղը: Որհասական կռիվ էր տեղի ունենում հարձակվողների ու պաշտ-



տոնը հանկարծ հիշեց թղթի կապոցի մասին: Նա իսկույն զգաստացավ, կրակն իրար արավ ու շաղացի դուռն զգուշությամբ բաց արեց: Աղամամութն ընկել էր: Անտոնը թեև տակն առած թղթի կապոցը, լուս ու մութը խառնվելու պինդ խավարի մեջ իջավ գեպի առուն, արեխները հանեց, մտավ ջրի մեջ ու վագեց գեպի մեծ ճանապարհը, վորը յերկաթուղու կայարանը միացնում իր շրջանի գրեթե բոլոր դյուղերի հետ: Տեղ հասնելով՝ նա ջրից դուրս եկավ ու թղթերը ճանապարհի յերկարությամբ սկսեց փռել: Մի քանի բույս չանցած՝ ճանապարհը ծիր կաթինի աստղաշարքի նման փայլում էր բույրեկյան կոչի թուրքիկներով:

Անտոնն իր հետքը կորցնելու նպատակով՝ մտավ մեծ ճանապարհի մոտով հոսող գետը և գետի հոսանքով իջնելով՝ հասավ առվին ու կրկին վերադարձավ շաղացի մոտ: Տրեխները հագավ, բարձրացավ վերև, մտավ շաղացը, կրակը՝ վառեց, թրջված շորերն սկսեց ցամաքացնել:

Խավարն իր սև վարագույրը կամաց-կամաց յետ էր քաշում: Լույսը բացվում էր:

## VI

Պարծառ որ էր բացվել, բայց Անտոնը դեռ քնած էր: Մին էլ շաղացի դուռն ամուր բաղխեցին: Անտոնը վեր թռավ տեղից, աչքերը արորեց ու քունը գլխումը, զգաց, վոր դռան թրխկոցն իսկի աղուն բերողի չի նման, ով վոր է, շատ կատաղած է քացի տալիս դռանը:

— Ե՛յ, շաղացպան, ի՛նչ էս շնթուել...

Սուրմոնն էր:

Անտոնը խալթվածի պես ծլունգ էլավ տեղիցը դուռը բաց արավ:

Բարի լույսի փոխարեն, Սուրմոնն սկսեց գոռգոռալ ու հայհոյանքներ թափել:

— Տո՛, քալթառ շուն, եսպես էս պահում շաղացս: Բեզ աղա յեմ կարգել գլխիս...

— Դե, աղուն բերող չկա, մի քիչ նունջս տարել էր... կմկմալով պատասխանեց Անտոնը:

— Աղուն բերող չկա՞... էլ ո՞վ աղուն կբերի խարաբախանա, ավերակ շաղացը... դուռը վոր փակ պահես, էլ ո՞վ մոտ կգա... Ո՞վ ա տեսել շաղացի դուռը որը կեսորին փակ: Քու շաղացն իսկի փակ պահել էս, վոր հիմի իմն էս պահում... Սաղ մի սնաթ ա, շաղացի դուռը կտարատում եմ, ձեն տվող չկա, աղուն բերողը գլուխն ինչ քարովը տա...

— Ես տեսակ բան իսկի ինձ հետ պատահած չի, Սուրմոնն...

— Ձենդ, հարամգաղա. շնությունն էլ նոր էս սովորել... Ո՞վ ա գիշերս քեզ մոտ զոնաղ կանչված ըլել, վոր չայ-չաքար էս առել, կրկենի թխել, շաղացդ էլ ակլել, մաքրել, վոր յեկողը թողոտ չըլի: Ասա, զոնաղդ ո՞վ էր, ում կնիկն էր...

Սուրմոնն, ամոթ ա, սիպտակ միբուքիս մուր մի քսիլ...

— Կաց, հալա, յես քեզ մուր շանց կտամ...

Ու ձին դռան ծառիցը կապելով՝ Սուրմոնը ներս մտավ շաղացը:

Բուխարու առաջ դեռ իրենց տեղն էյին թեյամանը, բաժակը, շաքարը, կրկենու մնացորդը և այն խոտը, վորի վրա նստել էր Արսենը: Մոռացկոտ ծերունու տնփութություն:

— Աֆֆերիմ պառնով... հեգնեց Սուրմոնը, — աֆֆերիմ շանիդ դաղըր լավ էս իմացել: Ես սուփրասեղանը յես իսկի իմ տանն էլ չեմ սարքել. լավ էք քեֆ արել, խոտք չունեմ. Սուրմոնի շանը թող դուրս գա, վոր ամիսներով շաքարի էրես չի տեսնում: Բա գուռնա-դհոնն ուրա, գուռնա դհոնը: Յես էլ հենց գիտենամ շաղացս հալալ

մարդու ձեռի յա, դու մի ասիլ գող ու ավագակի ճանկ եմ գցել: Տարեկան քանի թաղար\*) հաց ես ծախում...

— Սոլոմոն, ինձ բխարուս, խայտառակ մի անիլ, ես ա մի վոսս գերեզմանումը մարդ եմ, ես հասակն եմ հասել մի մարդ ելա ինձ գող չի ասել... դսպված գայրուլ-թով առարկեց Անտոնը:

— Հա՛-ա՛... Ուրիշներն եշ են. յես ել հո է՛շ չեմ, վոր չհասկանամ, թե գող չես, ես սովի տարին վո՞րտեղից ա քեզ ցորենը, վոր աղացել, կրկենի յես թխել. թե գող չես վո՞րտեղից ես տալու չարչի ներսեսի պարտքը, թե գող չես, ես ո՞վ ա ես խոտի վրա նստել, հետդ լըբուլթյուն արել. ի՞նչ գուլ\*\*)) կնիկ ես պահում, խալխի աչքիցը ծածուկ: Դու վո՞չ թե ցորեն ու ալյուր ես գողացել, դու մարդ ել ես գողացել, մա՛րդ...

— Սոլոմոն, Սոլոմոն, վերև յերկինք կա, ձենդ կըլսի, հոգուտ մեզք մի անիլ:

— Ա՛յ, խուով կենա գլխիտ յերկինքն ել ու գետինքն ել, հալա յես եմ հոգուտ մեզք անում... դե, բաց արա բոխչեզ, ինչ վոր ունես գողացած, պահած, մեղան հանի, թե չե դիվանի ռեխը կտամ, ջանդ գյուլլով կքրքրեն, մազ կշինեն:

— Ես յես, եզ դու, ես ել ջաղացը, ել հո տուն չունեմ, տեզ չունեմ, բարեկամ ու ազգտկան չունեմ, վոր նրանց պահ տված ըլեմ: Ման արի, քրքրի, ջաղացը տակն ու վրա արա, թե մի ծեղ գտնես պահած, ուզում ես ինձ մորթի, ջիգյարս գցի ետ բուխարկի կրակին ու կեր: Համա... ինձ խալխի միջին խայտառակ մի անիլ. անումս տափը մի դնիլ. յես ել մի մարդ եմ ելել մարդամիջում, նամուսով մարդ...

Սոլոմոնը կատաղած դես-դեն ընկավ, սուտ-սուտ

\*) Թաղարը—մոտ 30 փուլ յ:

\*\*)) Դուլ—վորբեայրի կին:

ման եկավ, մի քանի քար ու փայտ տակն ու վրա արավ ապա դառնալով Անտոնին, գոռաց.

— Շորերդ հանի, դեսը դի, հնքդ տկոր կանգնի, շորերդ ման եմ գալու, դու թիկունքումդ կարած փող կունենաս:

Արի, ա՛յ մարդ, աստու մտիկ արա, յես փող-գաղ չունեմ... կատաղության. դողը բռնած ասաց Անտոնը:

— Աստոծ-մաստոծ չեմ ճնանչում յես, շորերդ հանի, հրամայեց Սոլոմոնը:

Անտոնը հանկարծ հիշեց Արսենից վերցրած թուղթը: «Բա վոր բունվի՞» — միտք արավ նա: Ու մինչդեռ Սոլոմոնը մուլթ անկյունում շուռ եր տալիս ցորենի կտար, Անտոնն իսկույն հանեց թուղթը, խոտնեց խոտի հետ ու գցեց բուխարու կրակի մեջ:

— Ի՞նչ ես անում, շո՛ւն, ետ ի՞նչ կրակ ա:

— Ա՛յ, անաստված, ուզում ես բա տկոր փեռանամ, ես խոտը կրակի վրա յեմ դնում, վոր շանսատակ չըլեմ:

Սոլոմոնն անմիջապես մոտ վագեց գոչելով.

— Տո՛, գո՞ղ շուն, փողերը կրակը գցեցիր, հա՛...

Ու մտրակը քաշած սկսեց ծեծը:

Անտոնն անշարժ կանգնած, մտրակի ամեն մի հարվածից հետո, աղիողորմ կրկնում եր. — «Ես ել երկու, ես ել երկու»...

Ի՞նչ ես փնթիխթում, քավթառ ավագակ. կատաղած գոռաց Սոլոմոնը դադարեցնելով հարվածելը:

— Վոչինչ, Սոլոմոն, սրանով երկու անգամ ա, դու ինձ թակում ես, նրա հաշիվն եմ անում:

— Հաշիվ ես պահում, հա՛... անգամ քոփակ: Հալա շորերդ հանի, հաշիվը քեզ յետով կասեմ:

— Իմ շորն ես մի բուրքն ա, ես ել առ, աչքդ կոխի, տես, միջին Մանթաշովի խաղնեն պահած կըլեմ:

— Բռները կրակն ածեցիր ու դարդակ բուրքն ես



ցաւ. թե մեր պապ Ադամն ես, եկել ես, թե Սուրմոնն խազեյինի հոգուն չողես, հոգին հանես, առնես, տանես:

— Ե՛հ, Վարթեան ջան, ել հարցնիլ մի. իմը ծովն ա ընկել. նստի, սոված կըլես, երեկվանից մնացած մի քիչ կրկենու թիքա ունեմ, քեզ տամ կեր ու պատմի, թե ետ ինչ հարսանիքի նազը արիր:

— Ա՛յ, ինչ եմ ասել քեզ պես մարդին... Սոված եմ, սով կուլ տամ, ծարավ եմ, ծով կուլտամ: Կրկենին սուր յես մանեմ, պատմութիւնն ել լավ կանեմ: Հարսանիքը... տիր-նա-նի-նի... ճամբա ընկավ:

Ու Կուպրն ընդհատելով սկսեց պարի յեղանակ զնղը-նացնել ու պարել, կրկենին ծամելով:

— Ա՛, Կուպրը մեռած, քեզ բան եմ ասում, դու պար ես գալի՞... ահամա ծիծաղելով ասաց Անտոնը:

— Բա ի՞նչ անեմ, պապար շանեմ... զնացին, թե հարսին բերեն... հարսին բերին...

Հուրո, հուրո, հոփ ինջա,  
Դահրա գցեմ, թոփ ինջա,  
Ալա քոլի խնձորն ա,  
Խնձորը կծեմ, ծուլ անեմ,  
Ձիգի հարսին կուլ անեմ...

— Ա՛յ, մեռնես դու, մեռնես, ա՛ Կուպրը մեռած...

— Հագիր քու խազեյին Սուրմոնը մեռնի՞... Դե, լավ լավ. արի պատմեմ: Դե, հո դիտես, վոր ես քու խազեյին Սուրմոնի ախպոր աղին—չոփուռ Մադուն մեր գեղումն աղջիկ չավին. շատ եր սիրուն, երեսը մկան կրծկրծոտած հացի պես. ինձ են Կուպր ասում, համա նա թամամ—արաս եր, մարաս եր, կպրի կարաս եր: Յերեսի կեսն երած եր, բեղի տեղն ել—ծաղկի կերած եր:

— Ա՛ Կուպր մեռած, ինչ ես գլխիս շայիբ դառել, բան պատմի, խոսք հասկանամ, Մադու գլուխն ել ենտեղ թաղեմ,—ընդհատեց Անտոնը:

— Յես ել թաղեմ, թաղ անեմ, խալխի միջեն լազ

անեմ. պատմեմ, պատմեմ, պատ անեմ, քու հովսալեն\*) շատ անեմ:

— Տէր մեղա...

— Մեղա, մեղա, տեր մեղա, ես մեր գեղը շան գեղ ա...

— Ա՛, վոչ ու փուչ, պատմելու յէս, չե...

— Հա՛, բնա, բա ես ինչ բանի յեմ. պատմում եմ, ելի... ես չոփուռ Մադու համար զնացել են ու ես մեր կողքի վարդապետանց գեղիցը մի աղջիկ ուզել: Մաղ գշերը հարսանիքը մեր գեղումը նստած, կերել, խմել, քեֆ են արել ու լիսածեղին ճամբա ընկել դրա հարսնացուի գեղը: Զիավորները հարբած, քեֆները քոք, գալիս են հասնում գետի զրաղի մեծ ճամբին, ու մին ել են տեսնում ճամբովն երկան ու մին փռած թղթեր: Միքանի հոգի ձիուցը վեր են գալի ետ թղթերը հավաքում, ուզում են կարգան, համա գինին գլխումը պար ա գալիս, մարգ ինչ կարա հասկանա, թե ինչ ա գրած մեջը: Կզկզացնում են, կզկզացնում, ու ես թղթերը իրար մեջ բաժանում, վոր պապիրոսի համար պետք ածեն: Թղթերը շատ են ըլում. հարսանքավորների կատարն ել կարմրած, ում վոր ճամբին պատահում են, ետ թղթերիցը տալիս են, վոր պապիրոս բաշի. իսկ վոր մանում են գեղը, գուռնա—գնդի ձենը դրմբացնելով, ձին խաղացնելով քշում են, ու ինչքան իրանք են շաղ տալի, երկու ենքան ել թղթերը հենց—իրանք քամու բերանի ընկած գեղով մին ցրվում են: Ասում են՝ սաղ գեղի վրովը կասես սպիտակ աղունակներ ըլեյին թուչելիս...

Այստեղ Կուպրը խորհրդավոր կերպով ընդհատեց իր պատմութիւնը:

— Հետո՞... անհամբերութիւնով հարց ավեց Անտոնը՝ վորի աչքերը վառվում եյին:

\*) Հովսալա—համբերութիւն:

— Հետո... կաց մի պիտու քոքեմ: Լավ անգաճ կալ, նորափեսին ու նորահարսին գեպի յեկեղեցի տանելու, պսակի հավեն\*) եմ փչում:

Ու Կուպրը մաշված արխարուխի ծոծից հանելով իր պիտուն\*\*\*) «պսակ գնալու» յեղանակը փչեց: Անտոնը համբերությունը հավաքած լսեց մինչև կեսը, և ուղեց ընդհատի, բայց Կուպրը ձեռով վոտով հասկացրեց, վոր չխանգարի իրեն: Նա պիտուն բերնին դրած, թշերն ուռցրած, բլբուղ—բլբուղ անելով փչում էր, աչքերը շուռ ու մուռ տալով:

— Ա՛, տափը մտած, պրծնելու յես, թե չե...

— Պրծա՛: Պիտուն բերնից հանելով ասաց Կուպրը: Հիմի խմացար...

— Հո՛, լավ ես ածում, թամամ գուննաչու պես: Բա յետո՛վ...

— Յետո՛վ... ընկես մի փետով: Դե, թե տղա յես մնացածն էլ դու պատմի:

— Ասում եյիր բռնոտել են հարսանքավորներին:

— Բռնոտել... մենակ բռնոտելը զիտաս. բա պիտու ես ինչի՛ համար փչեցի:

— Յես ինչ գիդամ:

— Փչեցի, վոր իմանաս, թե հենց վոր հարս ու փեսա իրար կուռ ընկած գնում են, թե ժամը մտնեն, պսակվեն, վարժապետ Մեխակը միջանի գինվոր ա հավաքում, գալի, հարսանքավորներին դալ անում\*\*\*) ու բռնոտել տալի: Հարսը մնում ա լողացրած, հա՛, հա՛, հա՛, հա՛...

— Պատճառը...

— Գնա Մեխակ վարժապետին հարցրու:

— Ե՛լի. կիմանաս:

\*) Լավա—յեղանակ:

\*\*) Պիտու—բարակ յեղեգնից (չաթան) շինած յերաժշտական գործիք:

\*\*\*) Դալ անել—ըջապատել: Դալի մեջն անել—ըջանի, կտր ցանկապատի մեջն անել: «Հորթերը դալն արին»:

— Կիմանամ... կիմանամ, բնս, կիմանամ... ես ցավին յես վոնց դիմանամ... ետ թղթերի մեջ, ասում են մեր հիմիկվա խմբապետ—կառավարութենին հակառակ բաներ կա գրած, գրողն էլ բայլընիկն ա: Գիդաս, ինչ բան ա բայլընիկը...

— Չե՛:

— Բայլընիկն ինձ նման անտեր—անտիրական կուպրերի կառավարութիւնն ա, յես նրա հոգուն մատաղ, թող հալա մի գա՛...

— Հո՛, ետա վոր եկավ, քեզ թախտի վերի ծերին են նստեցնելու, ելի,—հեգնեց Անտոնը:

— Ո՞վ պաի նստացնիլ, յես, ինքս կընստեմ, ու մոտ յեկող հակառակին էլ կըղեգստեմ: Հրեա... տենում ես ես ինչ բաներ են. սրանց ամեն մի հատը մի միլիոն արժե, ես մին, ես երկու, ես երեք, ես չորս, ես էլ հինգ... Հինգ միլիոն...

Այս ասելով Կուպրը գրպանից հանեց բայլընիկյան հինգ հատ թուռցիկ: Անտոնը ճանաչելով իր իսկ ցրված թուռցիկները, միամտանալով հարցրեց.

— Սրանք ինչ բաներ են:

— Են թղթերիցն են, ելի:

— Վո՞ր թղթերիցը:

— Ա՛, են վոր հարսանքավորների մոտ բռնել են:

— Բա վո՞րտեղից են քու ճանկն ընկել:

— Ինձ վոր դեսը զարկեցին, վոր դամ Սողումն խաղեյինին իմաց անեմ, յես առաջ վազ տվի մեծ ճամբին, ու թփերի տակիցը հավաքեցի ես հինգ հատը, վոր տառնեմ մի թաքուն տեղ նստեմ ու գիրկապ անելով կարգամ, զորութիւնն իմանում: Ասում են, թե ես թղթերից մի հատն ե մենակ ընկել Մեխակ վարժապետի ձեռը, ու հենց վոր հարսանքավորներին բռնել ա տվել գեղացիք հենց աթտաղ—մութ տաղ են արել\*), վոր ամեն մեկին մի միլիոն էլ տաս՝ չես գտնի:

\*) Աթտաղ—մութ տաղ անել—անհետացնել, հետքը կորցնել:

— Բա դու ինչ ես անելու... չի լի՛լ մինն ինձ տաս:

— Լավ մտիկ, տես ինչ եմ անելու... տարան-նա-նի,  
տիր-նի-նի-նի, տիր-նա-նի-նա...

Թղթերը ծոցը կոխելով՝ ձեռները վեր բարձրացրեց  
Կուպրը, և պարի յեղանակը դնդնացնելով՝ սկսեց պարել,  
հետզհետե մոտենալով շաղացի դռանը. ապա մի վստայու-  
նով դուրս ցատկեց, ու հանդե...

Անտոնն անակընկալի գալով՝ քիչ շվարեց, բայց հե-  
տո ուշքի յեկավ ու Կուպրի յետևից կանչեց:

— Յեա արի, ա՛ Կուպր մեռած, յեա արի վերջն ել  
պատմի...

— Վոր դուրս եկա, ել գալ չեմ, ես թղթերից քեզ տալ  
չեմ. պատասխանեց Կուպրը և անհետացավ վրա հասնող  
խավարի մեջ:

## VII

Մութն եր արդեն: Որվա անցուդարձից շժմած, Ան-  
տոնը գլուխը թափահարելով՝ բուխարու կրակն իրար եր  
անում, վոր տաքանա, յերբ շաղացի դուռը ճռաց: Անտոնը  
յեա նայեց ու տեսավ, վոր ներս մտնողն իրենց գյուղա-  
ցի Ավետիսն է:

— Բարի իրիկուն, Անտոն ապեր, — վողջունեց Ավե-  
տիսն ու մոտեցավ նոր վառվող կրակին:

— Բարու տեր ըլես, Ավետիս ջան, խեբ ըլի, ի՛նչ կա  
ես մթանը, վոր շաղացն ես եկել:

— Ղարավուլ եմ. չե, զարավուլապետ եմ քմծիծաղով  
պատասխանեց Ավետիսը: Եսա միրուքս չալած մարդ եմ,  
Անտոն ապեր, համա վոչ ես զայդի կառավարութիւն եմ  
տեսել, վոչ ես զայդի կառավարիչներ: Անտեր Նիկալայն  
ինչքան ել փրան եր, ելի մի բանի նման եր. որենք կար,  
զիվան կար, քոխվա—սուղյա կար, մեծ ու պտտեկ կար,  
ծուռ ու դուղ եր շոկվում: Հիմի ես անտեր յերկիրը թա-

մամ դյարա բյազլիկ\*) ա դառել, տեղիցը վեր կենողն  
իրեն աշխարհի տեր ա համարում:

— Ի՞նչ կա վոր Ավետիս ջան, թագա բան կա...

— Ել ըլի... գեղը վորցակի յեն բարձել\*\*): Դու հո գի-  
տես, յես աշխարհ տեսած մարդ եմ, Փոլլվի\*\*\*)) կար-  
մունջը շինելիս, յես փետի մեծ փողբաթ ունեյի ձեռիս,  
հետո Գյանջա գնացի, սուդի չլեն Մուսկովի տանը ծառա-  
յել եմ: Դիվանը վոր գեղն եր գալի, մենակ յես ի, վոր  
ուսերեն ի գիտում, ինձ ին կանչում, վոր պրիստավի հետ  
զրից անեմ: Վրացերեն գիտենալս ել, դե աշխարհին ա  
հայանի, Աղստափի վագալի բուֆետչիկ Իլիկոն ինձ ախ-  
պոր չափ սիրում եր. ենքան իրար հետ վորս ենք արել,  
վոր ել Ղազախի մահլումը կուրդղելի\*\*\*\*)) չեր մնացել:  
Հեյ գիդի հա... Որենքն իրան տեղը, մենք մեր պատվին:  
Են տարին Լեանիչուն (անտառապետ) մի վորսի թուլա  
քախշեցի, սաղ քոլն իմ ձեռին եր: Վոր մինն ասեմ...

— Ավետիս ջան, խոսքդ շաքարով կտրեմ. ախըր չա-  
սեցիր, թե ի՛նչ ա պատահել, վոր զարավուլ են շինելքեզ,  
մի ետ ասա, պրծի, յետով շատ զրից կանենք հին բա-  
ներից, ընդհատեց Անտոնը:

— Բա չես իմացել...

— Ես շաղացումը ձգնավորի պես մեն-մենակ փակ-  
ված, ի՛նչ իմանամ...

\*) Դյարա բյազլիկ—թուրքերեն դյարա (ձոր) և բյազլիկ  
(բեզ) բեգություն—բառերից ե կազմված, վորի իմաստը մոտա-  
վորապես այն է, թե «ձորի իշխանություն»—վայրի իշխանու-  
թյուն է:

\*\*) Գեղը վորցակի յեն բարձել—ժողովուրդը գործ է անում  
այն իմաստով, թե դուրսը քաղել են, վոր յեթե մնա-  
ցածը բարձես մի աքլորի, կտանի: Այսինքն—գլուղը դարձել է  
մի աքլորի բեռ:

\*\*\*)) Փոլլի—կայարանի անուն է: Փոլլին գտնվում է Թիֆ-  
լիս—Բագու գծի վրա, Գուռ գետի աջ ափին:

\*\*\*\*)) կուրդղելի—վրացերեն—նապաստակ:



նշանակել են, վոր ջաղացի վրա հսկի... Եսպես հազար ու մի մտքերի մեջ եր Անտոնը, յերբ ներս մտան պահակները—Ավետիսի գլխավորութեամբ,

— Բարի իրիկուն Անտոն բիձա:

— Բարով, հազար բարի, յեկեք տղերք ջան, յեկեք, մրսած կըլեք, յեկեք տաքացեք, կրակի փայտն ավելացնելով—ասաց Անտոնը:

Պահակները հրացանները պատին դեմ անելով մոտեցան բուխարու կրակին:

— Հրեն ոխտը բալշևիկ եմ բռնել ծառիցը կապել, եզուց Մեխակ վարժապետին փեշքեշ եմ անելու,—ասաց պահակներից մեկը:

— Ոխտը չի, ութն ա, վրա բերեց յերկրորդը:

— «Արջն իրեն ահիցը կըգոռա»—կրկին խոսեց առաջինը: Ես հալա բայշևիկի թուղթն ա երևացել, Մեխակ վարժապետը չի կարում դադարնստի, բա վոր եզուց թղթի տեղ գյուլլա երևա, վոնց ա դոշը դեմ տալու:

— Դոշը չե, մեջքն ա դեմ տալու, մեջքը հենց փախչի վոնը, վոնց-վոր թաղի տեսած աղվես, ել յետ դոշը դեմ տվողը յես ու դու պտենք ըլել, յես ու դո՛ւ... կրկին խոսեց յերկրորդը:

— Հա, վոնց չե, եփել են հազիր արել: Թե յես բալշևիկի վրա գյուլլա գցեմ, թող իմ երեխանցը դիպչի: Թե մի աչքս նրանց կըտեսնա... յես թող շուն դառնամ, թե նրանց վրա թվանք մեկնեմ: Աղբբեջանը քեզ որինակ քանի Մուսավաթն եր, մեզ հետ կոխվը հո կոխվ եր, իրենց մեջ ել շնաքոյու ընկած՝ գզում ին, վոնց վոր հիմի մեր գեղումը: Մուսավաթն աղին թե ու թիկունք եր տվել, կատաղացրել, գցել քյասիբի ջանին... Բայշևիկն եկավ, են ոյինը դրեց ետ քու Մամմադ աղի ու Մամմադ աղի գլխին, վոր հիմի ով գիտա վոնտեղ են սոված գկրուտում. քյասիբն ել դինջացավ ու իրեն վար ու ցանին ա, իրեն մշակութենին:

— Արա ա Միդ, ել ինչ ենք եկել ես ճամբին դարավուլ կաղնել, ենա յեկ առավոտն ես Ավետիս դայուն ասենք մեզ աղաք անի, տանի Մեխակ վարժապետին տա, ելի. ել քեզանից ու ինձանից լավ հակառակ յես վոնդի գտնեմ. բալշևիկ ենք, թե ինչ ենք, եսա հրես ես կրակի զրաղին նստած ենք, ելի...

— Մխալ եք հաշիվ անում տղեք, մեջ մոտավ Ավետիսը. թե վոր Մեխակ կոմիտեյին մարդ տանելու բան ըլի, մեր գեղումն ինչքան աղքատ—անանկ կա, պետք ա բռնոտենք, վորի հետ զրից ես անում, ձեզ պես են խոսում:

— Թաղեմ քու կոմիտեյի շաշ գլուխը, կրկին խոսեց Միդին, ինքը փափուկ բարձին քնած, գիդում չի թե սաղ գեղերը գզվել են ես կառավարութենիցը, դառել բալշևիկ: Թո՞ղ մի են սարի ծերիցը մի բալշևիկի թվանք տրաքի, տես հալա ժողովուրդը դեպի նրանց կողմն ա անց կենում, թե չե, տես քու ետ կոմիտեյի մոխիրը քամուն կենում, թե չե... եկողը գիդո՞ ով ա... թագավոր սպան ես տալի, թե չե... եկողը ոռւսն ա, է, ոռւսը, յես նրա նող ու հարուստ խեղդող ոռւսն ա, է, ոռւսը, յես նրա շեկ ռանգին մատաղ: Թո՞ղ մի գա, ես Սոլումոնի ու Գրիշեկ ռանգին մատաղ: Թո՞ղ մի գա, ես Մուսավաթն ել գեղն են ընկել, լափում են: Հրես է, մեր Մուսավաթն ել գեղն են ընկել, վոնց են պաշտպանում հարուստներին...

— Համա ինչ բախտներս քաշեց, ես խաթեն Սոլումոնի ախպոր տղի գլխին ընկավ է, թե չե մի խեղճ քյասիբի ձեռի վոր ետ թղթերիցը բռնել են, անխոսալե անխոսացնել, գյուլլախորով են անելու:

— Հա բա... խելքդ լավ ա կտրում... Տես եզուց հարսանքավորները գոռնա—գհորով, հարսն առած գալիս են մեր գեղը, թե չե... Մեխակ վարժապետը վոր իմանար, թե նորափեսեն Սոլումոնի ախպոր տղին ա, կբռներ...

ԸՏ՛ը, եզուց ես բերեբրս կկտրեմ թրքի մեջ կըկոխեմ, թե քու ետ Մեխակ վարժապետ—կոմիտեն հարսանիքի հետ մեր գեղը չգա, քեֆ չանի... Խալխը կարում չի թե ցամաք հաց ճարի, փորը մեջքիցն ա կպել, քու Սոլոմոնը կասես կերի մեջ պահած բուղա ըլի, երկու տարի յա, յես մսի համ չեմ տեսել, նա հրեն քեզանից, պարաքի տեղ խլած հերինջը հարսնիքումը մորթել ա, վոր միսը թյունջի ըլի փափուկ ու համով:

— Դո՛ւ խի յես նեղանում, ա՛յ վորդի, ապրանքն իրենը չի, ինչ կուզի, կանի, մեջ մտավ Անտոնը:

— Իրանն ա, բան, իրենն ա, Անտոն բիձա, ես շաղացն ել ա իրանը, չե՞, քու տան տեղն ել ա իրենը չե՞, իմ բազն ել իրենը չե՞... դե, ել ինչ ենք զուր տեղը գլըխներիս փափախ դնում, սաղ գեղն իրենն ա, ելի. ինչ կուզի, կանի. մենք ել յեկեք գնանք ամեն մեկս մի աաշտակ առնենք, նրա վտաները լվանանք ու ջուրը խմենք, ելի...

— Վեր կացեք, վեր կացեք գնանք զարավուլ քաշենք կես գիշերն անց ա, մի բան կըպատահի, ասաց Ավետիսը:

— Ինչ ուզում ա, թող պատահի, վրդովված պատասխանեց Միդին: Յես գնամ ճամբին զարավուլ քաշեմ, դու ել գնա իմ տանը զարավուլ քաշի, տես, խումբի տղերանցից մեկնումեկը հո չի՞ յեկել կնկանս ծոցը մտել... թո՛ւ, ես դայդի նամուսին:

— Վեր կաց, վեր կաց, ամոթ ա, ընտանիքդ անպատիվ մի անիլ, հորդորեց Ավետիսը:

— Անպատիվ անողն արել պրծել ա, թե յես ել կարամ իմը կանեմ, ասաց Միդին, ու վեր կացավ տեղիցը:

Պահակները դուրս յեկան շաղացից, իսկ Անտոնը մեկնվեց կրակի առաջ, վոր հանգիստ տա իր տանջված ուղեղին, վորը պայծառացել էր տեղի ունեցած խոսակցություններից:

— Հա՛... հիմի կհավատամ, վոր Սոլոմոնների վերջը

մտացել ա, ինքն իրեն շնջաց Անտոնը և քնի գիրկն ընկավ:

VIII

Հուսաբաց եր. Անտոնը վեր եր կացել անճանգիստ քնից, բուխարու կրակը վառել և Սոլոմոնի ձեռով քանդած բուրքի կարերն իրար եր անում, յերբ շաղացի դուռն ամուր բաղխեցին:

— Ո՞վ ես, ճախ տվեց Անտոնը:

— Յես եմ, յես, Անտոն բիձա, վեր կաց դուռը բաց արա, գինի տամ—բողազդ թաց արա:

Կուպրն եր:

Անտոնը բաց արավ շաղացի դուռը և ներս հրավիճեց անսպասելի հյուրին, վորից գինու հոտ եր փչում:

— Անտոն բիձա, բարի լուս, անգաճ արա սուս ու փուս:

— Ա՛ կուպր մեռած, թե մարդավարի զրից ես անելու, սրա, թե չե վեր կաց կորի, քու գլուխը չունեմ:

— Ա՛յ, զրից սն կանի, ապա խմի՛, համը տե՛ս, դարդը քամին կտանի: Այս ասելով Կուպրը գրպաններից հանեց մի-մի շիշ գինի, յերկու բաժակ, ու զրեց Անտոնի առաջ:

— Ե՛ս ինչ բան ա... ես վճռտեղից ա...

— Հարսանիքից, Սոլոմոնի ախպոր տղի հարսանիքիցը:

— Ա՛ փուչ, դու հարսանիքումն ի՛նչ բան ունեյիր:

— Վսնց թե... սիլ ա տեսել առանց շաշի հարսանիք:

Իրիկունը քու մոտից գնացի, թե տեսնամ վոնց են անում հարսանիքի բանը: Գնացի տեսա, ես քու Սոլոմոնը սաղ գեղը գլխին հավաքած քեֆ ա անում, Մեխակ վարժագեղը գլխին հավաքած քեֆ ա անում, Սոլոմոնն ինձ կանչեց, պատիվ պեան ել կողքին նստած: Սոլոմոնն ինձ կանչեց, պատիվ արավ, ու ես երկու բոթիլ գինին տվեց, վոր բերեմ քեզ տամ...

— Դե՛նը տար, թե չե հրես երկուսն ել գլխիս կը-

Չարդեմ: Նա դալաթ ա արել, վոր քեզ ա տվել, դու յել դալաթ ես արել, վոր բերել ես, գայրացավ Անտոնը:

— Կնց, կնց, բանը խարար ես անում. շաշը յես եմ, դու յես շաշութեն անում... ես գինին բերել եմ, վոր աղ ու հացով դուրս բերես հարսանիքի առաջը, հարսանիքը ճամբիցը ծովելու յա, դեսն ա գալու: Սուրմոնը հարսին բերում ա, վոր շաղացը նրան փեշքեշ անի, դու տրտինգ ես տալի... ասաց Կուպըրը և շշերը քաշեց մի կողմ:

Անտոնը մտածմունքի մեջ ընկավ: Սա յել մի նոր խայտառակություն իրեն համար, վոր երեկվա անպատվությունից հետո, ինքը պետք է աղ ու հացով դիմավորեր գազան Սուրմոնին:

— Չե, յես ետ բանն անիլ չեմ, ինձ կսպանեմ ու անիլ չեմ,— գայրույթը հագիվ գսպելով՝ փնթփնթաց Անտոնը:

— Անիլ չես, շաղացիցը դուս կանի, վրա բերեց Կուպըրը:

— Դուս ա անում, թող դուս անի,— գահլես տանիլ մի, վեր կաց կորի:

— Խաղաղություն ես շաղացին, Անտոն բիձու աղ ու հացին...

Կուպըրը դեռ խոսքը չեր վերջացրել, յերբ հեռվից լսավեց գուռնի ձենը:

— Անտոն բիձա, դե, շուտ արա, աղ ու հացը վեր կալ դուրս արի, հարսանիքը գալիս ա, ստիպողաբար պընդեց Կուպըրը:

— Դուրս չեմ գալ, վոր նրա պես հագար Սուրմոն մեջիցը տրաքի:

— Քեզ ասում եմ, բանը խարար ես անում, Անտոն բիձա, շաղացիցը վոր քեզ դուս անի...

— Ի՞նչ կըլի, վոր դուս անի, յես ինքս կհեռանամ...

— Կհեռանաս...

— Հն, ա՛յ, հենց ես սնաթիս կհեռանամ, քու աչքի առաջ. չե, կթողամ, վոր են շունը վրես ծիծաղի: Ու Անտոնը քուրքը հագավ, վոր դուրս գա շաղացից:

— Հիմի ետա գնում ես, ելի, Անտոն բիձա, տարակուսած ձայն տվեց յետևից Կուպըրը:

— Քոռ ես, աչքդ տենում չի...

— Բա Արսենի ջուղաքն ո՞վ ա տալու:

— Ի՞նչ Արսեն,— թուրը կուլ տալով, սարսափած կանգ առավ Անտոնը դռան շեմքին, հագիվ արտասանելով բառերը:

— Դե՛, յես արի, յես արի աղ ու հացը վեր կալ դուս արի Սուրմոն աղի առաջը, թե չե...

Անտոնը քարացած մնացել էր տեղը մեխված, կարծես մեկը նրա գլխին թոխմախով գարկել էր. աչքերը չուել էր, սառել, ականջները թշուրամ ելին:

Հարսանիքը դուրս յեկավ դիմացի թմբի յետևից. ձիավորները ձիերը խաղացնելով գոռում-գոչում ելին ու հրացան արձակում:

Կուպըրն շտապով մի տախտակի վրա դասավորեց գիտով լի շշերը, բաժակները, կրկենուց մնացած մի կտոր և նույն քիչ ել աղ դրեց մոտը, ապա մոտեցավ Անտոնին, «մամի քիչ ել աղ դրեց մոտը, ապա մոտեցավ Անտոնին, «մատուցարանը» նրան հանձնեց ու կողքին հրելով ասաց:

— Խելքդ գլուխդ հավաքի, դուս արի, աղ ու հաց թավաղա արա: Ապա ինքը մի թեթև վոստյունով դուրս թռավ ու սկսեց շաղացի դռանը պարել:

— Կուպըր, Կուպըր, ա՛յ վոչ ու փուշ ըլես դու ա՛յ Կուպր, վորտեղ ասես, սխտորի պես դուս ես պըծնում, գոչեցին հարսանքավորներից միքանի հոգի:

— Խլուպուզ ա, խլուպուզ...

Հարսանիքը կանգ առավ շաղացի դռանը:

— Ես շաղացը քեզ փեշքեշ ա՛յ իմ նորահարս— թագուհի, ասաց Սուրմոնը, տարին բոլոր ինչքան յեկամուտ գա սրանից, քեզ ըլի:

— Շեն կենաս, շէն,— գոչեցին ամենքը:

— Ես Չաղացը քեզ փեշքեշ,  
հեան ել մի ձի ու մի եշ,  
յերգում կեր դու ես տոնին,  
վոր պահես մեր Անտոնին...

Մինչդեռ խալխը հրճուում էր Կուպրի ասածի վրա, նա շտապով ներս մտավ Չաղացը և Անտոնի թևից բռնած բերեց «մատուցարանը» ձեռին:

— Աֆֆերիմ Սոլումոն խաղեյին, Չաղացպանիդ ել ես գինով պահում,— ասաց Մեխակ կոմիտեն, և մտերմաբար թոթվեց Սոլումոնի ուսը:

— Ես Անտոնը գինով ա,  
առանց գինի—գինով ա,  
ես Չաղացից թե տանեք,  
լափս ենա—հոգին հանեք...

Աղ ու հացը մոտիկ տար, Անտոն բիձա, թո՛ղ Սոլումոն աղեն աղ ու հացը հալալ անի, ասաց Կուպրը և սրկսեց կոկիկ-մոկիկ պար գալ:

— Դո՛ւ, վոր ետոր իմ երեսը պարզ արիր, Անտոն, իմ ուրախության առաջն ուրախության գինով դուս եկար ամեն արարքդ բախշում եմ թո՛ղ Կուպրի ասածն ըլի, խելոք մարդկանց խոսք շատ եմ կատարել, թո՛ղ ես մի անգամն ել շաշի խոսքը կատարեմ. քանի յես կամ ու ես Չաղացը կա՛, դու ես Չաղացի Չաղացպանն ես,— ասաց Սոլումոնը և սկսեց բաժակները լցնել ու հյուրածիրել մոտիկներին:

— Ուռա՛... ուռա՛... կեցցե՛ Սոլումոնը, կեցցե՛ սուրբ դաշնակցությունը... միքանի հրացան վորոտաց միանգամից:

Հարսանիքը ծովեց, թե յետ դառնա, Կուպրը պարն ընդհատելով կանչեց.

— Սոլումոն աղա, կաց, բան եմ ասում:

— Ասա, ա՛ Կուպր մեռած, սոսա, տենամ ինչ ես ասում:

Մեր Սոլումոն աղեն ես,  
ինքդ վերի բաղեն ես,  
թե Կուպրի պես դու շաշ չես,  
Կուպրին մի բան կբախշես:

— Լավ ա ասում Սոլումոն, լավ ա ասում, մենք ել կբախշենք, մենք ել... ձայնեցին հարբած ձիավորներն ամեն կողմից:

Սոլումոնն սախաված յեղավ քսակը բանալ: Այս ուսին կողմից թղթադրամներ թափվեցին: Կուպրն շտապ-շտապ հավաքում էր ու պարում:

— Դե՛, մի բան ել ասա ու գնանք,— ծիծաղից բերանը մինչև ականջի տակերը հասած, հրճալով առաջարկեց Մեխակ կոմիտեն:

Դու Մեխակ ես, Մեխակ ես,  
համ հասած ես, համ խակ ես,  
բալշևիկը թե վոր գա,  
պինդ կաց, տեղդ չճաքես:

— Հա՛, հա՛, հա՛, հա՛... ենպես պինդ ծիծաղեց Մեխակ կոմիտեն, վոր քիչ մնաց ձիուց ցած ընկներ:

— Ա՛ շաշ Կուպրը, ետ ինչե՛ր ես դուս տալիս,— վրա պրծավ մի գինվոր:

— Չեռք մի տա, հիմա՛ր, միջամտեց Մեխակ կոմիտեն:

Շաշ ես, շաշ եմ, յես շաշ եմ,  
քեզ պես տասին կմաշեմ...

— Կերա՛ր... ետ ել քու բաժինը, ուրախ տրամադրությամբ ասաց Մեխակ կոմիտեն, ու միքանի թղթադրամ ել շալրտեց:

Ես բո՛ներ են, բո՛ներ են,  
սիրուն-սիրուն բաներ են...

— Ա՛ Կուպրը մեռած, ընդհատեց Սոլումոնը, իրիկունը կըզաս, վոր ուրախացնես:



փոքրիկ հրապարակի վրա թուուցիկը ձեռին բռնած, սկսեց պարել ու յերգել.

Հոյ Արսեն, իմ Արսեն իմ,  
 Չան Արսեն, իմ Արսեն իմ,  
 Արսեն դուն բարով եկար,  
 խավար գիշերով եկար,  
 սիւստակ թղթերով եկար...

Անտոնը շշմել, քար եր կտրել. նա այնքան եր հուսահատվել, գաղտնիքը բացվելու պատճառով, վոր քիչ եր մնում գլուխն առնի, կորչի, անհետանա: Այլևս վոչ մի կասկած չկար, վոր Կուպրն ամեն բան գիտե: Հիմի վոր գնա ու ամեն ինչ պատմի Սուրմոնին կամ Մեխակ կոմիտեյին, ինչ սուտ ու զորթով ե գլուխն ազատելու: Իրան գլուխը Չհանդամը գնա, ետ հո աղերքն ել կըբռնըվեն... նա դուրս յեկավ Չաղացից ու դռան մոտ կանգնած, չեր իմանում ինչ անի...

Իսկ Կուպրը յերգի յեղանակը փոխելով՝ ճանապարհ եր ընկել զեպի գյուղ-պարելով ու յերգելով.

Բագվի մաշեննիկը  
 բերավ բալշենիկը,  
 բալշենիկը վերջ կըտա—  
 գեղի մաշեննիկը...

— Ե՛ր, Թեանդոս, կանգնի, բան եմ ասում,— լսվեց մի ձայն առվի մյուս ափից:

Կուպրն ընդհատեց պարը: Չայն սովոր Միգին եր, վորն առուն անցնելով մոտենում եր Կուպրին: Անտոնը նույն դրությամբ—տեղը մեխված՝ զիտում եր իր առաջ կատարվող տեսարանը:

— Սուրմոնի գինին շատ ա զորավոր, փորդ ետ ածել ու պար բռնել ետ չոլի կիսումը, իսկի ետ խալխի հալիցն ել խաբար ունես, թե՛ հրեա տամ կոկոշո տասպակ անեմ, վրա պըծավ Միգին:

Կուպրն իսկի յել բանի տեղ չգրեց Միգինի սպառնալիքին, նա շարունակեց իր պարը, յերգելով.

Մուհրա գինի—Կուպրի փոր,  
 գինին համով—մեղրի ծոր,  
 խմեմ, խմեմ, պար անեմ,  
 սարսաղ գլխիդ քար անեմ:

Միգին ահամայից ծիծաղեց: Ապա մեղմաբար դիմեց Կուպրին.

— Ա, տափը մտած Թեանտոս, մի ասա տենամ,

Մեխակ կոմիտեն ել ա հարսանիքում...

— Ո՞վ...

— Մեխակ կոմիտե—վարժապետը:

— Հն, բա՛ս, առանց իշի գլուխ հարսանիք...

— Ա, փուչ, ձենդ կարի, կիմանան, գլուխդ կսխտորեն, — ծիծաղելով ասաց Միգին. ապա դառնալով զեպի Անտոնը, վորը հետզհետե մոտենում եր, ավելացրեց,— Անտոն բիձա, տես՞ր, յես չեյի ասում, թե Մեխակն ու Սուրմոնն ըսեցե՞ն... Միգին այս ասելով, յերկու ձեռքի ջուցամասները կպցրեց իրար, կողք-կողքի:

— Ե՛ր, բա՛ւա Չան, — հոգոց անելով ասաց Անտոնը,

դոչաղեն ե՛, զո՛չաղ:

Կուպրն ընդհատեց նրանց ու դառնալով Միգինին.

ասաց.

— Շատ ետ կարոտել Մեխակ կոմիտեյի՞ն, արի տանեմ շանց տամ.

Թե դոչաղ ետ, զոչի պես,  
 ինձ հետ արի, պոչի պես,  
 սուփրեն հրեն գցած ա,  
 կոմիտեն ել—նստած ա:

— Թքել եմ յես նրա հարամ սուփրին. սող գիշերը Չանս ցրտում դուրս եկավ, վրդովված պատասխանեց Միգին:

— Կարացիր. վոչ բալշենիկ բռնես, — ծաղրեց Կուպրը:

— Հնա, փոռել են ճամբին, վոր յես հալաքեմ:

— Թե շատ դարդ ես անում, ինձ բռնի, հրես նրանց շաղ սոված թղթերից մինն ել հազիր ձեռիս ա, առ կարդա-

ես թուղթը տամ, դու կնրդա,  
տես, թե գրողն ի՞նչ մարդ ա...

Միգին ագահությամբ վրա թուով թղթին:

— Ձենով կարդա, ա Միգ շան, յես ել իմանամ, ինչ կա գրած, — խնդրեց Անտոնը:

— Հնա, լավ ա ասում, ետ խեղճն աշխարհիցս կտըրված, բանից բեխաբար ա, կարդա, թող իմանա, — հեղճեց Կուպրը և աչքով արտով Անտոնին, վորն այլայլեց:

Միգին բարձր ձայնով կարդաց թուղթիկը, ամեն մի խոսքին յուրահատուկ շեշտ տալով:

— Ա՛խ, ա գրող, յարար մեռնիլ չեմ, աչքս բաց քեդ կրտենամ... Եսա գրել հնա, Եսա իմ սրտի միջիցը խոսում հնա... Եսա ջիգյարս քրքրում ա հա՛... բա ես թուղթը կարդացողը, սրա զորութիւնն իմացողը, սրա գրողին ձեռք կրտա, բա ձեռը չորանալ չի դռիցը կըպչի... Երնակ մի գիղենամ տեղը, գնամ ձեռը պաչեմ, դնեմ ճակատիս... Ընթերցումը վերջացնելով թախծալի ասաց Միգին:

— Թե շատ ա սիրտդ ուզում, հենց ես իրիկուն քեդ տանեմ ետ թուղթը գրողներից մեկի կուշտը, կես լուրջ կես կատակով ասաց Կուպրը:

— Ե՛հ, շաշ մեռնես դու, ամեն բան ել շաշութենի յես տալի. սա հանաք—մասխարութենի բան ա, ես գրածին տղա յա պետք, վոր դիմանա, սա կուլի բան ա, Սուլումոնի գինին հո չի, վոր լակես ու պար գաս...

— Գինին ել կրխմեմ, ետ բանն ել կանեմ, չե, քեդ պես կըգամ ցրտումը դարավուլ կկենամ. շաշը դու յես, գնա, վոր սաղ գշերը շան պես ցրտիցը կոնգոռնացել ես, առանց հասկանալու, թե ընչի, կամ ո՞ւմ համար... Համա յես համ ետ թուղթն իմ կարդացել, համ ել հարսանի-

քումը քեֆ արել: Գեղ բան եմ ասում, թե հաստատ խոսք կըտաս յեկ քեդ իմ կուպրի կարասումը բալշենիկ մկրտեմ ու ես դիշեր ել ծանոթացնեմ ետ թուղթը գրող բալշենիկի հետ կըգամ... պնդեց Կուպրը:

— Կըգամ, համա թե ասածդ սուտ դուս գա, միսդ շան փայ կըշինեմ:

— Բա վոր դու կես ճամբիցը յես դառնամ...

— Ենքան տուր, վոր հորըս հարսանիքը միտս ընկնի:

— Լնվ, ասաց Կուպրը, ապա դարձավ Անտոնին.

Անտոն բիձա, դու վկա,  
ես մեր Միգին կա ու կա,  
թե ուրիշն ել յես ճարեմ,  
սրա փեշից կըկարեմ...

Անտոնը բոլորովին խելքը կորցրել եր: Նա հազիվ Գլխով դրական շարժում արավ միայն:

— Դե, գնանք, թե ուզում ես քեդ լավ-լավ բաներ պատմեմ մինչև տուն հասնելը, թե չե հու Ավետիսիդ շատ ես կարոտել, Կուպրը նրա հետ զրից չի անիլ, նա վոր ես կարոտել, Կուպրը — ձուր ա տեսնում — ձուրն ա դառնում, ցամաք ա տեսնում — գորտ, ասաց Կուպրն ու առաջ շարժեց:

— Անտոն բիձա, տեսնում ես, ես շաշի՞ն, գարմանքով ասաց Միգին:

— Շաշ ես ասում, ա՛յ վորդի, շաշ չի, շաշացնող ա:

— Հը... գալիս ես, թե չե... ետ թուղթն ել ինձ տու, թե չե կըտանես կտաս կոմիտեյին, կասես Կուպրը քեդ տվուց, յես շաշ գլուխս կազատեմ, համա դու քո խելոք գլուխը կըկը կըզցես:

— Կնց, կնց, գալիս եմ, ա՛յ Կուպրը տալի մտած, գամ տեսամ ել ինչ յես ասում, — ասաց Միգին և քայլերն ուղղեց դեպի Կուպրը:

Անտոնը յերկար նայեց հեռացողների յետևից, ապա մտքերի ծովն ընկած, գլուխը թափահարելով յետ դար-

ձափ, մտափ ջաղացը, մի լավ ծրագրելու համար, թե ինչպես անի, վոր գիշերը Արմենի մոտից յեկող մարդը ծուղակը չընկնի:

## IX

Գիշերը վրա հասավ: Անտոնը բուխարու մոտ նստած մտքերի հետ կռիվ տալով յերբեմն ննջում էր, յերբեմն վեր թռչում սարսափած, թե չլինի յեկողն արդեն յեկել է. իսկ վոր գլխավորն էր, նրա մտքից չէր հեռանում Կուսըրը: Ախրը ո՞վ է Կուսըրը, ինչ կապ կարող է ունենալ նա բուշեփկներին հետ: Ճիշտ է, նա շատ քաղաքներ է ման յեկել, շատ մարդ է տեսել, բայց շաշը ինչքան էլ ման գա, ինչքան էլ բան տեսնի, ելի են շաշը կմնա, ես մեկ յերկրորդ էլ՝ բուշեփկը նոր բան է, Կուսըրը շատ ջահել ժամանակներն է քաղաքից քաղաք պտտել, սրա-նրա մոտ աշկերտութուն արիլ, կամ տանը ծառայել: Գլխին ենքան բամբել են, վոր էլ մեջը բան կմնար... Մի գուցե շաշ չի սուտ շաշ է ձևացնում, վոր սրա-նրա աչքերը կապի...

Անտոնն եսպես վեր էր լուծում Կուսըրի անցյալը, ներկան, նրա ասածներն ու պարերը, մտքումը նրա արարքները բաժանում էր լավի ու վատի, խելոքի ու հիմարի և չէր կարողանում վորոշի, թե վորն է շատ, վոր կողմն է գերակշռում: Ահա ես տեսակ մտածմունքներէ մեջ էր, յերբ գուռը թակեցին:

— Ո՞վ ես,— սրտի ուժգին բաբախումը հագլով կառավարելով՝ տեղից վեր թռավ Անտոնը:

— Յես իմ Անտոն բիձա, գուռը բաց արա:

Միգին էր:

— Խեր ըլի ա Միգ ջան, ինչ կա,— գուռը բանալով ներս հրավիրեց Անտոնը Միգինին:

Խեր ա, յես շատ բանի ման եկող մարդ չեմ, յեկել եմ, թե մի քիչ տաքանամ. ետոր Ավետիսին տանը թողեցինք, հիմի յես ու Չատին ենք զարավուլ քաշում, մին-

չև կես գիշեր յես եմ տաքանալու, հետո էլ կգնամ, Չատին կգա, ասաց Միգին:

— Հա, լավ ես արել, դե նստի, նստի, պատմի, թե գեղումն ինչ նոր բան կա:

— Վոչինչ, նոր բան չկա, սաղ գեղը հարսանիքիցն ու են թղթերիցն ա խոսում: Ետ Կուսըրը մեռածը միքանի հատ էր թղթերիցը սրա-նրա ձեռն ա գցել, հրեն վոնից վոր յես եմ տեսնում, սաղ գեղը հեղափոխվել, բալշենիկ ա ուզում:

— Քն խելքն ինչ ա կտրում ես բանիցը, քն խելքը, անհանգիստ հարցրեց Անտոնը:

— Իմ կարճ խելքն են ա կտրում, վոր գործը բալշենիկի տարած ա, ու ով վոր խելք ունի, թող որ առաջ էր գլխի ճարը տեսնի. ով քյասիբ ա, թող անց կենա նրբանց կողմը, ով հարուստ ա, թող կարողութենն ինձ քեզ կտակ անի, հոգին սատանին պահ տա,— վճռական անուով ասաց Միգին, կարծես համոզելու համար Անտոննով ասաց Միգին, կարծես համոզելու համար Անտոնին, վոր ինքն անվերադարձ կերպով վորոշել է անցնել բալշենիկների կողմը:

— Հիմի վոր մինը գա ու քեզ ասի, թե արի գնանք բալշենիկի մոտ, կգնան:

— Կըգնամ... հալա հարցնում էլ ես, հենց կգնամ, վոր դրա յես էլ չեմ մտիկ անիլ:

— Բա տուն ու սեղո, կնիկ, երեխեք...

— Տեսչեն, հո չեմ գնում, վոր կորչեմ. գնում եմ, վոր յես գամ եզ ո՞՞՞ ճուտերին կտորեմ, վոր վզներին փաթաթված խեղդում են:

Այդ միջոցին ներս մտավ Արսենը, հագուստը փոխած իսկական գյուղացու շորերով, հագին տրեխներ, գլխին մի մեծ փափախ, ուսին մի խուրջին: Չաղացի գուռը բաց էր և Արսենը գիտեք արդեն, վոր Չաղացում Անտոնից գատ, ուրիշ մարդ էլ կա:

— Բարի իրիկուն ձեզ,—վողջունեց Արսենը քիչ ձայնը փոխած:

— Բարով, հազար բարի յես եկել, ով վոր ես, պապասխանեց Անտոնը, վորն առաջին հայացքից չճանաչեց Արսենին: Մոտ արի, խուրջինդ ցած դի, տաքացի, մըրսած կըլես:

Արսենը խուրջինը ցած դրեց, ապա մի քննական հայացք գցեց Միգինի վրա ու մոտեցավ կրակին:

— Բեռդ ինչ ա, այ ախպեր,—հարց տվեց Անտոնը:

— Բեռս աղուն ա, այ բերել եմ, վոր աղամ, մեր գեղի ջաղացը խարաբ ա,—պատասխանեց Արսենը և շեշտակի նայեց Անտոնին, վորը նոր ճանաչեց խոսողի ով լինելը:

Անտոնը թեև քիչ շփոթվեց, բայց ինքն իրեն հավաքելով, ժպտադեմ ասաց Արսենին.

— Թե շատ վռագ ես, ջաղացի ջուրը կապեմ, աղունդ արա, առ գնա:

— Շատ լավ կանես, Անտոն բիձա, աղունս վրեն ածա, չե, դու նեղութիւն մի քաշիլ, յես վրեն կածեմ, դու գնա ջուրը կապի:

Արսենը վեր կացավ, բաց արեց խուրջինի բերանը, աղունի մի մասն ածեց ջաղացի տաշտը, ու մինչև Անտոնի գալը խոսք բաց արավ Միգինի հետ.

— Ախպեր ջան, անունդ ի՞նչ ա, վորտեղացի յես, եղպես գինված, իսկի ջաղացավորի չես նման:

— Անունս Միգի յա, յես ես վերի, Անտոն բիձու գեղացի յեմ, դրուստ ա, ջաղացավոր չեմ, ես ներքի մեծ ճամփի վրա դարավուլ եմ: Երեկ չե, մեկել ուրը մեծ ճամբի վրա բալշենիկի թուռցիկ են շաղ տվել, հիմի կոմիտեն վորոշել ա, վոր հերթով դարավուլ քաշենք, բաղքի մի կասկածավոր մարդ բռնենք. եզ բանին եմ. հիմի հրեն ընկերս, մեր Չատին դարավուլ ա, յես ել եկել եմ տաքանամ, վոր կես գիշերին գնամ, վոր նա գա տաքանա:

— Հն... լավ բանի յեք. շատ ել լավ եք անում...

Չաղացի քարն սկսեց դժգոհությամբ խրխուռլ, կարծես բողբոջելիս լիներ, վոր հանգիստը խանգարեցին: Ապա հետզհետե արագացրեց իր ընթացքը, Անտոնը ներս մտավ ու դառնալով Արսենին, ասաց:

— Ախպեր, ով վոր ես, ամոթով եմ մնալու քեզ մոտ. կարող ա սոված ըլես, համա ուտելու բան չունեմ:

— Վնաս չունի, Անտոն բիձա, թուրքը մի խելոք խոսք ունի եզ մասին. ասում ա—«ուշ յեկած դոնադն իր ջեբից կուտի»»: Հրես ջաղացն ալիք կանի, դու ել կրկենի կթխես, կուտենք:

— Դու իմ ով ըլելը հարցրիր, ախպեր, հարցնելն ամոթ չըլի, անումդ ինչ ա, վոր գեղիցն ես,—հարցրեց Միգին:

— Անունս Արսեն ա, Դովշանլվեցի յեմ, մի անհայտ մարդ եմ, վոր մեր գեղումն իսկի ինձ մարդատեղ գնող տեղս հարցնող չկա: Եզ ինչ դու քիչ առաջ պատմեցիր բալշենիկի թուռցիկի մասին, եզ թուռցիկիցը մեր գեղն ել աս հասել, ենտեղ ել են դարավուլ դրել գեղի մեծ ճամբի վրա...

— Խալխն ինչ ա ասում, խալխը,—խոսքն ընդհատեց Միգին:

— Ի՞նչ պտի ասիլ. շատ համաձայն են գրածների հետ:

— Հրետ ետ եմ ասում ե...Մի հալա մեր գեղացոնց ել հարցրու, գիտի բալշենիկ են դառել,—վողկորված ասաց Միգին:

— Յերևում ա, վոր դու ել ես բալշենիկ դառել, մեր տղա, յեկել ես, թե բալշենիկ բռնես,—հեգնեց Արսենը:

— Յես թե ես ուր եմ յեկել, հրես քիչ հետո դու կիմանաս, կաց մի մեր կուպըը գն... քիչ նեղացած պատասխանեց Միգին:

— Կուպըը... հն, հն, հն, հն... նն ինչ բան ունի ըստեղ, են շաշ ծալը պակասը...

— Խի՛, Կուսարին դու ել ես ճանաչում, դարմացած հարցրեց Անտոնը:

— Կուսարին ո՞վ չի ճանաչում, մի շաշ ա, մի սաղ յերկիր:

— Շաշ գիտե՞ք ե, ամենքդ ել, մի ետոր հետս ըլե-  
յիր ու տեսնելիր ինչ բաներ ա պատմում, մարդը թա-  
մամ խելոք ա յե, թամամ, քիչ ել չի...

— Թե ձեր խելոքը նա յան... վայն եկել ա, ձեր գեղի  
գլուխը տարել, քմծիծաղելով ասաց Արսենը, ապա դար-  
ձավ Անտոնին. — Անտոն բիձա, տես, աղուհը կարծնի. շու-  
րը կտրի, խմոր հունցի, կրկենի թխի:

Անտոնը սարգ ու կարգ արավ խմորի համար և ինքը  
դուրս եկավ շաղացի շուրը կտրելու: Հենց ես միջոցին  
լավեց Կուսարի պարերգի ձայնը, վորը մոտենում եր շա-  
ղացի դռանը:

— Ըհը, հրես Կուսարը գալիս ա, դե, դու խոսացրու  
բալշենիկներից ու տես, թե ինչեր ա պատմում, պար-  
ձանքով ասաց Միդին Արսենին:

— Լավ, թող քու ասածն ըլի:

— Ա՛ Կուսար մեռած, ելի յեկա՛ր, հարցրեց Անտոնը,  
վոր շաղացի շուրը կտրել և իջնում եր:

— Յեկա չե, յեկանք. ես յես, ես Չատին, սա ել ա իմ  
հավատին. յես պար կգամ, սա ծափ տա, Անտոնի քուր-  
քը թափ տա:

Ներս մտան:

— Ոհն՛, Անտոն բիձա, զոնաղ ել ունես. ես ով ա...  
հն՛... բարով, բարով, Արսենն ա, ես ել Միդին, դուշմանո  
ել չմնա քո ումիդին, ասաց Կուսարը և նստեց Արսենի  
կողքին:

— Ա՛յ աղա, բա ես ճամբեն անտեր թողել, յեկել  
ես, վոր մի բան պատածի. ո՞վ ա շուղաբ տալու, զսպված  
գայրույթով ասաց Միդին:

— Չուղաբը յես կտամ. մեջ մտավ Կուսարը. սա մարդ  
չի՛, սա տաքանալ չի ուզում...

Ա՛ Կուսար փչացած, գեղիցը մարդ կըգա...

— Չենդ կտրի, գեղի կեռը քնած ա, կեսն ել հրեն  
հարսանիքումը հարբած, — ասաց Կուսարը և դարձավ Ար-  
սենին. — դե, ընկեր Արսեն, բոխչեդ բաց արա, ինչ ասե-  
լու յես, ասա, վոր ամենքս ել բան ու գործի տեր մարդ ենք:

Արսենը նայեց Կուսարին և ակնարկեց Միդինի և Չա-  
տինի վրա:

— Հն՛, սրանք յերկունն ել իմ կուսարի կարասումը  
մկրտված են, դու ասելիքդ ասա, — պնդեց Կուսարը:

Անտոնը սառած կանգնած եր մնացել տեղում. նա չի  
իմանում ես բոլորի համար լաց լինի, թե ծիծաղի: Նա  
կարծես կամաց-կամաց ճանաչում եր Կուսարին:

— Ե՛յ, Միդի, յես քեզ խոսք եմ տվել, վոր ետոր մի  
բալշենիկ շանց տամ, դու յել խոսք ես տվել, վոր եդ բալ-  
շենիկն ինչ վոր ասի, անես, ուր վոր դարկի գնաս, դրուստ  
ո՞, — հարցրեց Կուսարը:

Դրուստ ա, խոսքիս տերն եմ, — մենակ թող դա մի տես-  
նեմ ո՞վ ա, ինչ կերպարանք ունի, — վճռական ասաց Միդին:

— Լավ, մի քիչ համբերի: Ա՛ Չատ, դու յել ես խոսք  
տվել, խոսքիդ հաստատ ես:

— Գլխով վոտով պատրաստ եմ, — ասաց Չատին:

— Լավ: Դե, ձեզ մի բան ել ասեմ. ես գործին գնա-  
ցողը պետք ա հերն ու մեր, քիր ու արսպեր, ազգական —  
բարեկամ չճանաչի. ով մեզ հետ չի, մեզ հակառակ ա, ե-  
ղուց-ելոր վոր մի բան պատածի, բալշենիկի ծրագրին դա-  
վաճանեք, թեկուզ ինձպես տասը Կուսար ել բռնեն, կոտո-  
վաճանեք, թեկուզ յեկած որը, ձեր գլուխը սոխի  
րեն, դիփ մեկ ա, բալշենիկն եկած որը, ձեր գլուխը սոխի  
պես կթոցնեն, սխտորի պես կջարդեն, միսներդ աղցան  
կշինեն: Լավ իմացեք հն՛... ձեզ հետ խոսողը Կուսարը չի,  
շաշ Կուսարը. իմացա՞ք:

Կուսարի գեմքն այնպես լուրջ տեսք ուներ, վոր սար-  
սափ եր ազդում:

— Իմացանք, — խորհրդավոր կերպով պատասխանեցին Միգին ու Չատին:

— Մի բան էլ ասեմ: Հավատում եք, վոր բալշենիկի ուժը մեծ ա, գորավոր, վոր գալու յա, թե չեք հավատում, լափն ենա գնաք ձեր բանին, — պնդեց Կուպրը:

— Ի՞նչ ես գլխներիս գելի ավետարան կարդում, յես քեզ ինչ ասել եմ, ասել եմ, տղամարդը խոսքը մի անգամ կասի. քեզանից բալշենիկ եմ ուզում ես սհաթիս, բալշենիկ, — պնդեց Միգին:

— Դե, վեր կացեք թվանքնիդ վեր կալեք ու ինձ աղաք արեք, տարեք, տվեք կոմիտե—Մեխակին, ասեցեք բալշենիկը հենց ես Կուպրն ա, վոր կա. ը՛հը՛, ես ել նրանց թղթերը:

Այս ասելով Կուպրը ծոցից հանեց բալշենիկյան թուղիկներները և դեմ արավ Միգինին ու Չատինին:

— Բալշենիկը յես եմ ու ես Անտոն բիձեն. ես ճամբի փռած թղթերը—սա յա փռել, մի եղբան ել յես եմ սրա-նրա ձեռով շաղ տվել հեռու-մոտիկ գեղերումը:

Անտոնը սփրթնել եր: Արսենը լուռ նայում եր Միգինի ու Չատինի դեմքերին, վորոնք անակնկալի հանդիպած՝ չգիտեյին ինչ զիրք բռնեն:

— Դե, վեր կացեք, է, ի՞նչ եք տափիցը կպել, հազիր ձեզ փող ել կբախշեն, — կրկին պնդեց Կուպրը:

Տիրեց մի խորհրդավոր լուռթյուն:

— Ի՞նչ եք պապանձվել. ասացեք, մեզ հետ եք, թե չե... Հալա միտք եք անում... Ես վոր հալա խոսքի վախտը գլուխնիդ քաշ եք գցում, բա գործի վախտն ինչ եք անելու. մեծ-մեծ բրդելը հեշտ ա, դե բրդածը կերեք, է...:

— Դե, հերիք ա, ինչքան անպատիվ արիր է... ը՛հը, ես իմ, ես ել Չատինի թվանքը, սո, թե ես թվանքնին բալշենիկի վրա տրաքեն, թող մենք մեջներկցա տրաքվենք. ես ել մի նամուս չի, վոր մենք մեր փափախի տա-

կին պահում ենք: Ե՛յ, ս Չատ, ինձ արին խմող Միգի կասեն, թե հետս գալու չես, հիմիկվանից գլուխդ առ, կուպրի, ասաց Միգին ու հրացանները դեցեց Կուպրի առաջը:

— Աֆֆերիմ տղա, Չատի, դ՞ու ինչ կասես, հարցրեց Կուպրը:

— Վորտեղ Միգին, ենտեղ ել յես, — վճռական ասաց

Չատին

— Դե, բալշենիկը հանի, — պնդեց Միգին, մենակ դու բոլ չես:

— Դե, լավ մտիկ արեք, բալշենիկը հանում եմ, — ասաց Կուպրը և ձեռքը մեկնեց դեպի Արսենի փափախը, գոչելով. «սլլե, հոպ», բալշենիկն ես մոթալ փափախի տակին ա, լավ մտիկ արեք: Ու փափախը վերցրեց:

Արսենն ակամայից ծիծաղեց:

— Մա յա... հիասթափված հարցրեց Միգին:

— Հավան չե՞ս... ի՞նչ ա, հենց գիտեյիր, թե քո տեսած գեներալի պես շարվարիցը կարմիր կարած պաի բլիբ, թե ճակատին կակարդ, հազին ել չեք-մեք ու զրնգան մեթե ճակատին կակարդ, հազին ել չեք-մեք Կուպրը: Բալշենին սյ, խերը դաբանիցը կպցրած, հեզնեց Կուպրը: Բալշենին սյ, զիփ ես դայդի յա, վորը տրեխով գեղացի, վորը մրի մեջ կորած բանվոր, դրա համար ել նրանց իշխանութիւնը կոչվում ա բան-վոր-ա-գյու-ղա-ցի-ա-կան... մինի ձեռին մանվոզ, մինի ձեռին չաքուձ, մանգեղով գեղի հարուստներին հնձում են, չաքուձով ել Մանթաշովի պես—բանվորների հարկները լափողները գլխին ծեփում... Լավ մտիկ, արին-քրտինքը լափողները գլխին ծեփում են, մե-տես ինչ տղա յա, սրա պես հարիր հաղաբներ կան, մե-նակ չի:

— Ես թուղթը գրողը դու յե՞ս, — անվստահ ձայնով ու տարակուսած հարցրեց Միգին:

— Մենակ յես չեմ, ընկեր, մի քանի հոգով յենք գրել մենք մենակ մի հոգով գործ չենք բռնում, ամեն բան մասլահաթով, խորհրդով ենք անում, — պատասխանեց Արսենը:







Հեռվում, մեծ ճամբի վրա, ուր հսկում էին Միզին ու Չատին, մի սայլ կանգ առավ: Քիչ հետո, սայլի վրա բարձած տոպրակները շալակած՝ ութ հոգի մոտեցան Չաղացի դռանը, բաղխեցին:

— Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես.—հարցրեց Անտոնը տեղից վեր թռչելով:

— Բնց արա, շնուտ, Արմենի մոտից ենք գալիս:

Անտոնն անմիջապես դուռը բաց արավ: Ներս մտան բեռնավորված մարդիկ, լուռ անցան դեպի Չաղացի խորքը, տոպրակներն իրար վրա դրին ու անմիջապես հեռացան, առանց վորևե խոսք ասելու: Անտոնը նրանցից և վոչ մեկին չճանաչեց:

Չաղացի դուռը փակելով՝ նա մոտեցավ տոպրակներին շոշափեց: Ցորենով լի պարկեր են: Ի՞նչ հանելուկ է սա. ովքեր էյին, ինչո՞ւ բերին, ինչո՞ւ վոչ մի բառ չասացին. դուքե պարկերի մեջ մի ուրիշ բան կա... Անտոնը նորից ստուգեց. չէ, ցորեն է, նա մինչև անգամ պարկերից մեկի կարը քանդեց մի քիչ, վորտեղից թափվեցին խակահան կարմիր ցորենի հատիկներ: Ի՞նչ անի ութ պարկ ցորենն Անտոնը. աղա, պահի, ի՞նչ պատասխան տա Սոյոմոնին, յեթե հանկարծ վրա հասնի ու հարցնի, թե ո՞ւմ են, ո՞վ է բերել, վորտեղից, ով է տերը...

Անտոնի ջանը դող ընկավ, սրթսրթում էր, ներքևի ծնոտը չեր հպատակվում կամքին, ատամներն անընդհատ չխկչխկում էյին: Ի՞նչ անի... Թագցնի,—անցավ նրա մտքով. բայց վորտեղ. ցրթոնի տակ. կթրջվեն, կհչանա ցորենը: Դատարկի մեծ կոտի մեջ. մենակ է, չի կարող... Նրան թվաց, թե ով-վոր մոտեցավ Չաղացի դռանը. վոտնաձաձայն լսեց. դուռը բաց անի, թե չէ... Ականջները սրեց Անտոնը. ձայն չկա. կարծես մի քանի հոգի թմփթըմփալով անցան Չաղացի կտրով... Սա ի՞նչ փորձանք էր, վոր իր գլուխն եկավ... Տեսիլքի պես յերևացին ութ հոգի, վո-

րոնք մըջյուզների նման շալակած իրենց բեռը բերին ու դարսեցին անա այստեղ: Սորհրդավոր լությամբ դարսեցին ու հեռացան, չքվեցին, աներևութացան: Ելի գալու յեն, թե վոչ... Արմենի անունը տվին, ուրեմն՝ բուշիկներ են... Չարմանալի յե, դեռ թուղթ բերին, հիմի յել ցորեն, սրանցով են կովելու...

— Բնց արա դուռը, շնուտ,—լսվեց դրսից:

Անտոնի լեզուն կապ ընկավ: Նա մինչև անգամ չի յել կարողանում հարցնի, թե ով է:

— Քեզ եմ ասում, շնուտ բաց արա դուռը,—ստիպողաբար պնդեց ձայնը:

Անտոնի ականջները թշուրմ են, նա չի կարողանում ձայնից ճանաչել կանչողին:

— Քնե՛լ ես, թե քառացե՛ր, քեզ եմ ասում Անտոն քիձա, դուռը բաց արա, յես եմ, կուպըն եմ:

Անտոնը կարծես խորը քնի միջից նոր արթնացավ: Դուռը անախորժ ճռուցով բացվեց: Իսկ վոր կուպըն է:

Ի՞նչ էս կարկամել, գլուխդ կորցրել. ետ ա՛ քու բալ-չենիկութի՛նը...

— Յես... յես...

— Դեսն արի,—հրամայեց կուպըը:

Նա Անտոնի թևից քաշելով՝ մոտեցրեց պարկերին, գրպանից մի դանակ հանեց, կտրտեց պարկերի կարերը: Ցորենն սկսեց հոսել գետնին:

— Ափ...ափ...տոս ա... հազիվ արտասանեց Անտոնը:

— Սո՛ւս կաց, բռնի, դենը դի ես յաշիկը, կրակից

հեռու,—հրամայեց կուպըը:

Անտոնը վերցրեց ցինկից շինած փոքրիկ արկղը, վոր բավական ծանր էր ու մի կողմ դրեց: Ամեն մի տոպրա-կից յերկու նման արկղ հանեց կուպըը: Ապա նրանցից յերեք հատ դարսելով դատարկ տոպրակներից մեկի մեջ, շալակեց ու դուրս յեկավ:

Անտոնը դեռ չէր կարողացել իրեն հաշիվ տալ, թե ինչ կարող է լինել ցինկից շինած արկղների մեջ, յերբ Կուպրը կրկին վերադարձավ ու շունչը հազիվ պահելով՝ մի յերեք հատ ել տարավ: Յեվ այսպես, մի քանի ճամբում արկղիկները շաղացից հանեց Կուպրը, ու յերբ գործըն արդեն վերջացած էր, նա տուրակները ծալեց, վերցրեց ու Անտոնին կարգադրեց.

— Են ցինկի յաշիկներինը պատրոն ա. ես ցորենը կամ դեն ածա, կամ հենց տեղ պահի, վոր մուկն ել չիմանա տեղը. ետ բերող մարդիկը մերոնցից են, բայց նոր են, դեռ լավ չեն սկսված կարասիս սեջ, ո՞վ գիտի մեջները կարող ա մուխաննաթ, մասնիչ մարդ ըլի, մասնի, կամ սարսաղ-մարսաղ դուս տա խալխի միջին. պատրոնները հրեն պահել եմ Սոլումոնի խոտի դեղի տակին, թե բան ա, ինձ մի փորձանք պատահի. Արսենին կամ Արմենին տեղը կասես, Միդինին կամ Չատինին պատրոնի տեղը չասես հա... Հիմի յես եսա գնում եմ, առավոտը լուսը չբացված շաղացի դռանը մոխիր շաղ կտաս, վոր վոտների տեղը չերևա, միթոմ մարդ չի մտել շաղացը, ոչով չի յեկել, ինձ ել չես տեսել:

Կուպրը համարյա խոսքը կիսատ՝ դուրս թռավ շաղացից:

Անտոնը մնաց մենակ: Այնպիսի գլխապտուռյա արագությամբ տեղի ունեցավ այս ամենը, վոր Անտոնը չբերտեր վորի մասին մտածի, վորն էր ավելի հանելուկային ու խորհրդավոր՝ մարդիկ թե Կուպրը... Բայց նրա աչքի առաջ փռված ցորենն ավելի ոյալ էր: Ի՞նչ անի... բաց առնի ցրթոնը ամբողջը թափի ջրի մեջը, ափսոս է, ցորենը լավն է, խոշոր, կարմիր գարգա ցորեն է, ենքան սոված մարդ կա, վոր յերազում ցորենի հատիկ տեսնելիս վեր է թռչում, նա վոնց թափի գետի մեջ, ձկների բաժին դարձնի: Չե, թեկուզ կախեն ել՝ Անտոնը ցորենը ջուրը չի

թափիլ: Նա շտապով վերցրեց կրկենի հունցելու տաշտը, լցրեց ու բարձրացնելով՝ թափեց դատարկ մեծ կոտի մեջ: «Կասեմ իմն ա, ու պրծավ գնաց», թե վորտեղից կամ ինչպես, նրանց բանը չի,—վճռեց իր մեջ Անտոնը և մինչև անգամ ուրախացավ, վոր յեթե իրեն տանջելու յել լինեն ցորենի պատճառով, ինքն ուրախ կըլինի, թեկուզ հենց նրա համար, վոր մասնակից է լինում բայլչեիկների գործունեյությանը:

Յորենն այնքան ել շատ չէր, պարկերը փոքր էյին: Անտոնը վերջացնելով աշխատանքը, գետնին թափված, հողակուղ հատիկներն ավլեց, ապա ցրթոնի տախտակը բարդակուղ հատիկներն ավլեց, ապա ցրթոնի տախտակը բարդացնելով՝ թափեց ջուրը: «Ես ել թող ձկներն ուտեն ու բայլչեիկ դառնան» — ինքն իրեն ասեց Անտոնն ու մտքում ծիծաղեց:

Կես գիշերն անց էր, բայց Անտոնն ինչ արավ-չարավ չկարողացավ քնի. քունը չի տանում. հազար ու մի տեղակարողացավ քնի. քունը չի տանում. հազար ու մի տեղակար շլթայի նման գալիս սակ մտքեր իրար ողակված՝ յերկար շլթայի նման գալիս եյին ու անցնում: Պարապությունից ու անքնությունից ստիպված՝ նա հավաքեց ոջախի մոխիրը, լցրեց կես խանի մեջ ու պատրաստվեց դուրս տանելու, վոր ինչպես պատվիրել էր Կուպրը, թափի շաղացի դռանը:

Դուրսը նոր ձյուն էր դրել. գետինը կարծես կարկառու առաջ հին շոր լինի, տեղ-տեղ սպիտակ, տեղ-տեղ սև: Անտոնը բավական առաջ շարժվեց, մոխիրը շաղ տվեց, ապա կրկին յետ դառնալով նորից լցրեց կես խանը և յետ ու յետ գալով՝ շաղացի դռան հրապարակն ու ճամբի մի մասը ծածկեց մոխրով:

Լուսաբացը մոտ էր: Անտոնը կրակը վառեց, կրակի լույսն ընկավ կոտին ուր ցորենն էր: Անտոնը նորից բուսեց անհանգստանալ. «բա հիմի վոր գան ու բռնեն»...

— Բարի լուս Անտոն բիձա:

Անտոնը շփոթված յետ նայեց: Նա մոռացել էր շաղացի դուրը փակի:

— Բարով եկար Ավետիս ջան, խեր ըլի, եսպես վաղ, հազիվ իրեն հավաքելով պատասխանեց Անտոնը:

— Խեր ել ա, մի քիչ խեր ել չի, Անտոն բիձա.— ա-սաց Ավետիսն ու ներս մտնելով՝ ուղիղ անցավ կրակի մոտ:

— Ի՞նչ կա վոր...

— Դրուտտ ասա Անտոն բիձա, ես գիշեր Միգլին կամ Չատին շողաց չեն յեկել, հարցրեց Ավետիսը խորամանկ աչքերը պրպտացնելով և միրուքը սղալելով:

— Չե: Ի՞նչ կա վոր...

— Ուրիշ մարդ ել չի յեկել...

— Չե: Մի ասա տեսնեմ ի՞նչ ա պատահել է...

— Ինչ պտի պատահիլ, երկուսին ել բռնել են, քիչ եր մնում ինձ ել բռնեյին, ենքան բախտս քաշել եր, վոր տանն եյի ու դարավուլ չեյի. հիմի յեկա, թե քեզանից իմանամ գիշերս հո շողաց չեն յեկել տաքանալու:

— Չե, չեն յեկել, չեն յերևացել. բայց մի ասա, ինչի՞ համար են բռնել:

— Ես գիշեր թուրքերի սահմանից մի չորս ակնանի ֆուրգոն թե սել ա մտել մեր սահմանը. եդ սելը թե ֆուրգոնը յեկել հասել ա մինչև են տեղը, վորտեղ Միգլին ու Չատին դարավուլ են ու ել յետ յետ ա դառել, անփորձ ափսաս մտել թուրքերի մեջ: Առավոտս լուսը դեռ չբացված կոմիտեն մարդ ա դարկում. թե իմանա դարավուլները հո քնած չեն. եդ մարդը գալիս ա, ու նոր ձյունահետով գտնում սելի, թե ֆուրգոնի ական կտրած տեղերը: «Ի՞նչ սել ա, ումն ա, վոնց ա յեկել ու գնացել» — հարց ու փորձ են անում, ես Միգլին ու Չատին ուրանում են, թե իրանք վոչ մի բան չեն տեսել. յետ են դառնում, գրնում թուրքի սահմանը, ենտեղի դարավուլներին հարց ու փորձ անում, նրանք ել են ասում, թե իրանք ճամբովն անցնող սել ու ֆուրգոն չե վոր, իսկի ծիտ ել չեն տե-

սել: Հիմի բանն են ա, վոր թուրքի սահմանումը միշտ խումբի տղերանցից են դարավուլ ելել. իսկ ես գիշեր, թարսի պես մեր ես մոտիկ Սիմլու գեղի տղերանցից երկու հոգի յեն ելել: Նրանց ել են բռնել, հրեն դալումը նստած: Փիս բան ա դառնալու, փիս, — գլուխը թափահարելով վերջացրեց Ավետիսն ու հոգոց արավ:

— Բա հիմի խելքդ ի՞նչ ա կտրում ես բանիցը, հարցրեց Անտոնն անհանգիստ:

— Ըսկի, վախում եմ տղերանցը կոտորեն. գուր տեղը հետները չեկա. միտդ ա, երեկ գիշեր ինչ ճառեր ասեցին հենց ես սջախի ղրաղին... թամամ բալշեկիկ ճառեր... Սլըր ասա քյասիը տղա յես, քու ցավին կաց, ինչ գործ ունես բալշեկիկ հետ է... Դու սվ, բալշեկին սվ...

«Իմ սրտին աղ ես արել  
Չիգյարըս դաղ ես արել  
Ինձանից հեռացել ես —  
Ինձ բեզամա... սղ ես արել»:

... Տար նի նայ, տիր-նա-նի նայ,  
Տայ-նա-նա-նա... ս... ըլի նա-նայ...

Կուպրի ձայնն եր: Նա յերգելով ու պարելով գալիս եր դեպի շողացը:

— Յարաբ, մարդ իմանա, թե ես շաշն ինչ բան ունի ես վախտիս ես կողմերում, վոր աչքերի ճպուռը չըսրբած՝ յերգ ա ասում ու պար գալի իսկի մարդու ցավ վույթին գուր չեկալ կուպրի յերևալը:

— Ե՛... խեղճ ու կրակ տղա յա, գեղից — շողաց, շաղացից — գեղ վազ ա տալիս, վոր մի կտոր հաց ճարի, գլուխը պահի իս յես նեղանում Ավետիս ջան, — պատասխանեց Անտոնը, լավ չմբռնելով Ավետիսի դժգոհության պատճառը. վորի գործը հավանորեն փչացնելու յեր կուպրը:

— Ե՛ջ ես առել, Անտոն բիձա, վոր եսքան մոխիր ես փռել Չաղացի դռանը,— փոտով ու ձեռով մոխիրը շաղ տալով ասաց Կուսարն ու մտով Չաղացը:

— Բարի լուսը ինձ լսողին, ցավ ու պատիժ սուտ խոսողին,— ասաց Կուսարն ու աչքերը վորորեց Ավետիսի վրա:

Ավետիսը բարեկին չպատասխանեց:

— Ետ վոնց ա քեզ չեն բռնել, Ավետիս դայի. դու դարավուխների մեծավորը չեյիր... Թե՛... Մեծը-մեծ ցավի դա, պուճուրը-պուճուր... Գեղ պատժել են, վոր Չաղացումը նստես:

— Յես վոր ես գիշեր հեռները յեկել եյի, նրանց գլուխն ետ ոյինը գալ չեր,— գլուխը գովեց Ավետիսն ու ածխակոթն առաջ գցեց, վոր կրակը թեժանա:

— Թե՛ գեղիցը փախել ես, վոր չբռնեն:

— Ի՞նչ ես շաշ-շաշ դուս տալի, ինձ բռնողը հալա չի ծնվել:

— Հագար թալակից փախած մարդ ես, իսկի կարանք քեզ բռնեն վո՛ր...

— Խոսքիդ չափը ճանաչի, վոնց թե թալակից փախած,— վիրավորվեց Ավետիսը:

— Տնաշեն, յես քեզ գովում եմ, դու նեղանում ես... Գու հենց գիդաս թե մենակ Միդին ու Չատին, մեկ ել են թուրքի սահմանի երկու դարավուխ են բռնված... Գեղում ինչքան կասկածավոր մարդ կա, հրեն ցուցակ արած, բռնատելու յեն. ցուցակումը դու յել կաս:

— Հաստանա:

— Հաստատ: Թե տղա յես զլխիդ ճարը տես, վեր կաց կորի. թե չե տուն դնաս, գլուխդ տեսան թե չե՝ կռները կապտաելու, գոմն են գցելու,— ահաբեկեց Կուսարը:

— Հավ, ի՞նչ եմ արել վոր...

— Են ես արել, վոր դարավուխների հետ չես յեկել:

Հիմի վոր դան ես Չաղացումը քեզ բռնեն, առելու յեն, թե դու ամեն բանից տեղյակ ես, ինքդ բալշենիկ ես ու... վայ քու մեղքը:

— Ո՞վ կհավատա, վոր սա բալշենիկ ա,— միջամտեց Անտոնը:

— Հալա մի կբռնեն, կնստացնեն, նրանից յետով յեկ ու հաստատի, թե բալշենիկ չես:

— Ե՛յ, ո՞վ կա Չաղացում... դրսից լավեց մի ուժեղ ձայն:

«Իմ սրտին աղ ես արել  
Չիգյարս դաղ ես արել  
Ինձանից հեռացիլ ես—  
Ինձ բեղամա... աղ ես արել»...

Կուսարն սկսեց յերգել ու պարել. Ավետիսը յենթադրելով, թե իր յեանից են յեկել, պահվեց Չաղացի մութ անկյունում, իսկ Անտոնն առաջ կանգնեց, վոր իմանա յեկողի ով լինելը:

— Հարսանիք ե, ի՞նչ ե ետեղ,— գլուխը ներս կուխեց յեկողը:

«Հարսանիք ա, առանց փեսա ու հարսի,  
Թե փիս մարդ ես—աստո՞ժ քու բանը թարսի»:

— Ասաց Կուսարը և շարունակեց պարը:

— Անտոն բիձա, քեզ վուսղ կանչում են գեղումը, արի,— ասաց յեկվորը:

— Յես ել ասեմ յեկողը մարդ ա, դու մի ապիլ գլբր Ղանդոն ա,— ասաց Կուսարը և դադարեցրեց պարն ու յերգը:

— Ղանդոյին հավան չե՛ս, շաշ Կուսար:

— Վոնց չեմ հավան... Հավասես—գողանում ես, ձու ասես—գողանում ես, սրա-նրա տուն ես մտնում արաղ լամում, տաշտիցը քու ձեռքովը հաց վեր ունում, ստի տուպրակ ես, ինչքան կեղտոտ գործ ըլի, դու վկա յես,

փողի համար գերեզմանիցը հորդ կհանես, կծախես, խար-  
ջից ազատ, կոռից ազատ, լվլվում ես գեղումը, վորբևերի  
կնանոց աչքով ես անում, մեռելատանը—քելեխի գլխին  
ես նստած, կնունքին—սուփրի մեջ տեղը, հարսանիքին—  
դռան տակին. գգիր ես—գեղի տեր ես, համ ճղճղան, համ  
աներես. հարուստն ուխտի թքի, կուլ-կտաս նրա թուփը,  
քյասիբի վրա դու կթքես, թքակոլոլ կանես, հարա տվո-  
ղի յետնն ես կաղնում, քացի տվողի առաջին. լավ մարդ  
ես, աստո՞՞ գլխիցդ վերևը սաղ պահի...

— Լավ, լավ, լավ... Ի՞նչ ես շորու քացու նման վրա  
տալի, կսց մի տեսնաք ինչ աասում ե... անկյունից դուրս  
եկավ ու միջամտեց Ավետիսը:

— Ե՛... Ավետիս դայի, ես վաղի իրավունքը ձեռիս  
պտի ըլեր, յես սրա կաշին մաշկել եյի, դու տեսել իր, թե  
վճնց ես անպատիվ անում, համա ինչ անեմ. կթակեմ,  
կասեն Ղանդոն մարդ չի գտել, գնացել ա ջաղացումը  
Կուպրին թակել:

— Շաշի խոսքին գլուխ մի դնի. ասա տեսնամ ինչ  
խարար ա, Անտոնին ո՞վ ա ուզում— հարցրեց Ավետիսը:

- Կոմիտեն:
- Ի՞նչ ա ուզում:
- Գիտեմ վոչ, կասկած կա ջաղացի վրա:
- Հը՛մմ... արեց Ավետիսը:
- Հը՛մմ... կրկնեց Կուպրը—Ավետիսի պես:
- Բա ջաղացս անտեր թողնե՞մ,—տարակուսած հար-  
ցրեց Անտոնը:
- Տարով հո չես գնալու, եսա յետ կգաս,—ասաց  
Ղանդոն:

— Ուզում ես, յես կմնամ քու տեղակ, գնա ու յեկ,—  
առաջարկեց Ավետիսը:

— Չե՛, թող Սուրմոնը մի մարդ նշանակի, հետո գըլ-  
խիս մի խաթա կգա,—կտրուկ հայտարարեց Անտոնը:

— Սուրմոնը համաձայն ա,—ասեց գղիբը:  
— Չեմ հավատում, թող ինքը գա, կամ թուղթ գրի,  
խառը ժամանակ ա, մի բան կպատահի, ինձ վոտով-գլխով  
կկորցնեն:

— Ախպեր, թեկուզ լավ թամաշա կըլի համա ձեզ  
ըլի եդ թամաշեն, դուք գնացեք, յես կմնամ,—առաջար-  
կեց Կուպրը:

Դուրսը ձիու վոտի դրոփյուն լավեց: Յերեք ձիավոր  
կանգնեցին ջաղացի դռանը: Դրանք դաշնակյան խմբի  
սողաներից եյին, սպառազինված ու զայրույթից կարմրա-  
տակած աչքերով:

- Ե՛ ջաղացպան:
- Ամենքը դուրս յեկան:
- Ի՞նչ մարդ եք, ի՞նչ եք շինում ես ջաղացում:
- Բացատրեցին:
- Առաջ անցեք:
- Ո՛ւր:
- Կիմանաք շուտ, վոչ մի խոսք այլևս:
- Կարասս չկոտրեք,—ասաց Կուպրը և սկսեց պարել  
ու յերգել:

Ա՛յ իմ կարաս, գինու կարաս,  
քոմագ արա, թե վոր կարաս...

- Սա ինչ մարդ ե,—հարցրեց ձիավորներից մեկը:
- Սա մեր գեղի շաշն ա,—պատասխանեց գղիբը:  
Կարասիս մեջ գինին լիքը,  
շարբաթ ըլի—ասես ինքը...
- Ե՛յ, շաշ, վճրտեղ ե գինիդ,—հետաքրքրությամբ  
ու ժպտալով հարցրեց նույն ձիավորը:

Յեկեք գնանք, շանց տամ տեղը,  
շատ ազնիվ ա, գինու ցեղը  
թե մեռելն ել տեսնի համը,  
կկոտրի աստու ու առամը...



բանց բանը վոնց ա, պինդ են կաղնած, թե չե: Եսոր-ե-  
զուց կսկսվի կռիվը, տեղը պինդ կաց...

Կուսարը դուրս թռավ շաղացից, գգիբի ու Ավետիսի  
յետևից գիլ կանչեց ու վագեց:

## XI

Մուլին ընկավ. թիփի բորանն սկսվեց: Ինչ շունչ ա-  
րարած վոր կար սրթսրթալով քաշվեց իր խուցը: Անտո-  
նը կատարել եր կուսարի պատվերը: Կրակը թեժ եր, կըր-  
կենիները պատրաստ: Մեզ հայտնի ձիավորները յեկան:  
Անտոնը ձիերը կապտեց շաղացի ներսը, Սուլամոնի խոտի  
դեզից մի քանի խոտի բերեց գցեց առաջները: Ձիավոր-  
ները բուխարու առաջ կիսաշրջան կազմելով նստոտեցին:

— Իրձն ուտելու բան չունես:

— Ունեմ ձեզ մատաղ, կրկենի ունեմ, համա ել ու-  
րիչ բանի տեղակ չտաք:

— Միս չի՞ ձարվիլ ես մոտերքը:

— Չե՛:

— Իսկ գինի՞... Չես կարող եսորվա կարասից մի քիչ  
գինի հանես, խմենք, տաքանանք, վոր հերթով պահակ  
կանգնենք մեծ ճամբին:

Անտոնը չի իմանում ինչ պատասխանի. վայ թե Սու-  
լամոնն իմանա, իրեն սաղ-սաղ կարասի մեջը կկոխի,  
կհորի.

— Հը՛... ի՞նչ մտածմունքների ծովն ընկար, չես  
կարող:

— Չեմ իմանում, ինչ ասեմ. ձեր արևը վկա, Սուլո-  
մոնը վոր իմանա, ինձ գինի կշինի, կխմի...

— Հա՛-ա՛, ետքան զոգբա յա քու Սուլամոն խագեյինը.  
մենք գանք ազգի համար գոհվենք, նա իրան տանը խումփաց-  
նի, գինին ել չխմենք... ի՞նչ աման ունես, վոր գինին  
լցնենք բերենք, մենք ինքներս կգնանք. դու աման տուր:

Ունեցածս ես ունկը կոտրած կուլեն ա, մեկել ես  
պուշը շարգված պուստ փարչը:

Ձիավորներից մեկը ծանր ու թեթև արավ ամաննե-  
րը, ջուրը թափեց ու դարձավ ընկերներին.

— Վնչինչ, մի վեգրո կտանեն յերկսով, ճրագ կամ  
մոմ ունես:

— Ունեմ, մի ճրագ ունեմ:

— Դե, Մուշեղ, դու գնա մեծ ճամբի վրա պահակ  
կանգնի, իսկ մենք յերկսով գնանք գինի բերենք. եսպես  
մի կես ժամ անց, կգաս. ցրտում հո չենք փետանալու:

Մուշեղը սարգ ու կարգ արավ, գենքերը, հավաքեց,  
իսկ մյուս յերկուսը ճրագը վառեցին, փարչն ու կուլեն  
վերցրին, վոր գնան գինի բերելու:

— Կարասի տեղը հո լ՞ավ ես հիշում:

— Հա՛:

— Դե՛, գնանք:

— Հեյ-հեյ... գալիս եմ, յես եմ, սև կուսարի պես եմ.  
միս եմ բերում տավարի, խորովենք, ուտենք տնավարի,  
գինին խմենք պճպճան, յերգեր ասենք կշկշան...

Կուսարն եր, վորը հեռվից վագելով գալիս եր մի կովի  
ազգը շալակած:

Մուշեղը, վոր հրացանը ձեռին շաղացի դռան մոտ  
կանգնած եր և պատրաստվում եր գնալու, հրացանն ուղ-  
ղեց դեպի կուսարը:

— Կանգնիր, թե չե կկրակեմ:

— Կկրակեմ... կկրակեմ... յես տեղովս կրակ եմ. յես  
հո բալշենիկ չեմ, վոր ուզում ես ինձ սպանես. ձեզ հա-  
հո բալշենիկ չեմ, վոր ուզում ես ինձ սպանես. ձատինի կովը մորթեցին, հրեն, կովի  
մար միս եմ բերում: Չատինի կովը մորթեցին, հրեն, կովի  
վոտը բերել եմ, վոր ուտեք: Յես կուսարն եմ, կուսարը,  
եսորվա ձեր տեսած շաղը:

Կուսարին ներս թողին:

— Հա՛, ես լավ յեղավ, գինին սա հենց ինքն ել կբերի:

— Կբերի, բան, կբերի, վոր մենք խմենք, Սուրմոնի սիրտն երի:

Ծիծաղեցին:

— Տո Կանաս, ես ցրտին վննց յեկար:

— Վոնց յեկար... խելոք մարդը հո ես զիամաթին տանիցը դուրս չի գալ, ենա միտը շաշին տվին, սա յել բերեց, ելի...

— Ի՞նչ արին բռնվածներին:

— Գոմն են արել, սոված-ծարավ պահում են: Դրուստ ա, նրանք բալշենիկ չեն համա հրես, են բռնված տղերանց մեկի — Չատինի կովը բալշենիկ եր դառել, բռնեցին, մորթեցին:

Նորից ծիծաղեցին:

— Մուշեղ, դու գնա. հենց վոր խորովածը պատրաստ լինի քեզ իմաց կտանք:

— Յես ել գնամ լինին բերեմ, ասաց Կուպրը:

— Հա, դու յել լավ վրա հասար, գնա գինի բեր:

Դաշույնները փայտատակեցին. կտրատում էին Չատինի «բայլշենիկացած» կովի միտը:

— Ե՛սպես պիտի կտրատել ա՛յ, բոլոր բայլշենիկները մարմինը:

— Ա՛խ, թե մի մեկն ու մեկը ճանկա կնկնի...

— Բիձա, ճիպոտներ գտի շամփուրների համար, Անտոնը պատատակերն ընկավ ճիպոտ գտնելու:

— Մենք նրանց ցույց կտանք, թե ովքեր ենք մենք:

— Ենպես շարդենք, վոր Ռուսաստանի ճամբեն մըտնեցը գցած ուր փախչելը չիմանան:

Ներս մտավ Կուպրը փարչն ու կուլեն գինով լիքը ձեռին բռնած:

Սա գինի չի, յերգ ու պար ա,  
ծարավ մարդու հոգու ճար ա,  
թե վոր հաջն ել խմի մի պուտ,  
կասի—«յն եմ արծիվի ճուտ»:

Խորովածի շամփուրները շարվեցին կրակի շեղջի վրա: Չատինի կովի միտը պատրաստվում եր մանելու խմբի տղերանց վորկորները. Չհանդամը թե Չատինի յերեխաների թաց ու ցամաք կարվեց, միակ կովը դուրս քաշեցին մորթեցին: Ի՞նչ մեծ բան է սի կով, յերբ մարդիկ իրենց «կյանքն են զոհում ազգի փրկության համար»... Անտոնի ջաղացում: Մտի խջճնջոցն ընկել եր ջաղացը, ախորժակ եր գրգռում: Սարգ ու կարգ արին, վոր սեղան նստեն եր գրգռում: Մարգ ու կարգ արին, վոր սեղան նստեն Կուպրին ուղարկեցին Մուշեղի յեակից:

Կրկենիններն իջան իրենց տեղերից: Մուշեղն ու Կուպրն էլ յեկան: Թեյի կտորած բաժակը ձեռքից-ձեռք եր անցելու. գինին ծծում էին, շրթունքները ծլփացնում, լինում. համով եր, բավական դուրեկան և ուժեղ: Սկզբում լուռ էին. ուտում էին խորովածը և գինին գլխին ածում, վոր լավ մարսեն, բայց մի քանի բաժակ կոնծելուց հետո գլուխները տաքացավ և սկսեցին ճառել:

— Ես մի բաժակը խմենք Դաշնակցության կենացը. են Դաշնակցության. վոր յերկու բռնակալ տապալեց — Մուլթան Համիրդին և Նիկոլայ ցարին...

— Կամաց խոսա, կիմանան, ամոթ ա, սարսաղ-սարսաղ բաներ ես դուրս տալի,— ընդհատեց Մուշեղը:

— Յես գիտեմ, վոր դու ազգի դավաճան ես, Մուշեղ, գիտեմ, վոր դու կիսաբայլշենիկ ես, բայց ի՞նչ անեմ, հայ ես, կտամ կսպանեմ, Դաշնակցության ձեռից չեմ ազատվի...

— Խմի, խմի, գինիդ խմի. սպանես, չե մի վոտներ, հավի ճնւտ եմ, ի՞նչ ե...

Գինու բաժակը մի անգամ ել ավարտեց իր պտույտը. Կուպրը վազեց, վոր ելի բերի:

— Բայց և այնպես մենք չենք հասկանում քո միտքը. ի՞նչ ես ուզում. Դաշնակցությանը չես հավանում, վոր Հայաստանն ազատեց, անկախ պետություն ստեղծեց, այժմ ել պաշտպանում է արտաքին թշնամիներից, կովում է ա-

մեն բան ավերող ու քանդող բայլընկններէ, յերկրի ներսը մաքրում ե ստար տարրերից, մեր յերկիրն այժմ ճանաչված ե այնպիսի մի հզոր պետութեան կողմից, վորպիսին Անգլիան ե. վաղը մյուս որը կ՛ջնջենք բայլընկններին ե մեզ համար ազատ կապրենք. ել ի՛նչ ես ուզում, ի՛նչը չես հավանում, ուզում ես, վոր բայլընկնները գան մեր ազատութեանը խլեն, դարձյալ Ռուսաստանի լծի տակ մնանք, մեր կանայք ու աղջիկներն ուսաների հետ ամուսնանան, ազգը կործանվի...

— Յես դեմ եմ բայլընկններին, բայց առանց Ռուսաստանի չենք կարող ապրել, հասկանում ես, մեր յերկիրը կապված ե նրան թե՛ տնտեսապես, թե՛ կուլտուրապես,—ասաց Մուշեղը:

— Լավ, ասենք, թե հենց քո ասածն ե, իսկ յեթե այդ յերկրում հիմի տեր ու տիրականը բայլընկններն ես, ի՛նչ անենք, չկովենք, թողնենք վոր մեր նոր բացված ծաղիկը տրորեն, մեր սիրելի հայրենիքը գան սրի՞ քաշեն...

— Ինչո՞ւ յեն սրի քաշում, Ադրբեյջանը սրի՞ քաշեցին:

— Նրանք թուրքի բարեկամ են. թե նրանք լավ մարդ են, ինչո՞ւ թողին, վոր շուն տաճիկը գա Ղարսը գրավի, մանի Ալեքսանդրապոլ, անցնի Ղարաբախ, թող պաշտպանեյին, ելի՞...

— Իսկ ինչո՞ւ ձեր Անգլիան չպաշտպանեց ե Տաճկաստանի դեմ դուրս չեկավ կովի, վոր հայերիս ազատի...

— Վորովհետև... նրա համար վոր... Անգլիան հեռու յեր, չեր կարող ժամանակին ոգնութեան հասնի:

— Խորովածիդ թիփեն կեր, խորովածիդ թիփեն, չսառչի. բթամիտ աշակերտի պես վարժապետիդ տված դանն ել չես կարողանում մարդավարի կրկնես,—հեզնեց Մուշեղը:—Հեռու յեր բա՛ս, հեռու յեր, հեռուն քու միաքն ե, վոր եդ հարցերին չես կարողանում մոտենա...

— Յերկիրնքը վկա, վոր վաղը քեզ կոմիտեյի ձեռքն եմ տալու բլբլիկդ տակիցը կտրի:

Գինին յեկավ կուլեն լեքը,  
լավ պահեցեք վերի դերքը.  
բայլընկէ կովը կերեք,  
բայլընկին եսպես երեք:

Կուսրը պարելով ու յերգելով գինին բերեց: Վեճն ընդհատվեց: Գինին շուտով կատարեց իր բարերար գործը: Վիճողներն ամեն մի մանր-մուշի հաշիվ՝ մոռացած՝ համբուրվեցին: «Տղերքը» գլուխներն որորելով՝ շարվեցին բուխարու շուրջը, քուն մտան:

— Անտոն բիճա, յես թռչում եմ,—ասաց Կուսրը. դուռը պինդ կփակես, վոր մարդ չգուրս գա մինչև լուսաբաց: Եզուց իրիկուն յեթե բան ա, պատահի, վոր յես չգամ, դու սրանց ելի ետրվա պես մի լավ կհարբացնես, վոր չկարենան տեղներիցը ժած գան: Պինդ խմացրու:

— Բա վա՛յ թե սրանց տեղ ուրիշ մարդ գա, նրանց հետ վոնց վարվեմ,—տարակուսած հարցրեց Անտոնը:

— Սրանք ես գլխու համր վոր առել են, մինև կարասի տակը չլիգեն, գնացող չեն, իսկ թե բան ա, պատահի, վոր ուրիշին դարկեն, յես կերևամ:

Կուսրը մի վոստյունով դուրս ցատկեց ու լուծվեց խավարի մեջ: Անտոնը դուռը պինդ փակեց, ընթրիքից մնացած բաները հավաքեց, կրակն անթեղեց ու ինքն ել գլուխը գրեց կոճղին:

Ձիերի փուռոցն ու «տղաների» խոմփոցն ընկել եր ջաղացը. թվում եր, թե՛ խավարի մեջ ինչ-վոր մեկին մորթում են կամ խեղդում: Չաղացի խոնավ ու ծանր ուղթ ճնշում եր Անտոնի գլուխը, վորի բութ ցավից աչքը չեր փակվում: Նա մտածում եր Կուսրի մասին, պահած փամփուշտների մասին: Նրա աչքի առաջ Չատին եր կանգնում, հուսահատ, ձեռները խաչած, կարծես ասելիս լիներ.

«Անտոն բիձա, ես ի՞նչ ոչին եկավ գլուխս, կուխ մորթեցին, տունս քանդվեց»...

Ահա և Միգրին. նա լուռ է, գլուխը կախ, չի խոսում. փոշմանել է, թե՛ ավելի յե կատաղած... վա՛յ թե մատնեն, կուպրին ու իրեն բռնել տան, գաղանխքը բացվի... Եղ հո ամեն ինչ կորավ...

— Ե՛յ, ջաղացպա՛ն...

Անտոնին թվում է, թե ինքը մի խոր հորի մեջ է՝ կարծես հեռվից մեկը կանչելիս լինի, իսկ ինքը չի կարողանում ձայն հանի: Աչքերը չի կարողանում բաց անի, կարծես կոպերն իրարից կարած լինեն:

Դուռն ամուր բաղխում են, քարեր են խփում:

— Ջաղացպա՛ն... կրկնում է ձայնը ավելի ուժգին:

Անտոնը մեծ ճիգ է թափում, վոր աչքերը բանա, փորձում է ճշար, չի կարողանում. շա՛տ է նեղվում, ուզում է շուռ գալ, կանգնել, չէ, բան չի գուրս գալի, կարծես կապոտած լինեն վոտ ու ձեռք:

— Հե...ե...եյ... շունչը կտրելով, ձայնը կոկորդում խեղդված խոխուացնում է Անտոնը և հաղիվ ուշքի գալիս:

— Բաց արա դուռը:

Ո՛վ էս, — քրտինքի մեջ կորած հաղիվ արատասանում է Անտոնը: Նրան թվում է, թե ջաղացը գլխին պտույտ է գալիս:

— Բաց արա դուռը, կիմանաս ով-վոր եմ:

— Ասա ով էս, բաց անեմ, ես կես գիշերին յես դուռը բաց անող չեմ:

Դուռը մի քանի հոգի ծիծաղում են:

— Ի՞նչ կես գիշեր, սո պառավ գոմեշ, արևը քաշալի գլուխ ա երում:

Անտոնը վեր է կենում, առաջ է շարժվում թե դուռը բանա: «Տղերքը» մորթած հավերի պես թափված են իրար կողքի, ձիերը ծուլ-ծուլ ննջում են յետևի վոտները հերթով «կախ անելով» — հանգիստ տալով:

Անտոնը դուռը բաց է անում. յերեք ձիավոր են. մեկն իջել է ձիուց դուռը թակելու համար: Անտոնը վոջ մեկին ել է չի ճանաչում: Սպառազինված են, խոժոռած դեմքերով:

— Ջաղացպանը դ՞ուր յես:

— Հրաման քեզ յես եմ:

— Ջաղացումդ մարդ կա՞:

— Կան:

— Բանի հոգի յես:

— Յերեք:

— Ի՞նչ մարդ են:

— Ղարավուլ:

— Ի՞նչ բանի յեն հիմի:

— Քնած են:

— Եսքան յերկար գիշերը քնել են, չեն կշտացել, վոր ցերեկն ել են քնում...

— Գիշերն չեն քնել:

— Բա ի՞նչ էյին շինում:

— Հերթով զարավուլ են քաշել մեծ ճամբի վրա:

— Բա յեքը են քնել:

— Գիտեմ վոջ. լուսադեմին քնած կլին:

— Ձանել ժամանակդ ել սուտ խոսելիս ես յեղեր,

թե նոր ես սովորել...

— Սուտը շան փեշակ ա, յես սուտ խոսող չեմ:

— Ղարավուլներից բացի, ել ուրիշ մարդ ջաղացումդ յեղել է, թե մենակ զարավուլներն են յեղել:

— Կուպրն ել եր եստեղ:

— Կուպրը՞...

— Հա:

— Նա ինչ եր շինում:

— Միս եր բերել զարավուլների համար:

— Հետո ի՞նչ ելավ կուպրը, նա յել ա քնած:

— Չե՛. նա գնաց:

— Ո՛ւր գնաց:

— Գիտեմ վոչ:

— Մըան չթողեք վոր տեղից շարժվի, — պատվիրեց խոսողն ու ներս մտավ:

Մյուս ձիավորներն իջան ձիերից, Անտոնին առան իրենց մեջ, կանգնեցին դռան շեմքում:

Ներս մտնողը մոտեցավ քնածներին, վոտով հրեց, վոր վեր կենան, և մինչդեռ նրանք ճրրալով տրորում ե- յին գինուց ու քնից ուռած աչքները, նա հոտոտեց փարչն ու կուլեն:

— Աֆֆերիմ աղերք, լավ եք քեֆ արել, — ասաց նա ու դեմքը խոժոռեց:

— Եղ դու յե՛ս, Վահան, ի՛նչ կա, քեֆ, չե մի աստը- ծու կրակ, սաղ գիշեր ջաններս դուրս եկավ ցրտումը...

— Դրուստ ա, ջաղացպանն ել ասեց:

— Ինչ ասեց:

— Ինչ վոր արել եք, են ասեց, ի՛նչ պիտի ասեր: Չեք ամաչում, ձեզ պահապան են նշանակել, դուք ամ- բողջ գիշեր գինով ու խորովածով առաքվելիս եք յեղել:

— Հն, ի՛նչ ե, աշխարհ հո չի՞ կործանվել, մի-մի բաժակ գինի յենք խմել, ելի...

— Գինին վորտեղից եր:

— Ե՛... շատ յերկարացրիք բանը. գինին վորտեղից եր, հացը վորտեղից եր, միան ով տվեց, ջուրն ով բերեց, չի լինի՞ մի հարցնես, թե մեզ ով ծնեց ու ինչու ծնեց...

— Վեր կացեք գնանք, քննությունը հետո կկատա- րենք, — ասաց Վահանը և առաջ անցավ դեպի դուռը:

— Գնանք, գնանք, թող քո ասածը լինի:

Փեշները թափ տալով ձիերը դուրս քաշեցին «աղեր- քը», հեծան:

— Չաղացիդ դուռը փակիր ու առաջ անցիր, — պատ- վիրեց Վահանը - Անտոնին:

— Բա ջաղացս անտեր կմնա...

— Շատ մի խոսիր:

Անտոնը ջաղացի դուռը փակեց ու դուրսը կախ ձիա- վորները առաջն ընկավ: «Տեսնես ո՞ւր են տանելու», — մը- տածում եր Անտոնը: «Յարաք կուպրը տեսնես վոր- տեղ ա»...

Գնում էյին դեպի գյուղ:

Ամբողջ ճանապարհին ձիավորները վոչինչ չխոսեցին: Միայն մի անգամ Վահանն ասաց մյուսներին.

— Բուշեիկների ազենաը ձեզ հարբեցնում ե, վոր շնթուք, ճանապարհն անտեր թողեք, վոր գենք տեղափո- խեն կամ թուռցիկներ տարածեն, դուք ել միամիտների պես ջաղացում վե՛ս թափված լակում եք:

— Ո՞վ ե ետ ազենաը, ի՛նչ ես յերեխա-յերեխա խո- սում:

— Ազենաը — ձեզ համար միս ու գինի բերողն ե, վոր իրեն հիմարի տեղ դրած, ձեզ եշացրել ե:

— Կուպրը՞... հն, հն, հն...

— Չեններդ կտրեցեք:

Գնում ե Անտոնը, մտքում հազար ու մի ծրագիր քաշելով, թե ինչ պատասխան ե տալու հարց ու փորձի ժամանակ, ստեր ե հորինում, չեղած պատմություններ Ժամանակ, ստեր ե հորինում, չեղած պատմություններ ծրագրում, իրեն-իրեն հերոսանում ե, հայհոյում գոյու- ծրագրում, իրեն-իրեն հերոսանում ե, հայհոյում գոյու- ծրագրում, իրեն-իրեն համարձակ նայում ե մահվան աչքերին բերու, իսկ ինքը համարձակ նայում ե ընկճվում ե և գոչում «կեցցե բալշենիկը», բայց մեկ ել ընկճվում ե մտածում, վոր ինքը վողջ գյուղի առաջ ծաղրուծանակի ատարկա յե դառնալու, մեծ ու փոքր թքելու յեն նրա առարկա յե դառնալու, մեծ ու փոքր թքելու յեն նրա առարկա յե դառնալու, մեծ ու փոքր թքելու յեն նրա առարկա յե դառնալու, մեծ ու փոքր թքելու յեն նրա առարկա յե դառնալու, մեծ ու փոքր թքելու յեն նրա առարկա յե դառնալու... Չլինի՞ ես ամենը յերազ եր, Կուպրի հետ ընկերացել...

սուտ, հնարովի բան: Ամենն ել սուտ, հեքյաթի հերոսի նման յերազում յերևացել ու անհետացել է... Բայց չէ՞ վոր յեկավ, ինքն իր աչքով տեսավ, ձենն ել իր հոր ձենինման եր, հապա Արսենը, հապա փամփուշտ բերող տղաները...

Գյուղ մտան: Անտոնին առահներն արած տանում են դեպի Սոլոմոնի տունը: Ա՛խ, այդ տունը... ինչո՞ւ քարուքանդ չի լինում, վոր Անտոնն ել տեսնի, քանի-քանի վիշտ ու տառապանք է պատճառել նա ինչպես Անտոնին, նմանապես և ուրիշներին: Սոլոմոնը ձեռները մեջքին կանթած կանգնած է պատշգամբում... Են ո՞ւմ հետ է խոսում ու փառ-փառ ծիծաղում... Ավետիսն է:

— Բարով, հազար բարի յես յեկել, այ իմ պլսի տեր, իմ թագավոր, արի՛ յերեսս վոտիտ տակ գնեմ, — վերևից ծաղրանքով ասում է Սոլոմոնը:

Անտոնը լուռ կանգնած է ներքևում, գլուխը կախ, ընկճված, բայց կուրծքը զայրույթով լի: Վահանը հրամայում է Մուշեղին ու մյուս յերկու «տղերանցը» զինաթափ անել: Նրանց զենքերն առնում են ձեռներից և քշում դեպի տան ներքի հարկը, նկուղը:

— Բարձրացիր շտաբը, — հրամայում է Անտոնին նույն Վահանը:

Անտոնը վոտները հագիվ-հազ քարշ տալով վեր է բարձրանում: Պատշգամբի ծայրին նրան դիմավորում է Սոլոմոնը:

— Վախեսս վոչ, քանի յես սաղ եմ, քու մազին չեն դիպչիլ, մենակ թե ամեն բան դրուստ խոսաս: Տես, սուտ բան չասես, միևնույն ա, մենք ամեն բան գիգանք, լավն են ա ինքդ ամեն բան դուզ ասես, կաշիզ թափես մաշկելուց:

Անտոնը վոչինչ չի պատասխանում. նա լուռ ներս է մտնում սենյակը:

Պատերն ամբողջովին գորգով պատած մի սիրուն ու լուսավոր սենյակ է. առաստաղից կախված է մի լամպ յերկու յերկաթե մահճակալ արբեշումն անկողիններով ու ձյունի պես սպիտակ բարձերով դրված են սլատերի տակ: Պատերին զանազան նկարներ կան կախած: Սենյակի մեջ տեղը մի սեղան, վրան թղթեր, թղթեր, վոմանք փոված, վոմանք իրար վրա դասավորած, գրիչներ ու թանաքավոմանք իրար վրա դասավորած են յերեք հոգի, վորոնցից ման: Սեղանի շուրջ նստած են յերեք հոգի, վորոնցից մեկը, մեջ տեղի նստածը յերկար ու թավ բեխերով մի մարդ է, մազերը չալած, իսկ մյուս յերկուսը ջահել են: Տան անկյուններում իրար վրա թափված հրացաններ կան, Տան անկյուններում իրար վրա թափված հրացաններ կան, մոտները կախված փամփուշտակալներ, գետնին ճիշտ նույնպիսի, ցինկից շինած արկղներ, վորոնց նման նա առաջին անգամ տեսավ ջաղացում, և կուսրը պահեց Սոլոմոնի խոտի դեղի տակ: Չլինի՞ թե հենց նրանք են. զրլոմոնի խոտի դեղի տակ: Չլինի՞ թե հենց նրանք են... տել են, բունվել են և տղաները... Ամեն ինչ կորած է... Չլինի՞, թե Սոլոմոնը ճշմարիտ է ասում, վոր ամեն բան զիտեն. այժմ ինքն ինչ է ասելու պատմի ամեն մի յեղեթուն իր մանրամասնություններով, թե չե... Չեղեթուն իր մանրամասնություններով, թե չե... Չե Անտոնը վոչինչ չգիտե, վոչ վոքի չի տեսել, — հաստատ վճռում է իր մեջ... Դռան մոտ կանգնած է մի գինվոր, կարծես դժողքի պահապան լինի, կարծես սպասելիս լինի հրամանի, վոր իսկույն հրացանազարկ անի Անտոնին: Լուռ են ամենքը, վոչ վոք չի խոսում: Այս խորհրդավոր լուռ թյունն ավելի յե ճնշում Անտոնին: Նա կանգնած է իր իսկ սեփական տան տեղը. հիշում է իր վողբերգական յեր կնոջը, յերեխաներին, անցյալը, հիշում է իր տունը, իր կնոջը, յերեխաներին, սիրտը փղձկում է, քիչ է քնում լա, հեկեկա: Իր քաշած լավ որերի, յերջանիկ տարիների պատկերները գալիս, անցնում են նրա յերեկապատկերի տառաջով, բերկրանքով ու վշտով լցնում նրա տանջված սիրտը, իսկ սենյակում սիրող սև ու մուսյլ որի լուռթյունն ել ավելի յե ծանրանում նրա տառապանքներով լի հոգու վրա:

Անտոնի ներսն ինչ-վոր բան է գալարվում, ինչ-վոր բան է ճոնչում... Դա—նրա վշտի շղթան է, վորի ամեն ողակը շարժվելիս, Անտոնին թվում է, թե աղիքներն են գալարվում և ուր վոր է գուրս կթափվեն, շունչը կկտրի և Սուրմոնից դեռ իր վրեժը չլուծած կմեռնի... Սուրմոնը կարորի նրա անշնչացած մարմինը, կապահանի նրա դիակը և կտոր-կտոր անելով շների առաջը կզցի: Ախրը ինչո՞ւ են գիշերը, յերբ Արմենն առաջին անգամ յեկավ ջաղաց, նա չկարողացավ համոզել իր թոռանը, վոր միասին գան, շանսատակ անեն Սուրմոնին...

Լուսթյունն ընդհատեց Վահանը, վոր ներս մտնելով դիք ցցվեց և զեկուցեց հեռակար.

— Յերբ տեղ հասանք, ջաղացի դուռն ամուր փակած եր. հազիվ զարթեցրինք այս ծերունուն, վորը գուռը բաց արավ ու հայտնեց, վոր տղերքը քնած են ջաղացում և վոր իբր թե նրանք ամբողջ գիշեր հերթով պահակ կանգնած, հսկելիս են յեղել մեծ ճանապարհը: Յերբ ներս մտա ջաղաց, տղերքը քնած էյին այնպես, վոր կարծես թե մեկը նրանց ականջները հալած արճիճ եր լցրել, վոր վոչ մի ձայն չլսեն: Առաջները թափված խորովածից մնացած վոսկորները և գինու դատարկ փարջն ու կուլեն վրկայում էյին, վոր նրանք գիշերը մինչև լուսարաց քեֆ են արել, հարբել ու գլուխները կորցրած քուն մտել:

— Այդպես, այդպես... մուրաց խմբապետը և թավ բեխերը վորորեց:

— Ջաղացում բացի այս չորսից, վորոնց կալանավորել ու բերել ենք, յեղել է նաև մեզ հայտնի Կուսարը:

— Իսկ այդ Կուսարը բռնված չէ,—հարցրեց խմբապետը:

— Վնչ: Նա իր գործը կատարելուց հետո, անհետացել է, վորի ուր լինելը վոչ վոք չգիտե. մի քանի հոգու ուղարկել եմ գանազան կողմեր, վոր գտնեն:

— Լավ, գնա, առ այժմ ազատ ես:

— Լսում եմ,—ասաց Վահանը և պատիվ տալով՝ դուրս գնաց սենյակից:

— Արձանագրեցեք ամեն մի բան, ինչ վոր կլսեք,—ասաց խմբապետը, ապա տեղից յեղնելով՝ մտացավ Անտոնին:

Սեղանի մոտ նստած յերիասարգները թուղթ ու մատիտ պատրաստելով՝ աչքները հռոած Անտոնին սպասում էյին, վոր արձանագրեն նրա ասածները:

— Անտուդ ի՞նչ է,—հարցրեց խմբապետը:

— Անտուն:

— Անտուն...

— Հրաման քեզ, անտուն:

— Մարդավարի խոսա, անտուն անուն չկա հայոց անունների ցուցակում:

— Դե, առաջ, քանի վոր ես տան տեղն իմ տունն ունեյի, անունս ել ուրիշ եր, հիմի վոր վոչ տուն ունեմ, վոչ տեղ, անտուն չեմ բա ի՞նչ եմ:

— Ուրեմն առաջ ես տան տեղը քոնն է յեղել, հետո խլել են քեզանից, հիմի յեղ դու բալշխիկ ես դառել, վոր տանդ տեղն ել յետ խլես, ես տունն ել հեար...

— Չե, աղա, յես ի՞նչ եմ վոր մարդու ձեռից, են ել Սուրմոնի պես գորբա մարդու ձեռից տուն խլեմ. յես մի խեղճ ու կրակ ջաղացական եմ, աշխարհիցս բխաբար, եսոր կամ, եզուց չկամ, մի վոտս գերեզմանումը մարդ եմ, ի՞նչ իմ գործն ա, վոր աշխարհիս խեր ու շառին խառնվեմ:

— Լավ... շատ խելոք ես խոսում. հիմի ասա տեսնեմ թե տղերքը վոնց քեֆ արին ես գիշեր, պատմի, մի վախենա:

— Վախենալու ինչ կա, վոր վախենամ, ենքան ցավ ու կրակ ա անցել գլխովս, վոր վախլանց եմ ելել, ինձ

հո ուտելու չեք: Հն. տղեքը, դե, սոված ու մրսած տղեք  
ին, ե՛լի. դուք միս եյիք դարկել կուպրի ձեռովը, նրանք  
ել խորովեցին կերան, հու սո՛ված չեյին մնալու:

— Իսկ գի՛նին վորտեղից եր:

— Գի՛նին ել Սուրմոնի կարասիցն եր:

Իսկ ո՞վ եր իրավունք տվել, վոր Սուրմոնի կարասը  
բաց անեք:

— Իրավունք... իրավունքը սոված ու ծարավ փորն  
եր տվել, ո՞վ պետք ա տար:

Խմբապետը զարմացած Անտոնի տված պատասխան-  
ներից, յես նայեց տղաների կողմը, վորոնք նույնպես  
զարմանքով դիտում եյին Անտոնին ու խմբապետին, կար-  
ծես հասկացնել տալու համար վերջինիս վոր պինդ բռնի  
գործը քանի վոր խելքը գլխին մարդու հետ գործ ունի:

— Նստի՛ր ասաց խմբապետը— պառավ մարդ ես  
հոգնած կլինես, նստի՛ր, ենպես խոսենք:

— Շնորհակալ եմ, դու նստի, քեզ ա լայեղ ես տե-  
սակ ոթակը, յես կարալ չեմ նստեմ, վրիցս վո՛ջիլ վեր  
կընկնի, գիշերը ձեզ նեղութի՛ն կտա, փափուկ ապրելու  
սովոր մարդ ես յերևում:

— Քանի տարեկան ես:

— Միտս չի, դավթարս կորել ա, հոգեառն ել ա ինձ  
մտահան արել, թե գա հոգիս առնի բալքի պրծնեմ ես  
աշխարհի յերեսին մարդկանց նեղութի՛ն տալուց:

— Ո՞վ ունես ես գյուղում, բարեկամ, ազգական...  
— Ոչով չունեմ, աղա, քյասիբ մարդուն բարեկամ-  
ազգական կունենամ... Բարեկամն ու ազգականը բողազի  
հետ են կապված. թե ուտելու բան ունես տանդ, կգան,  
կուտեն, կխմեն, բարեկամութի՛նդ ել պինդ կըլի, թե վոր  
չունես, ինձ նման կըլես, ամենքի աչքիցն ընկած, մոռաց-  
ված, ես աշխարհում կաս, թե չկաս, մին ա: Դե. յես վոր  
տուն ել չունեմ, բարեկամ-ազգական վորտեղից ունենամ...

— Հսպա ասում են մի բալչևիկ թու ունես, վոր  
մեր դեմ կովում ե:

— Շատ բան են ասում, կարամ մի հազար փութ  
բամբակ դառնամ ասողների բերանը փակեմ... Քու մա-  
սին ել են շատ բան ասում, թե փիս մարդ ես, քյասիբի  
արին խմող, հետդ խոսել չի ըլիլ. հավատամ... հրեա մար-  
դավարի հետս զրից ես անում:

— Ուրեմն սո՛ւտ ե, դու թո՛ղը չունես:

— Ինձ համար սուտ ա, թե դու հավատում ես, քեզ  
համար ել գորթ ա, հալբաթ:

— Լսի՛ր ծերուկ, յես չեմ կամենում քեզ տանջեմ,  
կամ խիստ միջոցների դիմեմ, վոր ասես ճշմարտությու-  
նը, յեկ, թո՛ղ խոսակցությանդ այդ ձևը, պատմի՛ր այն ա-  
մենը, ինչ կատարվել ե վերջին ժամանակներս քո ջրա-  
ղացում:

— Դե, ինչ գիդամ, են ել ասում եմ, ել ինչպես  
պատմեմ, վոր հավատաս, կամ ի՛նչ ասեմ, վոր քու ու-  
ղածն ըլի:

— Քու ջրաղացում ի՛նչ են խոսացել ձեր գյուղացի  
Միդին ու Չատին:

— Շատ բան:

— Նրանք բալչևիկ են:

— Յես ի՛նչ գիդամ, իրանց հարցրու:

— Նրանք մեր կառավարությանը չե՛ն հայհոյել:

— Յես չեմ իմացել:

— Իսկ յեթե վկա լինի, այսինքն՝ մի մարդ լինի, վոր  
հաստատի, թե դու ջրաղացումդ նստած, հենց քո ներ-  
կայությամբ, եդ Միդին ու Չատին զովաբանել են բալ-  
չևիկներին ու մեզ հայհոյել, ի՛նչ կասես:

— Ի՛նչ պետք ա ասեմ, թող գա, տեսամ ետ ով ա,  
վոր ստեր ա մոգոնում:

— Բալչևիկների թուլցիկը վոր բռնվել եր, առաջին



Անտոնը կրկին կանգնեց խմբապետի առաջ:

— Խի՞ չես դուզն ասում, ա՛յ Անտոն, չես իմանո՞ւմ, վոր անեղ դատաստանի առաջ ես կանգնած,—ասավ Սոլոմոնը:

Անտոնը վոչինչ չպատասխանեց:

— Ինչո՞ւ չես խոսում,—հարցրեց խմբապետը:

— Յես մարդու հետ կխոսամ,—գուսպ գայրույթով պատասխանեց Անտոնը:

— Տո՛ շո՛ւն, յես մարդ չե՞մ, շո՛ւն է՞մ, դե՛, արի ու ես տեսակ շներին լավություն արա,—գայրացած ասաց Սոլոմոնը և քիչ մնաց հարձակվի Անտոնի վրա:

— Սպասիր, սպասիր Սոլոմոն, դուք ինչպես յերեւում ե հին հաշիվներ ունեք միմիանց հետ, այստեղ այդ հաշիվները մաքրելու տեղը չի: Լսիր, Չաղացալան, քեզ կարող ենք բանտարկենք, յեթե չասես, թե ինչ են խոսել Միդին ու Չատին, ինչեր ե արել Կուպրը, ինչ ժողովներ եք ունեցել Չաղացում, ինչ եք վորոշել, ովքեր են յեղել այն բոլշեիկները, վորոնք յեկել են ձեզ մոտ, մի խոսքով այն ամեն անց ու դարձը, վոր տեղի յե ունեցել այս կարճ ժամանակամիջոցում:

— Չեր խոնարհ ծառան եմ, ինչ ուզում եք արեք, բանտ եք ասում, պատրաստ եմ, բանտը իմ Չաղացից ավելի լավ կլլի իմ հաշվով. յես վոչ մի բան վոչ տեսել եմ, վոչ լսել:

— Ուրեմն հրաժարվո՞ւմ եք:

— Հա՛, աղա Չան, սուտ խոսարուց հրաժարվում եմ, ինչպես հրամայեցիր:

Դուրսն իրարանցում ընկավ:

«Կոպրը, Կոպրը... Կուպրին բռնել, բերձում են»...

Իրոք վոր յերկու գինվոր Կուպրին առաջ արած բերում էին, իսկ նա պարում եր ու յերգում:

Խմբապետն ու Սոլոմոնը դուրս յեկան պատշգամբ:

Կուպրը դան առաջի հրապարակը հասնելով սկսեց իր պարն ու յերգը:

Ինձ թակել են, թակել են,  
Կողքս թրով ծակել են,  
Իրանք գինին լակել են,  
Յեթիմ Կուպրին թակել են:

— Վերև բերեք դբան, - հրամայեց խմբապետը:

Իրար վրա թափված ամբոխի միջից Կուպրին հագիվ վեր հանեցին: Կուպրը նկատելով Անտոնին, բացականչեց.

— Վահ, Անտոն բիձա դու յել եստե՞ղ... դոնախլուղ ա, ինչ ա...

— Մի խոսիր դրա հետ,—հրամայեց խմբապետը:— Ասա՛, վո՞րտեղ բռնեցիք դբան,—դարձավ նա բերող գինվորներին:

— Տրեխները հանում եր, թե գետն անցնի, վրա հասանք ու բռնեցինք:

— Ճի՞շտ ե,—հարցրեց խմբապետը:

— Հրաման քեզ, աղա Չան, դրուտ ա, համա յես ուզում եյի շորերս հանեմ, վոր գետումը լողանամ:

— Ես ցրտի՛ն...

— Ի՞նչ ցուրտ. Կուպրի համար ցուրտն ու տաքը մեկ ա, ուզում ես, ես սհաթիս շորերս հանեմ, վրես մի կուժ սառը շուր աձա, ուզում ես, տկլորվեմ մտնեմ վառվող թոնիրը:

— Շա՛ ճա՛, թե մեզ ես շաշի տեղ դրել,—գայրացավ խմբապետը:

— Շա՛ ճա՛ եմ, շաշի հետ, խելոք եմ, խելոքի հետ, խոզի կշտին—թոչուն եմ, լապտրակի կշտին... բը՛՛՛՛՛՛՛ խմբապետ եմ...

— Չայնդ, լիրբ անամոթ:

— Չայնդ, լիրբ անամոթ,—կրկնեց Կուպրը խմբապետից ավելի ուժեղ գոռալով:

— Դուրս տարեք այս սրիկային:

— Տուն բերիք ինչ խեր տեսաք, թե հիմի դուրս տանեք, ինչ ոգուտ տեսաք... Հի՛, հի՛, հի՛, հի՛,—ձիու պես

սկսեց խրխնջալ Կուպրը և վոտները գետին դոփելը—Հե-  
ռու կաց, քացի կտամ,—ասաց նա մոտեցող զինվորին և  
ինքը գատկեց դուրս ու սկսեց պատշգամբում պարել:

— Դու ինչ կապ ես ունեցել Կուպրի հետ, ասա, թե  
չե... գայրացած վրա պրծավ Անտոնին խմբապետը:

— Ի՞նչ կապ. յես հո շաշ չեմ, վոր շաշի հետ կապ  
ունենամ:

— Բայց նա ինչո՞ւ յեր շուտ-շուտ ջրադաց գալիս  
քեզ մոտ:

— Քեզ եմ հարցնում, ինչի՞ յեր գալի. շաշի առաջ  
գեղի ամեն դուռն ել բաց ա, յես հու ջրադացի գուռը  
նրա առաջ կողպելու չի...:

— Տարեք, յերկսին ել բանտարկեցեք,—հրամայեց  
խմբապետը:

Զինվորն առաջ արավ Անտոնին ու Կուպրի հետ միա-  
սին տարավ գեպի Սոլումոնի գոմը:

Դուրսը հավաքված գյուղացիք աղմուկ բարձրացրին:

— Ես խեղճ քյասիբից ինչ են ուզում:

— Ես շա՞շին ուր են տանում:

— Բալշևիկը սրանք են...:

— Ես ել Միդինի ու Չատինի նաղն ա՞...:

— Յեկեք գնանք, պահանջենք, վոր Անտոնին ազա-  
տեն...:

— Դե վոր Կուպրիցն ել վախում են, ել ի՞նչ կառա-  
վարութիւն ա սա...:

— Անտոնին ազատեցեք, Անտոնին ազատեցեք...:

Խմբապետը թեև դուրս յեկավ պատշգամբ, վոր բա-  
ցատրություններ տա, բայց խալխը չլսեց. նա պահան-  
ջում եր անմիջապես ազատել Անտոնին:

— Զի կարելի,—ասաց խմբապետը և կարգադրեց,  
վոր ուժով ցրեն աղմկարարներին:

— Սոլումոն, յեթե սրանք են բուլշևիկների ոգենտնե-

քը, սխալված ենք. մեկը խելագար ե, իսկ մյուսն աշխար-  
հից անտեղյակ համառ ծերունի,—սենյակ մտնելով ասաց  
խմբապետը:

— Ետ լավ ես ասում, համա յես կարծում եմ, վոր  
Անտոնին պետք ա հուպ տալ:

— Անձնական հաշիվներով ես առաջնորդվում, յես  
այդ բանն անել չեմ կարող, իսկ հասարակությունն ավե-  
լի յե բորբոքվում:

— Են ժամանակ բաց թող: Թո՞ղ ելի գնա ջրադաց,  
մենք ծածուկ հսկող կնշանակենք. իմ կարծիքով եղ ջա-  
ղացում ինչ-վոր բան ա կատարվում:

— Իսկ Կուպրը:

— Կուպրին պետք ա պինդ պահես, նա թուուցիկ եր  
ման ածում:

Գիշերը կոմիտեն նիստ ուներ: Չափազանց տաք վեճ  
եր բացվել բանտարկյալների շուրջը: Զաղացում հարբե-  
ցող տղաներից յերկսին վորոշեցին ուղարկել կենտրոն,  
իսկ Մուշեղին առան հսկողության տակ, վորովհետև նա  
ավելի կասկածելի յեր հենց սկզբից: Վորոշվեց Չատինին  
ու Միդինին նույնպես հսկողության տակ պահել, իսկ  
յերբ հարցը դարձավ Կուպրի և Անտոնի շուրջը, կես գի-  
շերն անց եր, յերբ մեկ ել են տեսան Կուպրը յերգելով  
ու պարելով գալիս ե դեպի շտաբը:

Սա՞ ինչ հանելուկ ե:

Կուպրը բարձրացավ վերև, մտավ ներս և հայտա-  
բարեց.

— Յես գեղի հոգուն մատաղ. գեղացիք յեկան, ձեր  
դարավուլին բռնեցին, զենքը ձեռից խլեցին, գոմի դուռը  
կոտրեցին, ինձ ու Անտոնին ազատեցին: Ես յես, հրես  
յեկել եմ, Անտոնն ել հրեն գոմում նստած, չի փախում,  
ասում ա. «Ես աշխարհում որենք կա, դիվան կա, ինձ  
գոմն են զցել, թող իրանք ել ազատեն»: Յես շաշ եմ ո-

ըենք-մորենք չեմ ճանաչում, հրես եսա գնում եմ իմ բա-  
նին, դուք գիղաք նա, ինչ կուզեք, արեք:

Ով եր գոմի դուռը կտորողը, ով չեր, ենպես ել չը  
պարզվեց: Գյուղն եր, գնա ու բռնի:

— Մնաք բարով, չասեք թե կուպրը փախավ, — ասաց  
կուպրը և այնպիսի արագութամբ դուրս թռավ սենյա-  
կից ու խավարի մեջ անհայտացավ, վոր յետևից գնդակ  
ել չեր հասնի:

Կրակեցին կուպրի յետևից, գյուղն իրարանցում ըն-  
կավ, վագեցին թե ճանապարհները փակեն, բայց ել ո՞վ  
կրոներ կուպրին: Վագեցին դեպի գոմը. լուցկի վառեցին  
Խավարի մեջ նստած եր Անտոնը մեն-մենակ:

— Դուրս յեկ, — հրամայեց խմբապետը:

Անտոնը դուրս յեկավ:

— Դուռն ո՞վ կտորեց:

— Գիտեմ վոչ:

— Շատվոր եյին...

— Տեսա վոչ:

— Քեզ չառաջարկեցին, վոր փախչես:

— Ասեցին:

— Ինչո՞ւ չփախար:

— Ո՞ւր փախչեյի. փախչելատեղս իմ շաղացն ա,  
վոր գնայի ելի կրոներէք, կրերէյիք եստեղ ու հաստաս  
կվճոներէք, վոր յես բալշենիկ եմ:

— Բա մի մարդ ել ե չճանաչեցի՞ր:

— Չէ՞:

— Չուռն ու գահրումարը քեզ:

— Շնորհակալ եմ ձեր պատվից:

— Լեզուդ ծածրակովդ կհանես, թե մեկ ել եղպես  
խոսես:

— Շատ ել լավ կանես, սա յել մի լեզու չի, վոր  
գլխիս կրակ ու փորձանք ա դառել:

Անտոնին խիստ հսկողության տակ առած տարան  
շտար:

— Լսիր, ծերուկ, — ասաց խմբապետը. քեզ նորից  
կուղարկենք շրաղացդ. ես անգամ ներում ենք. միայն մի  
պայման կա, ով վոր այտուհետե գա քո շրաղացը, պետք  
ե իսկույն մեզ հայտնես, իմացա՞ր...

— Լավ իմացա, համա... յես վո՞նց շաղացս ամեն  
անգամ անտեր թողամ ու գամ ձեզ իմաց անեմ:

— Գալու կարիք չկա. միտդ կպահես անուռը, հետո  
մեզ կհայտնես:

— Աղա, լավ չի ըլի՞ վոր մի գիր իմացող տաք  
ինձ, գա ինձ հետ շաղացումը նստի ու ցուցակ կազմի՞...  
Համ ինձ կազատեք կասկածից, համ ել ձեր հավատարիմ  
մարդն ինչ վոր տենա, կգրի կպահի:

— Ուրիշ խոսքով քարտուղար ես ուզում, ելի:

— Ասածդ չհասկացա:

— Տո՛ւ, հարամգողա, ո՞վ ա իմացել, վոր շաղացպա-  
նը պիսիր ունենա, — հասկացրեց Սուլամոնը:

— Աղա խմբապետ, յեկեք ինձ ազատեցեք եղ շաղա-  
ցից, պահեցեք ձեր կշտին, ուզում եք շան տեղ ել քարշ  
տվեք, մենակ թե ազատեցեք ինձ եղ խաթից:

— Չի կարելի. դու պետք ե մնաս շաղացում:

— Լավ, թող ձեր հրամանն ըլի:

— Դե, գնա:

— Բա պիսիրը:

— Եղ մեր գործն ե, մենք կկարգադրենք:

Յերբ անտոնը ցած իջավ բակը, նրա առաջը կտրեց

Ավետիսն ու ասաց.

— Անտոն, գնա ու շնորհակալ մնա քու բախտից, գնա  
ու Սուլամոնի համար աղոթք արա, վոր մարդը սաղ գիշեր  
քեզ համար չալիշ եկավ, վոր ազատի:

— Շատ շնորհակալ եմ քեզանից ել, Սուլամոնիցն ել:



նրանց հետ մեկտեղ ուշուց տու, անիծի: Վախիլ մի, ժամանակը մոտացելա, ամիսը չթամամած կոիվները կսկսվեն սրանց հերը կանիծենք: Իրսից մեր ոգնությունը գենքն ա, վոր մարդ ել չգա, մեր գեղերումն ենքան ծածուկ բայլշևիկ կա, վոր հերիք կանի աղալարներին փրթելու համար:

Միկիչն այնպիսի արագությամբ վրա տվեց, վոր Անտոնն իսկի ժամանակ ել չգտավ մի կարգին նայելու խոտողի դեմքին, յերբ ջաղացի դուռը բացվեց ու ներս մտավ խմբապետի շտաբում նստած գրագիրներին մեկը: Միկիչըն անմիջապես խոսքը փոխեց.

— Յես ի՞նչ սսեմ ձեր գեղի նամուսին, դիփ բալշևիկ են դառել, ազգը ծախել, հալբաթ վոր քեզ ել կբռնեն ու կչարչարեն: Ափսոս չի մեր գեղը... մերով-մանուկով դաշնակ են. անջախ հայոց ազգն ազատվել ա, ձեր գեղացիք ուզում են, վոր ելի ուռսի պրիստովը գա կաշիներս մաշկի:

— Բարև ձեզ:

— Բարով հազար բարի,— պատասխանեց Միկիչը:

— Ի՞նչ մարդ ես, ո՞վ ես, ի՞նչ գործ ունես ես ջաղացում...

— Յեկել եմ ես ջաղացումը գինու-արաղի դուքան բաց անեմ, ասում են խմբի տղեքը լավ են խմում:

— Քեզ մարդավարի բան եմ հարցնում:

— Յես ել մարդավարի ջուղաբ եմ տալի, ելի. ջաղացն եկողն ինչի կգա, հրեն, աղուն եմ բերել, աղում եմ, ելի...

— Անունդ ի՞նչ ե, վո՞րտեղացի յես:

— Անունս Միկիչ ա, հորս անունը— Մարտիրոս, ազգիս անունն ել— Մարկոսանց, ինքս ել թունդ դաշնակ եմ, ես վերի գեղիցը:

— Ձեր գյուղում բայլշևիկներ շատ կան:

— Ինչքան քեֆդ ուզի. առաջին բայլշևիկը մեր տեր-

տերն ա, Վանո-բեգը. քյոխվա Միրզեն, աղվեսի մորթուց քուրք հագնող միկիտան Վասիլը... վո՞ր մեկն ասեմ:

— Իսկ դո՞ւ, դո՞ւ:

— Յես հո թալանչի չեմ, վոր բայլշևիկ ըլեմ, ասում են բայլշևիկը թալանչի մարդն ա, մեր գեղի թալանչիքն ել նրանք են, վոր ասեցի, հենց թալան են անում, վոր մեզ ել թալանելու բան կմնա, վոր յես, կամ ինձ նման մարդն ել թալան անի...— Անտոն բիձա ջուրը կարի, աղունը վեր եկավ, քարը քարին ուտում ա...

Անտոնը դուրս եկավ ջուրը կարելու, իսկ Միկիչն սկսեց ալյուրը խուրջինն ածել:

— Հրամանքդ ո՞վ ես,— հարցրեց Միկիչը գրագրին:

— Յես շտաբի գրագիրներին եմ:

— Հա՛... լավ մարդ ես, ուտում ել ունես, ազգի գործիչ ես, աստված քեզ նմաններն անպակաս անի ազգի գլխից, բա չեք կարում եղ բայլշևիկներին ուղ անեք, պրծնեք...

— Մենք ել հենց դրանով ենք զբաղված:

— Հա՛... լավ եք անում, դե՛ դուք պետք ա մեզ պես խեղճ մարդուն պահեք, թե՛ չե՛... ազգը հո ձեռից գնաց...

— Իսկի քեզ պես գիտակից մարդ կա, վոր հասկանա, ժողովրդի մեջ վատ ու անհասկացող մարդիկ կան, վոր մեր դեմ են խոսում, խալխի միտքը պղտորում, բայլշևիկություն քարոզում:

— Հա՛... ետ մինը լավ չի, վոչինչ, արտի միջին ալա ել կըլի, կառը փուշ ել կոծոծ ել, պետք ա ելի դուք մաքրեք:— Անտոն բիձա լեկա՞ր, առ, բաժինդ վեր կալ, ինքդ ել բայլշևիկից հեռու ման արի, տեսում ես, քեզ ել են չարչարում:

— Ե՛... Միկիչ ջան, տո յես գիդամ բայլշևիկն ինչ ա՞... Հրես ես պատվական մարդը լավ-լավ, ազգի ոգուտ բաներ ա խոսում, հիմի յես ինչ գիդամ սա բայլշևիկ ա, թե ուրիշ գադ:

— Բա խելքդ եղբանն ել չի կտրում, տենում չես մարդը հենց դաշնակ ա, վոր ոխար գետի ջրով լվանաս, ելի են դաշնակը կմնամ...— դե, մնաք բարով. հա, բա հիմի ախպեր ջան, եսա գնում եմ, մեր գեղն ի՞նչ խաբար տանեմ:

— Ասա, վոր շուտով ամեն ինչ կխաղաղվի, բայլընիկները կյանքը մի շաբաթվա կյանք ե:

— Համ... խեր խաբարում կենաս, ետպես ել կասեմ. «մի շաբաթվա կյանք»:

— Խեր ըլի գալդ,—ասաց Անտոնը:

— Վոչինչ, ետպես, շրջում եմ, վոր ծանոթանամ ձեր գյուղի հանդերի հետ:

— Հա, լավ ես անում, ասում են կռիվներ են ըլելու լավ դիրքի տեղեր շոկեցեք. վոր եղ Աղբբեջանի թուրքերն ու բալընիկը գան վոչ մեզ կոտորեն:

— Ե՛, բիճա, շատ դժվար ե մեր գործը, շատ... Մի կողմից մենք պետք ե կովենք և կովում ենք մեր յերկրի ներսը բուն դրած թշնամիների գեմ, մյուս կողմից—բայլընիկները: Ներսի թշնամիները—թուրքերի գործը հեշտ ե, նրանց արդեն մաքրում են մեր տղերքը, վորպեսզի Հայաստանը դառնա միայն հայերի յերկիր, իսկ բայլընիկների հետ հաշիվ մաքրելը դժվար ե. նրանք նախ շատ են և ուժեղ, մեջտեղն Ռուսաստան կա, իսկ յերկրորդ՝ մեր յերկրի ներսում կան շատ դավաճան հայեր, վորոնք նույնպես բայլընիկների կողմնակից են: Դե, մի փոքրիկ, նոր ստեղծված աղքատ ու գողթականներով լի յերկիր, վորպիսին մերն ե, կարող ե արդյոք իր ուժերը ցրել միքանի ճակատի վրա:

— Ախրը, բալա ջան, մի յես չիմացա, թե եզ բալընիկ ասածդ ի՞նչ ա ուզում մեզանից, վոր եղբան կատաղած են նրանց դեմ, ենքան են կատաղած, վոր ինձ ել են բալընիկի տեղ դնում. ի՞նչ կըլի մի հասկացես:

— Ի՞նչ ասեմ, բիճա, բալընիկը վոր կա, Ռուսաստ-

տանը քանդող, ավերողն ա: Ինչպես վոր մի մեծ կրակ, մի հրդեհ վեր կենա ու լափի ամեն ինչ, մոխիր դարձնի, ջանդի, ավերի, ժողովրդի ունեցած-չունեցածը թալանի, տանի, եզ ա: Մեր յերկիրը մի աղքատ յերկիր ե, ինչպես ասացի, բայց ելի մի կերպ կարողանում ե Ամերիկայի ոգնությամբ, ենտեղից բերած հացով ապրի. հիմի նրանք ուզում են գան, եզ յեղած-չեղածն ել տանեն, մեր վիզը բոլորովին կտրեն:

— Հիմի քու ասելով բալընիկը մեր յերկրի, մեր հայերի դուշմանն ա, ելի...

— Ել ասեցիր ու պրծար...

— Բա վոնց պտի անենք, վոր ազատվենք:

— Մենք ել հենց դրա մասին ենք եսքան գլուխ կոտրում, ելի. սաղ ազգը վորտի յենք հանելու, վոր կովի միևնույն ե, կոտորածն անխուսափելի յե. թուրքի հետ միացած գալու յեն ու բոլորին սրի քաշեն:

— Պա, պա, պա, պա... եզ ի՞նչ գուլում ա... լավ, բա յես ինչ բան ունեմ դրանց հետ, վոր ինձ ել են չարչարում. յես իմ որումը ճանձ ել չեմ սպանել, ինձ վրա ել են կասկած տանում, չի լի՛ մի ասես, թե ինձ վրա շատ մոգոնողն ետ ով ա...

— Ի՞նչ իմանամ:

— Ե՛լի, որենքի մարդ ես, կիմանաս: Իմ կարճ խելքն ենպես ա կտրում, վոր Չատինին ու Միդինին բռնել տվողը մեր գեղացի Ավետիսն ա, համա խելքս չի կտրում թե նա ինձ վստահություն անի, շառի մեջ գցի, ի՞նչ կասես...

— Չգիտեմ:

— Բա հիմի դուք վոնց եք ուզում բալընիկի դեմ կռիվ անեք, պառավ մարդ եմ, ետոր-եգուց կմեռնեմ, մի իմանամ, վոր են աշխարհը գնալիս մի խաբար ել ա տանեմ: — Չես տեսնում վոնց... հրես դիրք ենք բռնել, վոր յեթե հարձակվեն մեզ վրա, ջարդենք:

— Շատվոր եք, շատվոր, ե՛ն ասա, թե չե, վայ թե նրանք հաղթեն ու ժողովուրդը ձեռից գնա:

— Ենքան ել շատ չենք, բայց կղիմանանք. խոստացել են ել զորք ուղարկեն:

— Ելի, մեր ես գեղրանքի ղովին կլի՞ մի հարիլ հազար թվանք բռնող:

— Վճրատելից. շատ-շատ մի յերեք հազար հոգի լինի բայլընկնները հո միայն ես կողմով չեն գալի, նրանք ուրիշ գավառների վրա յեւ են հարձակվում:

— Ասենք յերեք հազարն ել քիչ չի, թե լավ պաշար ունենաք, յես ինչ գիդամ, պատրոն, թոփ, թվանք...

— Ե՛... բիձա, մեր ցամփե ել հենց այդ ե, զենքի ու զինամթերքի պաշար քիչ ունենաք:

— Ելի, ես ասենք, թե կռիվն սկսվեց ու գիշեր-ցերեկ տրաք-հա տրաք, կրակ եք տալի, քանի ամիս հերիք կանի:

— Ի՞նչ ամիս, այ բիձա, մի չորս-հինգ որ, վոր հերիք անի մեծ բան ե:

— Ետ լավ չի, լավ չի, շատ լավ չի. կռիվը հենց բռնացրեք, վոր նրանց համ ջարդեք, համ ել զենք խլեք: Հայի աստոծը մեծ ա, մեզ քումազ կանի. հենց վոր կռիվն սկսվի, թող տերտերն են որ ու գիշեր աղոթք անեն, — հեզնեց Անտոնը:

— Ե՛, բիձա, մեծացել ես, բան չգիտես, ես կռվում վոչ մի աղոթք ոգուտ չի անի:

— Խի՛ յես ասում, ա՛յ վորդի, լուսավորչի կրոնը մեծ ա, հաստատ, չարը կխափանի, բարին կառաջնորդի... գնամ, բալա ջան, գնամ միքիչ փետ բերեմ, կրակ անեմ, ցուրտ ա, գիշերս ինձ ղոնազ կաց, հազիլ մենակ եմ, զրից կանենք աշխարհիս խեր ու շառից:

— Չե՛, բիձա, յես գնալու յեմ. մութը վրա յե հասնում.

— Դու գիդաս, վորդի, համա շատ խնդրում եմ, բալա ջան, բարեխոս ըլես քու մեծավորի առաջ, վոր ել ինձ անտեղի տանջեն վոչ. թողան ես ջաղացումը վեր ընկնեմ, իմ ցավին կենամ, հայոց ազգի համար աղոթք անեմ:

— Լավ, կասեմ, բիձա, քեզ ձեռ չեն տալ:

— Հա՛, վորդի, շատ ապրես, թե վոր սաղ մնամ, լավութենիդ տակիցը հալբաթ մի որ դուրս կգամ:

Անտոնը քալերն ուղղեց դեպի դիմացի շուտը փայտ ու խոփվ ժողովելու, իսկ յերիտասարդ-լրտեսը ճանապարհ-վեց դեպի գյուղ:

\*\*\*

Խավարը խառը յերագներ եր ծնել ու պաշարել Անտոնի ուղեղը: Նուռնը կռիվ եր Անտոնին, վորը գլուխը դրած բուխարու մոտի քարին մրափում եր, յերը հրացանների ճարձատյունն ու ձիերի սմբակների դրոփյունը զարթեցրին նրան: Անտոնը վեր թռավ, ջաղացի դուռը ծերպ աբավ և նայեց դուրս: Նրան թված, թե ինչ վոր ծառ ու քար կա, վոտք ե առել, շարժվում ե, վագում դեպի ցած, դեպի ներքևի սահմանադուխը: Ինչպես վարարած գետը դեպի ներքևի սահմանադուխը: Ինչպես վարարած գետը քար ու փայտ իրար գլխով տալով աղմկում ե, այնպես ել դիմացի ճանապարհով քշում ելին ձիավորները մթուեթյան մեջ իրար հրելով, գոռալով ու հրացան արձակելով:

«Մերդ չմեռնի Միկիչ» տես ինչ ոյին ա սարքել ե... մտածեց ինքն-իրեն Անտոնը, ապա դուռը կրկին փակեց ու սպասեց, թե ինչ լուր կբերեն իրեն: Ջաղացի դուռը բաղխեցին: Անտոնը վեր թռավ, մտեցավ:

— Ո՞վ ես:

— Բաց արա:

Անտոնը ձայնից ճանաչեց Սոլոմոնին: Ջաղացի դուռը բաց արավ ու խավարի մեջ միքանի ձիավոր նկատեց, վորոնցից մեկը խմբապետն եր:

— Եսոր ջաղացը մարդ չի յեկէլ,—հարցրեց խմբապետը:

— Յեկել ա:

— Ո՞վ:

— Մինը ձեր տղերանցից եր, են վոր ձեր կշտին նըստած գիր եր գրում, մին ել ես վերի գեղից մի տղա, Միկիչ սնուկով, աղուն եր բերել, վոր աղա:

— Ուրիշ վոչ-վո՞ք:

— Վոչ ով: Ի՞նչ կա, աղա, խալխն եսպես դուրս թափված, վորը ձիով, վորը վոտով գնացին:

— Ներքեի պահապաններին կոտորել են,—առանձին վոչ մի բան, զգուշ կաց քեզ ել չգան ու չմորթեն ջրաղացի միջին:

— Զաղացդ մարդ չթողնես մտնի,—պատվիրեց Սուրմոնը:

Չիավորները հեռացան, իսկ Անտոնը քմծիծաղ ավեց: «Կոտորել, չե, չե, վոտներ են արել, մի սուտ թվանքի տրաքոցից հալա վոնց են դողում ե՞... Մենակ ձեզ դոչաղ գիտաք»... Ինքն իրեն փնթփնթաց Անտոնը: «Հալա մի եզուց գիշեր տեսեք գլխներիդ ինչ թագա տրաքոց ա գալու»...

Լուսաբացին գյուղ էյին վերադառնում գյուղացիները, քնկոտ, ջարդված, ջղային ու գազազած.

— Ես սրտով են կռիվ դուս գալի բայլենիկի դեմը՞...

— Սաղ խալխին տրեոգի մեջ են գցել, քնահարամ արել, թե ինչ ա մի բուղալա գյաղա, ով գիդա, լապտորակի վրա կրակ ա ավել...

— Լապտորակ գող չի կա, իսկի թվանք ել չի տրաքել, իրանք իրանց վախից գոռգոռացել են, միթամ թե շատ լավ դիրքապահ են, մեր գեղացոնց ել հավան չեն, անպատճառ դարավուլը խուժբի տղա պետք ա ըլի...

— Տեսար վոնց եր լեզու առած դակլաղ անում են մինը՞... ասում ա. «վալլա, տաջիկ եր»...

— Տաջիկ-մաջիկ չի կա, իրան ձեռի թվանքն եր տրաքել...

— Դորթ տենան...

— Հաստատ բան եմ ասում քեզ:

— Արա, մի ինձ ասա տենամ, թե դրանք բա վոնց են կռիվ արել, Սասունն ու Զեյթունն իրար խառնել ե...

— «Մի հայը տասը տաճկի դեմ կկռվի առյուծի պես»,—ասել են դաշնակ խմբապետները, տղերանցը սարսաղացրել, գցել են սար ու ձոր, վերջն ել...

— Վերջն ել ինչ-վոր հայ կար վերջացրին Սասունումն ել, Զեյթունումն ել, ու յես ինչ գիդամ...

— Սաղ Տաճկա-հայաստան ասա ու պրծի, ելի...

— Հա, հա, հա, հա... լավ են սկսել, յես ու իմ հոր հոգին, Տաճկաստանից մաքրել են հայերին, հիմի յել եստեղից են մաքրազարդելու...

— Եստեղ ել հո տաճիկ չկա:

— Տաճիկ չկա, համա բայլենիկ կա:

— Խի բայլենիկը—տաճիկ ա...

— Բա չիմացար, վոր ասեց. «վալլա, տաճիկ եր»...

— Ետպես ա, ով դաշնակ չի, դաշնակին հակառակ ա տաճիկ ա:

— Հիմի ասենք, թե յես հակառակ եմ, ուրեմն քու ասելով—տաճիկ եմ...

— Տաճիկ ես, բան, պերվի սորաի տաճիկ:

— Դու մի ինձ են ասա, թե ես խառն որերը, ես դավադարներն ու կռիվները, ես տաճիկն ու հայը, ես վրացին ու քուրդը, ես յերբ ա վերջանալու, յերբ...

— Կոմիտեն ասում ա, եսա մեր Հայաստանի մեջ ապրող թուրքերին վերջ ենք տալի, պրծնենք, ես մին, բայլենիկներին ել կոտորելու յենք, ես երկու, Հայաստանն ել մեծացնելու ենք, ես իրեք, գնալու յենք հասնենք մինչև Ամերիկա, ես ել չորս, սաղ աշխարհի տերն ենք դառնալու, ես ել հինգը...





ծակելով իրեն են կաշոււմ... Լեզուն կապ է ընկել, բայց միտքը չի դադարում գործելուց. նա շարունակ մի բան է կրկնում. «վայ կռիվ մոգոնոյ, շուն դառնաս դու, շուն, շան որ քաշես դու»... «Համա չե»,—միտքը փոխում է Անտոնը,—«թող գան, գան ես շներին քշեն բալքի ջաններս դինջանա, արդար կռիվն ել լավ ա, ով վոր գալիս ա խեղճ մարդուն Սոլոմոնների պես գելերից ազատի, թող գա, թող կոտորի, բա մենք խի՞ յենք գելին, արջին ու աղվեսին կոտորում, վոր մեր ապրանքն ազատվի, հիմի մենք ել եզ ապրանքի պես մի բան ենք, թող գան մեզ ազատեն»...

Կռիվը քանի գնում, սաստկանում է, առաջին սարսափն անցել է, Անտոնը սովորել է թնդանոթի, ձայնին, ել չի վախենում: Գուրսը մեծ աղմուկով ու հրացան արծակելով՝ ձիավորներ են գնում ոգնության: Անտոնը դուրս է գալիս ջաղացից, վոր թամաշա անի: «Հեյ գեղի ջահելութին... դուշ դառնայի թոչեյի մերոնց մոտ, տենաս հիմի Արմենս, Արսենը, Կուպրը վորդի յեն»...

Լուսաղեմին կռիվն ավելի սաստկացավ. թնդանոթներն ավելի ուժգին են վորոտում. բայց յերկու կողմն ել համառ են, վոչ վոր չի կամենում զիջել իր դիրքերը: Լուսացավ, ձյունը կտրեց, արևը թույլ ճառագայթներով շոյում է նորեկ ձյունը. հալք է. թփերի վրա թառած ձյունի քուլաներն արտասովում են. կռիվը դադարել է. հաս ու կենտ ձիավորներ են յերևում, վորոնք գնում են դեպի գյուղ, յերևի լուր հաղորդելու: Անտոնը կանչում է, վոր մոտենան, մի բան ասեն. լսող չկա, շտապում են: Բայց անա յերևաց մի սայլ, վորի վրա յափունջով ծածկած վիճավորներ կան: Սայլը կանգ է առնում ջաղացի դիմաց. մեկը վազում է Անտոնի մոտ. Միկիչն է:

— Մի ածխակոթ տու կրակ անենք յարալունները քիչ տաքանան,—ասում է Միկիչը:

— Բանի հողի յեն:

— Չորս:

— Սպանված մարդ կա:

— Յերկու հողի:

— Ո՞վ են:

— Մինը ձեր գեղացի յա, հինգ երեխի տեր մի տղա:

— Ենդուր են ասել, թե «գելն ընկավ վոչխարի սյուրույի մեջ, վայ մեկի տիրոջը»...

— Ես գիշեր քեզ մոտ մարդ կգա, պատրաստ կաց:

— Լավ:

— Միկիչը գնաց, կրակը տարավ. դիմացի շեռտումը կրակ արին, սայլը մոտ քաշեցին, վոր վիրավորները քիչ տաքանան: Անտոնը փարչը ձեռին գնաց նրանց մոտ. վիրավորները ծանր են, կարող են մեռնեն: Հայնոյում, անիծում են կռիվը: Սայլը ճանապարհվում է: Անտոնը կրկին վերադառնում է ջաղացը, նա գանազան ծրագրեր է քաշում, ծանր ու թեթև անում գրությունը: Հեռվում նորից սկսվում է կռիվը: Անտոնը լարված ուշադրությամբ հետևում է, վոչինչ չի կարողանում տեսնել: Յերկինքը նորից ամպակալեց, մուխը շուտ վրա հասավ: Անտոնը կրակ է արել ջաղացում և սրտատրոփ սպասում է, թե յերբ է ով է գալու: Նունջը մառախուղի պես պատել է նրա գլուխը, վորը հետզհետե ծանրանում է, քնի զիրկն է ընկնում: Գլուխը կշեռքի նժարի պես բարձր ու ցածր է անում. հրացանների ու թնդանոթների գլղղյունին սովորել է ալանջը, բայց յեթե ընդհատվի այդ վորոտը, նա իսկույն կարթնանա, ճիշտ այնպես, ինչպես քանի ջաղացաքարը պտտվում է ու աղմկում, ջաղացպանը հանգիստ քնած է, բայց հենց վոր կանգ առնի, նա իսկույն կարթնանա:

— Անտոն բիձա, դուրը բաց արա, մեկն շտապ ձայն է տալիս դրսից:

Անտոնը խայթվածի պես վեր է թռչում և առանց

հարց ու փորձի բաց է անում դուռը: Ներս են թափվում մոտ հիսուն-վաթսուն մարդ:

— Հսկերներ, լուռ նստեցեք և ձայն չհանեք:

Խոսողն Արսենն է:

— Անտոն բիձա, յեկ հետա:

Անտոնը լուռ հետևում է նրան: Դուրսն ելի մարդիկ կան նրանք ամենքը Արսենի գլխավորութեամբ գնում են դեպի Սուրմոնի դեզը, հանում են հրացանները, փամփուշտները, ձեռքի ուժերը և կրում շաղաց: Ամենքը զինված են, ուրախ, դեմքերը վառվում են: Արսենը բաժանում է տասնյակների, ամեն տասնյակի հանձնում է մի մարդու: Անտոնը նայում է, թե մարդ ճանաչի, նոր է նկատում Չատինին, Միդինին ու իրենց գյուղացի ելի մի ութ հոգու, մյուսներն ուրիշ գյուղացիներ են: Արսենը բոլորն էլ կասկածելի, անվստահելի մարդիկ են, կոմիտեն զինաթափ է արել և դիրքերը չի ուղարկել:

— Պատրաստ եք:

— Պատրաստ ենք:

— Պետք է շղթա կազմել, այսպես, տասը հոգի այս ճանապարհի մոտ, տասը—մեծ, մնացած տասնյակները, ինչպես կարգադրել եմ ազառաժների ու սարալանջերի մոտ, մի տասնյակ շարունակ կապ կպահպանի բոլորի հետ. վոչ մի հրացան չարձակեք, մինչև իմ կարգադրությունը չստանաք. տեսեք չխառնվեք, իրարանցում չգցեք, կանոնավոր:

— Դիփս ել ոսին դուլուդ արած մարդ ենք, ընկեր Արսեն, վախիլ մի,— ասում է մեկը:

— Այդպես, ապրեք: Յետ նահանջող գործին կառաջարկեք անձնատուր լինել և դենքերը ցած դնել, հակառակ դեպքում կրակեցեք, առանց խնայելու: Աչքաբաց յեղեք, կատակ չէ, շտաբը պետք է գրավենք: Դե, մարդ: Զգուշ: Միդի, քո տասնյակը կապ պահողը կլինի:

— Հավ:

Յրվեցին: Չյուր նորից մաղում է:

— Դե, Անտոն բիձա, յես դիմացի սարի վրա յեմ լինելու, առ ես լուցկու տուփը, հենց վոր իմ հրացանի ձայնը լսես՝ անմիջապես կրակ տու խոտի դեզը և ինքդ փախիր հեռու, շաղացը չմտնես, գնա ուր կուզես, միայն կրակից հեռու կաց: Տես, ժամանակին արա, չուշանաս, քեզանից շատ բան է կախված:

— Հավ, Արսեն ջան, համա Արսենս վորդի յա, սաղ ա...

— Սաղ ա, առողջ, թե գործներս աջող գնա, եզուց առավոտ կտեսնես. դե, մնաս բարով, կուիլ է, վայ թե ել չտեսնվենք:

Անտոնը լացակումած ձեռքը մեկնեց Արսենին, վորն ուժեղ թոթովեց ու դուրս թռավ շաղացից:

Անտոնը լուցկու տուփը ձեռին կանգնած է շաղացի դռանը. կարծես թե նրան տեղն ու տեղը մեխել են, վոր չշարժվի: Ականջները սրել է, աչքերը հառել դիմացի սարի չազաթին: Յե՛րբ է պայթելու Արսենի հրացանը... Բոպեզաներն որվա չափ յերկարում են: Անտոնը սառել է, նրան թվում է, թե ինքը տեղից չի կարող շարժվել, փորձում է չէ, կարողանում է, կարող է մինչև անգամ վազել...

Դիմացի սարին մի լույս յերևաց, կարծես մեկը լուցկի վառեց. «չըր...անխկ» լավեց հրացանի ձայնը: Արսենի հրացանի ձայնն էր: Անտոնն առաջին պահ ցնցվեց, շփոթվեց, լուցկու տուփը ձեռից ցած ընկավ. ամբողջ մարմնով դողում է: Ի՞նչ պատահեց... նրա գլուխը պտտվում է, քիչ է մնում գետին գլորվի, կռացավ, թե լուցկու տուփը բարձրացնի, վոտները դողում են, հիմի կծալվեն և ել չեն բարձրացնի, վոտները դողում են, ինքն իր վրա գոռաց Անշարժվի... «Տո, տղամարդ չե՛ս»,— ինքն իր վրա գոռաց Անավեց դեպի դեզը: Վառեց լուցկին, չորս կողմից կրակ տվեց ու փախավ դեպի դիմացի սարի կատարը:

Դեզը վառվում է: Մխի ծիրանի քուլաները բարձրանում խառնվում են յերկնակամարը փակած մառախուղին: Դեզը բռնկեց. ալավը խանձում է յերկնքի փեշերը, շուրջը մեծ լույս է: Անտոնի սիրտն անհանգիստ արոփում է, նա շունչն իրեն քաշած նայում է մեկ դեզի բոցերին, մեկ հեռվում, դիրքերի մոտ կատաղի վորոտացող թնդանոթների կողմը, վորոնց ձայնը հեռոցհեռե խլացուցիչ է դառնում: Դիրքերում ինչ-վոր աղմուկ բարձրացավ. շփոթություն է տիրում: Գյուղին մոտ սարի գլխից մի ձայն կանչում է.

— Սուրմոնին իմաց արեք— Չաղացն ու Չաղացի կըշտի խոտի դեզն երվում ա՛, երվում ա՛, հե՛յ... երվում ա՛... խոտի դեզն երվում ա՛... Սուրմոնի խոտի դեզն երվում ա՛...

Սրան իբր պատասխան Արսենի սարի վրայից մեկ ուրիշ ձայն, ավելի ուժեղ քան առաջինը, սզգարարում է.

— Եհե՛յ... փախե՛ք... բալշևիկը մեր թիկունքը կտրել ա՛, բալշևիկը մեր թիկունքը կտրել ա՛...

«Ա՛...ա՛...ա՛...ա՛...» արձագանգում է ձայնը մտնելով ձորերն ու խուժերը: Չայնը շարունակում է իր սարսափելի յերկեջները, վորին միանում են այս ու այն կողմից պայթող հրացանների ճարձատյունները: «Մեր սղերքն են,— մտածում է Անտոնը, հալբաթ Արսենը հրաման տվեց»:

Դիրքերում կռիվը սաստկացավ. այնտեղից ել են լսվում ինչ-վոր աղաղակներ— «ա՛...ա՛...ա՛...» Անտոնին թվում է, թե յերկիրը ու յերկինք խառնվել են իրար, սոսկալի տարերք է սկսվել. կարծես իր վորտի տակի սարը շարժվում է, սրորվում... խոտի դեզը կարծես կրակե շարժվող սյուն լինի, վոր պատրաստվում է շրջել ու լափել ամեն ինչ... Սոսկալի խլացուցիչ դղրդյուն. Անտոնի ականջները դժժացին և նա գետին ընկավ. կայծեր են փռվում այս ու այն կողմ, կարծես ինչ-վոր աներևույթ հսկա բուռբուռ կրակի շեղջեր է շաղ տալիս... Մի դղրդյուն ևս...

— Փախե՛ք... փախե՛ք... լսվում են աղաղակներ... Անտոնը նայում է դեզի կողմը, մեկի փոխարեն այժմ միքանի տեղ է կրակ վառվում: Անտոնը չի հասկանում թե վո՞րտեղից են մյուս կրակները...

Սոտի դեզի տակ թողած ուժերն իրենց գործը կատարեցին: Դիրքերում սոսկալի խուճապ սկսվեց. հուսահատված կովորները փախչում են դեպի յետ:

— Զենքերը ցած գրեք, առաջարկում են փախչողներին:

Լքված ու խուճապի մատնվածները չեն առարկում. նրանք իսկույն շարտում են հրացանները, միայն թե իրենց չկոտորեն: Դիրքերը դատարկվել են, այլևս թնդանոթները չեն վորոտում. հեռվից լսվում է զինվորական փողավոր նվագախմբի ձայնը, վոր հեռոցհեռե մոտենում է: Անտոնի ծեր վոսկորները համաչափ շարժվում են, ե: Անտոնի ծեր վոսկորները համաչափ շարժվում են, ուղղակի քայլերգի հնչյունների համեմատ. նա իջնում է ցած, ուզում է միանա յեկվորներին, գտնի իր Արմենին համբուրի նրա ճակատը...

Չաղացում անսովոր իրարանցում կա: Գերիններն լցրել են ներս ու դուսնը պահակ կանգնեցրել. բերում են նորերին: Անտոնն ուրախությունից ինչ հարցնելը չգիտե:

— Կեցցե՛ խորհրդային իշխանությունը:

— Կեցցե՛ Լենինը:

— Կեցցե՛ Կարմիր բանակը:

Իրար յետևից լողունգներ են շարտում ազատագրված սարերին ու ձորերին, յեկողների «ուռուս»-ները թնդում են: Յնծության աղաղակները կպչելով ժայռերին ու խոր ձորերին, յետ են արձագանգում, կարծես իրար նետելով «ուռուս»-ն, վորի «ա» հնչյունը լցրել է ողը բազմաթիվ «ա»-երով— ա՛...ա՛...ա՛...ա՛...

Արևելքում յերկինքը յետ է քաշել ամպե քողը. որը լուսանում է: Կարմիր բանակը միացած տեղական բալշև-

վրկ գյուղացիներին հետ, շարունակում է հետապնդել փախչող թշնամուն, վոր քշի, սրբի, նրա վտար կտրի յերկրից: Զուռնայի ու թմբուկի ձայնն է լսվում Անտոնենց գյուղի կողմից:

— Շտաբը գրավված է... աղաղակում է մեկը հեռավրից:

Գալիս են, միանում, ուրախությունից իրար զրկում, համբուրվում, վոմանք շատ հուզվելուց արտասվում են, կան պարոզներ ել: Այնպես են աղմկում, թռչկոտում, կարծես գառն ու վոչխար կթից հետո իրար խառնած «մեր արած» լինեն:

Ինչպես գերիները. նույնպես և զորքը շարժվում են դեպի «շտաբի գյուղը»: Անտոնն այնքան է շմած, վրբ մոռանում է հարցներ, թե ուր է Արմենը, իր թե ու թիկունքը խալխին ցավից ազատողը: Բայց նա հանկարծ հիշում է Սուրմոնին, գայրույթը խփում է նրա գլխին:

— Սուրմոնը վճռակալ ա, Սուրմոնը, բռնել էք, թե փախել ա...

Պատասխան տվող չկա. Անտոնը հեխե վագում է դեպի գյուղ. նա և ուրախ է և մտահոգ, թե չլինի Սուրմոնն ազատվել է, փախել:

Գյուղն իրար է անցել. գոռում-գոչումը մարդ է խըլացնում: Սուրմոնի տան չորս բոլորը խմբված են գյուղացիներ. մարդիկ, վորոնք իրենց որում գյուղի գործերին չեն խառնվել, սրահնրա տանը «հացփոր» նոքար են յեղել, լեզուներն իրենց քաշած, հիմի կարգադրություններ են անում, հրաման տալիս: Սուրմոնի տան պատըզ-գամբից մեկը ճառ է ասում ժողովրդին: Անտոնն աչքերը սրբում է, վոր ճանաչի. ավելի յե մոտենում. Արմենն է: Անտոնի սիրտը թփրտում է, կարծես ուզում է բերնից դուրս թռչի. նա վագում է, բարձրանում է վերև, Արմենի ճառն ընդհատում է, գրկում, համբուրում, լալիս...

խալիսը շվարած է: Ո՞վ է խոսողը, Անտոնի ինչն է... Շտաբերը զարմացած են, թե ինչու յե Անտոնը յեկել...

— Ա՛ խալիս, սա իմ թոռն ա, իմ թոռն ա, իմ... Անտոնի ձայնը խզվում է, արցունքները խեղդում են նրա կոկորդը...

— Ուռա՛... Թնդում է գյուղը:

Արմենը ճառը վերջացնում է. նա առաջարկում է կուպրին ընտրել հեղկոմի նախագահ: Ամենքը ծափահարում են, թեև կան միքանի «անատամ գեղեր», վորոնք դժգոհ են, փնթփնթում են. «ել ուրիշ մարդ չգտան, շաշին են մեր գլխին կառավարիչ նշանակում»:

Ցնծազին աղաղակներով ու ծափահարություններով կուպրին բարձրացնում են և ձեռքից-ձեռք տալով թրուցընում ողի մեջ: կուպրը խախալի գլուխն ընկած խոշոր հատիկի պես պտտում է ամբոխի գլխավերևը: Անտոնն ուրախությունից ճշում է յերեխայի պես:

— Ընկերներ, գոչում է կուպրը,— կռվը հալա չի վերջացել, շարունակվում ա, ով վոր սիրում ա խորհուրդալին իշխանությունը, թեղ զենքն անի ու գնա մեր առաջնորդի, ընկեր Արմենի յետևից:

— Ուռա՛... գնում ենք, գնա՛նք, գնա՛նք... Արմենը ցած է իջնում, ձի հեծնում. նրան հետևում են գրեթե ամենքը, վորը ձիով, վորը վոտով:

«Սա յե վերջին կռիվը

Ու պայքարը մեր մեծ...»

Յերգում են ոսերեն լեզվով մի խումբ կարմիր բահակայիններ: Զորքը և ժողովուրդը շարժվում է: կանայք ու յերեխաները բարձրացել են կտուրները և ձեռները վեր բարձրացրած բարի ճանապարհի նշան ելին անում:

— Գե, Անտոն բիձա, — ասում է կուպրը, գիմելով շշկված, գլուխն ուրախությունից կոբրած Անտոնին, — ես տունը քեզ փեջքեշ, յեկ, ապրի քու տանը, հալալ ա քեզ

— Չէ, վարժեալն ջան, ես տանը յես ապրողը չեմ, ես տունն ել ձեզ, ջաղացն ել ձեզ, յես ել ձեզ. վոնց վոր ես տունն որես դենը խալխինն ա, թող իմ ջաղացն ել խալխինն ըլի, յես ել նրա նորարը, նրա ջաղացպանը: Յես ելի կգնամ իմ ջաղացը, սարք ու կարգ կանեմ, կը պահեմ, նրանից յեկած ոգուան ել թող խալխի քյասիբին ըլի, նրա սոված փորը կուշտ պահի, տկլոր մարմինը ծածկի. յես գնում եմ ջաղացը:

— Բա ուրիշ ել ի՞նչ խնդիր ունես, ասա կատարենք:

— Վոչինչ, ձեզ ջան սաղութին եմ ուզում, մենակ... մի բան ասեմ...

— Հը՞, ի՞նչ կա, ասա:

— Սոլոմոնը վորդի յա:

— Սոլոմոնը բռնված ա. յերբ վոր իմաց են տալի, թե խոտի դեզն երվում ա, վեր ա կենում, թե գնա, տեսնա ով ա արել, ճամբին բռնում են տղերքը, քիչ ա մնում շանսատակ անեն, բայց ել ձեռ. չեն տալիս, բերել են հըրեն իրան գոմը գցած միքանի ուրիշ իրան պես մարդկանց հետ:

— Եդ լավ ա, — ուրախացած ասում է Անտոնը, — մենակ մի բան խնդրեմ, թե նոր որենքին հակառակ չի...

— Ի՞նչ...

— Դու հո գիդաս, վոր յես իմ որումը ճանճ ել չեմ սպանել, համա շատ սրտով ուզում եմ, վոր եզ անորենի դատաստանն ինձ տաք իմ ձեռովն անեմ, թե կարելի յա...

— Լավ, Անտոն բիճա, դու գնա բանիդ, յես քո ուզածը կհայտնեմ մերոնց, ինչ վոր վճռեն քեզ իմաց կտամ:

— Ծատ եմ խնդրում:

\*\*\*

Անտոնն իջավ դեպի ջաղացը, մոտեցավ խոտի դեզի տեղին, տեսավ թե ինչպես ուղմբերը յերկու խորը փոս

են գցել, զարմացավ, ինքն իրեն փսփսաց — «Ենդուր եր ասում, թե հեռու փախիր կրակիցը հա... հալբաթ գիտեր ելի ես բանի հունարը»: Մտավ ջաղաց: Ջաղացը ցեխոտ եր, կեղտոտ, իրերն իրար խառնված, թափած-թափթփած, Անտոնը սրբեց, կարգի գցեց ամեն ինչ, մոտեցավ մեծ կոտին, ստուգեց, ցորենը հո չէն տարել... Չէ, տեղն է: Յորենը լցրեց ջաղացի տաշտը, ջուրը կապեց, քարն սկըսեց պտտվել: Անտոնը սրբեց արլի տաշտը. «դե՛, քար ջան իմ անբաժան ախպեր ջան, որես դենը լավ ադա, մինչև եսոր մի մարդու համար ես աշխատել, որես դենը մի սաղ դեղ ես պահելու, աշխատանքդ ավելի մեծ ա ու ասաղ դեղ ես պահելու, աշխատանքդ ավելի մեծ ա ու ավելի ոգուտավոր», — ասաց նա ու սկսեց մի յերգ դնդնաջնել. և իրեն համար անսպասելիորեն՝ կուպրի նման վոտանավոր շարահյուսել:

Սև որերը պտտվեցին շարխի պես,  
հազար ցավեր բերին — վարար արխի պես,  
Սոլոմոնը սիրտս ծակեց նետի պես,  
սիրտս սգաց, արին գնաց գետի պես:

Սոլոմոնը գլխիս տվեց գորբի պես,  
չոլերն ընկա անտուն անտեր վորբի պես,  
դուլուղ արի վիզըս կապած ճորտի պես,  
բառաչեցի մերը կորած հորթի պես:

Բալշեիկը յեկավ դարա-դուշի պես,  
աղալարի սրտում ցցվեց փուշի պես,  
խավար որըս կարմիր դառավ վարդի պես,  
հիմի յես ել մարդ եմ թամամ մարդի պես:

Ա՛յ, իմ ջաղաց մենք ազատ ենք հովի պես,  
սով չենք տեսալ հերվա սաստիկ սովի պես,  
մեր արտերը կըլկկան ծովի պես,  
բերք կունենանք կուրծը լեքը կովի պես:

Անտոնը վերջացրեց իր գործը, բայց սիրտը չեր հանդատանում, նա չեր կարողանում առաջվա պես ջաղացում

նստի, ուզում եր գյուղ գնա, նոր-նոր բաներ իմանա, թերևս ինքն ել մի բանի պետք դա, մի գործ կարողանա կատարի, չե՞ վոր այժմ շատ բան կա անելու: Բայց ջազացն ի՞նչպես անտեր թողնի, վա՛յ թե գան թալանեն, չե՞ վոր այժմ ամեն բան գյուղին ե պատկանում, խալ-խին, հաշիվ կպահանջեն... Ձե, ջազացն անտեր չի կարելի թողնել: Գոնե մի մարդ գար, մի շունչ յերևար, վոր լուր բերեր: Արմենը գնաց, ո՞վ գիտե ինչպես են գնում նրա գործերը, հաղթում ե՞, թե գործը տանուլ ե տալու...

Նման մտածմունքներ տանջում եյին Անտոնին, յերբ ջազացի դուռը պառավ կնկա պես ճրրալով բացվեց:

— Բարի իրիկուն Անտոն բիձա:

— Բարու տեր ըլես Միդի ջան, խեր ըլի, ինչ կա ես մի՞նա:

— Գնանք, Կուպրը կանչում ա:

— Բա ջանդացր:

— Փակի:

Անտոնն ու Միդին ճանապարհվեցին: Ամբողջ ճանապարհին գրուցը պատում եր պատերազմի շուրջը: Միդին հետաքրքիր բաներ եր պատմում թե՛ կռիվներից ե թե՛ բայլընկններից: Տեղ հասան: Անտոնը բարձրացավ վերև, Սուրմոնի տան յերկրորդ հարկը, ուր այժմ գյուղի հեղկոմն եր տեղավորված: Կուպրը նստած եր սեղանի մոտ մի յերիտասարգ Կարմիր բանակայինի հետ, վորը գանազան թղթեր եր կարգում ու բացատրում Կուպրին:

— Նստի, Անտոն բիձա, — ասաց Կուպրը:

Անտոնը նստեց ու սկսեց ղիտել Կուպրին ու Կարմիր բանակայինին: Նա ահամայից վերհիշեց այն զիշերը, յերբ Կուպրի տեղ խմբապետն եր նստած ե իրեն հարցփորձ եր անում: Մտքերի թելն ընդհատեց Կուպրը:

— Անտոն բիձա, ես զիշեր Սուրմոնին գնդակահարելու յենք, դրա համար ել քեզ կանչել եմ. դու ինչորեցիր,

վոր նրա դատաստանը քեզ տանք, քու ձեռովն անես, մերոնք համաձայնվեցին: Վոչ վոք չպետք ե իմանա. դու կըլես, մին ել մեր կարմիրներից յերկու հոգի, հետները կգնաս ու թե վոր ուզում ես, ինքդ քու ձեռովը կսպասես: Համաձայն ես:

Անտոնը միանգամից չկարողացավ պատասխանել: Նա կարմրեց, սփրթնեց, մարմինը մի տեսակ դողով բռնվեց:

— Հը... ի՞նչ սուս կացար:

— Գիտեմ վոչ:

— Բա ասում եյիր դատաստանը քեզ տանք:

— Հա՞... ասեցի:

— Դե, գնա ու արա ե՛լի:

— Յանի ասում ես սպանեմ, ե՛լի:

— Հա—բա՛... չե՛, հետը քեֆի յենք դարկում:

— Լա-ավ, կգնամ, — հաղիվ արտասանեց Անտոնը:

Կուպրը դուրս յեկավ կանչեց մի կարմիրի, ինչ-վոր հետը փսփոսաց, ապա ներս մտնելով՝ Անտոնին ասաց.

— Դե, ես աղի հետ կգնաս:

Դուրս յեկան: Սափարի մեջ վոչ վոքի չեր կարելի նկատել: Մոտեցան գոմի դռանը: Կարմիրն ինչ-վոր բան ասաց պահակին, վորից Անտոնը վոչինչ չհասկացավ: Դուրս բերին Սուրմոնին ձեռները մեջքին կապած: Յերկու Կարմիր նրան իրենց մեջն առան, հրացանները կրակելու պատրաստ՝ շարժվեցին, Անտոնն ել նրանց յետևից:

— Ո՛ւր եք տանում, — հարցրեց Սուրմոնը:

— Սոսեյն արգելված ե, գնա առանց ձայն հանելու:

— Բայց յես...

— Չայնդ:

Գնում են լուռ, մինչև անգամ կարծես չեն ել շրնչում: Գյուղը մրափում ե, վոչ մի մարդ չկա դուռար, մեկ մեկ միայն շներն են մարդահաջ տալիս, կամ վոռնում: Անտոնը հաղիվ ե յետևներից հասնում: Գյուղից վաղուց

են դուրս յեկել, բայց դեռ գնում են, դեպի ուր, Անտոնն  
եւ չի կարողանում փորոշել տեղը: Հասան «Մեծ ձորը»,  
ժայռերի միջի արահեպով գնացին մի ավելի մութ տեղ  
ու կանգ առան: Խավարի մեջ յերկու մարդկային կերպա-  
րանք սովերի պես շարժվեցին:

— Մս՛ս՛...

Մեծ ժայռի տակ մի գերեզման է փորված: Սուրմո-  
նին առաջարկեցին նստել գերեզմանի ափին:

— Ախրը ի՞նչ եմ արել... վսյ, ձեզ մատաղ...

— Չայնդ:

Սուրմոնը լռեց:

— Դե՛, բիձա, առ ես ատրճանակը:

Անտոնը վերցրեց ատրճանակը: Չեռքը դողում է:

— Ի՞նչ անեմ...

Սուրմոնը ձայնից ճանաչեց Անտոնին:

— Վսյ, Անտոն ջան, քե մատաղ, յես քու շունն եմ,  
տունս ել քեզ, կարողութունս ել քեզ, յե՛ս կղառնամ քո  
Չաղացպանը, երեխանցս յեթիմ մի թողիլ...

— Դե՛, շուտ, — հրամայեց կարմիրը:

Անտոնը մեկնեց ատրճանակը, բայց ձեռն այնպես  
ամուր դողաց, վոր ատրճանակը ցած ընկավ: Կարմիրն  
անմիջապես բարձրացրեց ատրճանակը, Անտոնին տարավ  
մի կողմ:

— Ի՞նչ ես անում, բիձա, հանա՞ք է թե մասխարու-  
թյուն...

— Չեզ մատաղ ինչ ուզում եք դուք արեք, յես կա-  
րալ չեմ մարդ սպանեմ... յեկեք ես անգամ բախշեցեք  
մեզք ա...

— Դե՛, լավ հեռու կանգնիր:

Անտոնը հեռացավ, նրան թվաց թե վերևի սարն իր  
ամբողջ ծանրութեամբ ճնշում է իրեն և ուր վոր է կը  
ճխլի փոշի կզարձնի:

Յերկու խուլ պայթյուն:

Կարմիրները յեկան: Դե՛ շուտ շտապիր ուր վոր է  
կլուսանա: Անտոնը մեքենայորեն հետևեց նրանց: Յերբ  
գյուղի ծայրին հասան, Անտոնը յետ նայեց ու հարցրեց  
կարմիրներից մեկին:

— Ի՞նչ արիք:

— Ուղարկեցինք իր պապի ծոցը:

— Հիմի Սուրմոնն ել կա վոչ...

Կարմիրները նայեցին իրար, ապա շփոթված ձերու-  
նուն ու քմծիծաղ տվին:

Անտոնը ծռեց ճամբան, վոր բաժանվի:

— Ուր բիձա:

— Գնում եմ Չաղաց:

Բաժանվեցին:

Գնում է Անտոնը գլուխը կախ, մտաբերում է Սուր-  
մոնի անորեն արարքները, գայրանում, բորբոքվում է նրա  
դեմ, բայց չի կարողանում հասկանա, թե ինչու ինքը չք  
կարողացավ «գեղը գելի պես վեր կոխած լափող» են գա-  
զանին սպանի...:

Անտոնը հասավ Չաղաց ու դուռը բանալիս խորը  
շունչ քաշեց ու սասաց:

— Հա՛... հիմի կհավատամ, վոր աշխարհը կխաղաղվի...

Հեռու հորիզոնի վրա կարծես մեկը յետ քաշեց կրա-  
կի անթեղը: Որը բացվում էր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0339415

27437

ԳԻՆԸ՝ 80 ԿՈՊ.

М. ДАРБИНЯН  
**МЕЛЬНИК АНТОН**  
ГИЗ ССРА 1930 г. ЭРИВАНЬ

891.99

17-26